Տ.Տ. Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց

ДОЗ. ЦЕНЗ. ТИФЛИСЪ АВГ. 27 Ф. 1893 г.

ЛИТ. К. МЕСХИЕВА ТИФЛИСЪ

891.99
Բ-35

ԲԱՖՖԻ

ՍՏԱՑՎԱԾ Է 1987 թ.

Ա Ր Ծ Ի Ի
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

(ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ)

3345
Ա 30079

Դէ՛, դու ժիր մշակ, լծէ՛ քո արօր,
Հասաւ դորմելու քեզ փառաւոր օր.
Ժամ է՛ քեզ հիմա արտը մշակել,
Բարերեր սերմանց պտուղ ճաշակել...

ԲԱՖՖԻ

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԻԵԼԵՍՆ ՓՈՂՈՑ, Տ. № 1, 2.
1893

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Іюля 1893 года.

Ա. Զ. Դ.

Ամենապատիւ Խրիմեան Հայրիկի ամենայն Հայոց կաթողիկոս հաստատուելը որպէս ամենքին ուրախացրեց, նոյնպէս եւ մեզ, մանաւանդ որ իմ հանգուցեալ ամուսնուս իղձը կատարուեցաւ:

Հայութեան այդ ամենաարժանաւոր Հովուապետի կեանքի ու գործունէութեան վերաբերեալ՝ ամուսնուս զանազան թուականներում գրուածքները հաւաքելով՝ ամփոփում եմ սոյն հատորի մէջ, ձօնելով Նորին Վեհափառութեան վսեմ անունը:

ՍՅՐԻ ԱՆՆԱ ՐԱՖՖԻ

Մշակ

(ՆՈՒԷՐ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ)

Օ՜ր գարնանային, օ՜ր թարմ և սիրուն,
Զնչում է արփին նոր կեանք, ջերմութիւն.
Բայց դեռ դաշտերը ձմեռուայ քնով
Թմրած, նիրհում են, զարթնել չեն ուզում։

Եւ լի յոյսերով մշակը ժրաջան
Նիհար եզներով վարում է գութան։
Զարթէք խոր քնից, ո՛վ թմրած արտեր,
Մինչ ե՞ր պիտ՝ ննջէք, ամայի դաշտեր։

—Յաջողութի՞ւն քեզ, ո՛վ անբախտ մշակ,
Մշակ՝ անպտուղ, խոպան դաշտերի,
Բարեմաղթում է մշակը մտքերի,
Որ կարեկից է քո դառն վշտերի։

Քո տխրութեան մէջ՝ խնամքով թագցրած,
Քո ճակատագրի մէջ՝ դարերով ծանրացած,
Կարդում է և նա իւր դառն վիճակը,—
Մտքեր սերմանող անբախտ մշակը։

Նա էս քեզ պէս կորթ անապատում
Իւր ամբողջ կեանքը մաշում է, աշխատում.—
Անապատումը յամառ սրտերի
Եւ անպտղաբեր մարդկանց մտքերի։

Եւ նրա ազնիւ ճգանց փոխարէն
Տէր Աստուծոյ պսակ է հիւսում.
Իսկ նա լի յոյսերով իւր սերմն է ցանում
Եւ ապագայում հունձքի է սպասում։

ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԿԵԱՆՔԻՑ

1837 թուին Վանի Այգեստան կոչուած արուարձանի ուռիները շատ անգամ իրանց Հովանու տակ հրապուրում էին մի լղարիկ, բարձրահասակ պատանեակ՝ գունատ դէմքով և կրակոտ աչքերով։ Նա, ամբողջ ժամերով պառկած կանաչ խոտերի վրայ, իւր մտքի սրբազան յափշտակութեան մէջ, զմայլվում էր կամ երեկոյեան վերջալուսով և կամ աչերը ձգած Վանայ մանիշակագոյն կապուտակի վրայ, հիանում էր Հայրենիքի շքեղ տեսարաններով։

Արևը մայր էր մտնում, գիշերը պատում էր, խրճիթների ճրագները վառվում էին։ Պատանին խորին մոռացութեան մէջ տակաւին այնտեղ էր գըտնվում։ Կարծես թէ ուռիների խորհրդական սոսափիւնը, զեփիւռի հեզիկ շշունջը կախարդած լինէին նորան։

Դա Մկրտիչ Խրիմեանն էր, որ այդ նուիրական առանձնութեան մէջ գրում էր իւր երգերը։

Լիմ, Կտուց, Աղթամար և այլ անապատները չը կարողացան իրանց վանդակի մեջ զսպել աշխոյժ պատանին և ոչ նոցա մէջ կենդրոնացած գիտութիւնը—Նարեկի և Այսմաւուրքի ընթերցանութիւնը—կարողացան գրաւել նորա սիրտը։ Նա իւր ուսում-

նասիրութեան ցանկութիւնը լրացնելու համար դիմեց դէպի Կ. Պոլիս, որ այն ժամանակ Վանի Աթէնքն էր համարվում։

Նորա չքաւորութիւնը թոյլ չը տուեց աւարտել որ և իցէ բարձր ուսումնարան, որովհետև նա ստիպուած էր միևնոյն ժամանակ իւր օրական հացի համար մտածել։ Բայց իբրև ինքնուս մարդ, իւր եռանդոտ աշխատասիրութեամբ, Խրիմեանը՝ Կ. Պոլսում մի քանի տարուայ մէջ կարողացաւ այնքան զարգացնել իւր միտքը և գիտութիւնը, որ ընդունուեցաւ որպէս դաստուս մի քանի դպրոցներում և զանազան ամիրաների տներում, որոնց մէջ Նորա խնամակալ համարելու է Այվատեան Յովհաննէս Էֆէնտին։

Իսկ այդ գործունէութիւնը երկար չը կարողացաւ կապել եռանդոտ երիտասարդի սիրտը Կ. Պոլսի հետ։ Նորան վաղուց տանջում էր մի նպատակ, որին մանկութիւնից նուիրած էր իւր անձը։ Դա էր Հայրենասիրութեան զգացմունքը։

Խրիմեանը վերադառնալով Վան, գտաւ իւր Հայրը վախճանած. այդտեղ իւր աւագ եղբայր Մսրխանի Թախանձանօք ամուսնացաւ Մելիկեան օրիորդի հետ, որից ունեցաւ մի աղջիկ։

Սրդէն գերդաստանի Հայր էր նա, երբ իւր երկու ընկերների հետ գնաց ճանապարհորդելու Արարատը, Զիրակայ նահանգը և Գողթան դաւառը. տեսաւ Անին և Հայաստանի նշանաւոր յիշատակարանները։ Այդ ճանապարհորդութեան պտուղն էր նորա «Հրաւիրակ Արարատեան» գեղեցիկ բանաստեղծութիւնը։ Իւր այդ երկասիրութեան մէջ Խրիմեանը թափում է իւր սրտի բոլոր կրակոտ բոցերը, որոնք

վառուել էին նորա մէջ Հայրենասիրական զգացմունքից։ Նա իւր աշակերտների ձեռքից բռնած պտրտեցնում է Հայաստանը, ցոյց է տալիս նորա աւերակները, այցելութիւն է գործում Տրդատայ, Գրիգորի, Մեսրոպի, Խորենացու, Եղիշէի շիրիմներին, և նոցա գերեզմաններից կոչում է այդ անմահների ուրուականները և նորանց պատմել է տալիս Հայաստանի թշուառութիւնը։

«Հրաւիրակ Սրարատեանը» միակ բանաստեղծութիւնն է մեր գրականութեան մէջ, որտեղ այնպէս գրաւիչ և ազդու կերպով երգվում են այն բոլոր ցաւալի զգացմունքները, որոնք գարթնում են մարդու մէջ իւր Հայրենիքի աւերակներին նայելու ժամանակ։

Իւր այդ աշխատասիրութիւնը ի լոյս ընծայելու համար Խրիմեանը կրկին Կ. Պոլիս գնաց, ուր 1850 թուին տպագրեց Այվատեանի ծախսով։ Նոյն միջոցին նա իւր բարերար և Պալեան Կարապետ ամիրայի, օգնութեամբ ճանապարհորդեց Պաղեստինը, տեսաւ Ս. Երուսաղէմը։ Այդ ուղևորութեան արդիւնքն եղաւ նորա «Հրաւիրակ Աւետեաց երկրի» բանաստեղծական գործը, որի մէջ հեղինակը երգում է բիբլիական աշխարհը, Մեսիայի կեանքը և նորա տնօրինութեանց սրբատեղերը։

Այդ գիրքը ներշնչուած է կրօնական սրբազան ոգևորութեան բոլոր սքանչելիքներով։

Այդ աշխատութիւնը տպագրուեցաւ 1851 թուին, երևի, նոյն իսկ Պալեան ամիրայի ծախսով։

Խրիմեանի այդ երկու բանաստեղծութիւնները բաւական էին նորա անունը հռչակելու և նորա գործունէութեանը մի նոր ասպարէզ բաց անելու համար։ Այն ժամանակից Տատեան Յովհաննէս ամիրայի օգնութեամբ Խրիմեանը գնում է Կիլիկիա, Սսոյ

վանքի մէջ ուսումնարան բանալու նպատակով՝ այդ կողմերում լուսաւորութիւն տարածելու համար։ Բայց հանգուցեալ Կիրակոս կաթողիկոսի յաջաբերութիւնները շուտով անտանելի են դառնում նորան. գործը չի յաջողվում, նա վերադառնում է կրկին Կ. Պոլիս, նշանակվում է ուսուցիչ Խաս-Գիւղի օրիորդաց վարժարանին։ Նոյն միջոցին հրատարակում է մի տետրակ պապի աշխարհային փառամոլութեան դէմ։

1852 թուին Խրիմեանը վերադառնում է Վան, նա արդէն ազատուած էր ընտանեկան կապերից, որովհետև իւր կինն ու աղջիկը վախճանուած էին։ Նա ձեռք է զարկում Վանի մէջ օրիորդաց և տղայոց ուսումնարաններ բաց անելու, բայց իրան հակառակորդ է գտնում ոչ միայն տեղային Առաջնորդին, այլ և խաւարասէր աղաներից մի քանիսին

Նոյն միջոցին Խրիմեանի գլխում ծագում է մի միտք վարդապետ ձեռնադրուելու, որպէս զի այդ միջոցով կարողանայ իւր դաղափարները տարածել ամբոխի մէջ։ Իւր այդ դիտաւորութիւնը իրագործեց Խրիմեանը 1854 թուի փետրվարի 14-ին Դաբրիէլ արքեպիսկոպոսից ձեռնադրուելով վարդապետ Վարագայ վանքի միաբանութեան վրայ։

Ի՞նչ դրութեան մէջ էին այն ժամանակ մեր վանքերը Վասպուրականի և Տարօնի կողմերում։ Հայաստանի այդ երկու լայնատարած նահանգները մինչև այսօր ունին իրանց մէջ հայերի աւելի բազմաթիւ ազգաբնակութիւն, քան թէ Փոքր-Ասիայի այլ գաւառներում։ Այստեղ ամբողջութեամբ պահպանուած ազգային յիշատակարանները ամեն մի քայլափոխում հանդիպացնում են Հայաստանի փա-

ռաւոր անցեալը։ Վանայ ծովակի կղզիներում, ձորերի մէջ, բլուրների վրայ հանդիպում են հոյակապ վանքեր, որոնք լի են ճգնաւորներով և արեղաներով։ Այդ ծոյլերը, որոնք իրանց կեանքը նուիրել են Աղմոսին և Նարեկին, դուրս են գալիս իրանց բներից այն ժամանակ միայն, երբ պէտք էր վանքապատկան կալուածների արդիւնքը հաւաքել, կամ թեմերից հոգևոր պտուղը ստանալ։ Այնուհետև նոքա ժողովրդի մէջ չէին մտնում, այլ ազգի արծաթն էին վայելում և նորա համար աղօթում էին...։ Վանքերի մէջ վարդապետների խաբեբայութիւնը հասել էր վերին աստիճանի կեղտոտութեան։ Նոքա պահում էին իրանց մօտ մինչև անգամ կախարդներ—ընկաւոր կոչուած մի տեսակ խելացնոր վանքական մարգարէներ, որոնք ուշքից գնալով զանազան խաբեբայ գուշակութիւններ էին անում, շարժում էին ուխտաւորների սնահաւատութիւնը և դուրս էին քաշում նոցանից աւելի արծաթ։

Խրիմեանն առաջինը եղաւ, որ իւր օրինակով ցոյց տուեց, թէ վարդապետների պաշտօնը չէ այն, որ վանքի խորշերում ազգի փողով իրանց փորը պարարտացնեն։ Նա հանդէս տուրս եկաւ որպէս ժողովրդի բարեկամ և նորա գործիչ։

Խրիմեանն առաջինը եղաւ Հայոց արեղաների մէջ, որ թողնելով վանքը և Այսմաւուրքի երևակայական առասպելաբանութիւնքը, սկսաւ եկեղեցու բեմից քարոզել ժողովրդի առօրեայ կեանքի՝ նորա պիտոյքների մասին, յորդորել նորան դէպի ուսում, արհեստ և դիտութիւն։ Նորա ատենախօսութիւնները նշանաւոր էին իրանց ջերմ, ազդու և գրգռիչ

բնաւորութեամբ, որոնք միշտ քաշում էին դէպի Աստուծոյ տաճարը հարիւրաւոր լսողների խումբը։ Նորա քարոզների մէջ չէին լիշվում Եղիա մարգարէի, Թոդիկ ճգնաւորի և Ալեքսիանոս միայնակեացի անունները։ Հայկը, Սրամը, Սրշակունիքը, բոլորը յարութիւն էին առել քրիստոնէական տաճարի մէջ։

Բայց Խրիմեանը, որպէս ամեն մի հասարակական փթած կազմակերպութեան բարեկարգիչները, շատով բազմաթիւ թշնամիներ ունեցաւ, որոնց մէջ գլխաւոր տեղն էր բռնում կղերը, և Վանից հալածուեցաւ։ Բայց նորա երկաթի ամրութեամբ տակուն բնաւորութիւնը երբէք չը յուսահատուեցաւ։ Նա կրկին դիմեց Կ. Պոլիս, որ իւր նպատակների իրագործման օջախն էր համարում։ Իսկոյն այնտեղ Խրիմեանը նշանակվում է քարոզիչ Իւսքիւդարի Սուրբ-Խաչ եկեղեցումը, և իւր մի տարուայ ստացած արդիւնքով և մի քանի բարերարների օժանդակութեամբ՝ գնում է Սրապեանի տպարանից մի հնաձև մամուլ, և 1855 թուից սկսում է հրատարակել «Արծիւ Վասպուրական» անունով ամսաթերթը։

Խրիմեանն առաջինը եղաւ հայերի մէջ, որ պատառելով եկեղեցականի նեղ-աբեղայական շրջանը, հանդէս դուրս եկաւ որպէս պուբլիցիստ։

«Արծիւը» նշանաւոր էր իւր ջերմ, զրգռողական բնաւորութեամբ և, մինչև մոլեռանդութեան հասած, ազգասիրական ու հայրենասիրական ուղղութեամբ։ Նորա գրականական այդ նոր գործունէութիւնը ստացաւ ընդհանուր համակրութիւն և «Արծիւը» անսպասելի կերպով տարածուեցաւ։

Բայց Խրիմեանի նպատակը չէր գործել Կ. Պոլ-

սում։ Նորա սիրտը տոչորվում էր իւր Հայրենի քի մտաւոր խաւարի մէջ թմրած ազգայինների համար։ Այդ նպատակով կազմում է նա Կ. Պոլսում մի բարեգործական ընկերութիւն «Պաշտպանողական» անունով, և ստանալով Յակոբ պատրիարգից կոնդակ և Բարձ. Դանից հրովարտակ, 1857 թուին իւր տպարանը և «Արծիւ» ամսաթերթը տեղափոխում է Վարագայ վանքը և հիմնում է այնտեղ մի գիշերօթիկ դպրոց «Փառանդաւորաց» անունով։

Այդ հիմնարկութիւնները հանդիպեցին այնքան դժուարութիւնների, որոնց՝ Խրիմեանի պէս տոկուն բնաւորութիւնը կարող էր միայն տանել։ «Փառանդաւորաց» դպրոցի մէջ Խրիմեանը հաւաքեց մինչև 30-ի չափ աշակերտներ մեծ մասամբ գիւղացիներից, այն նպատակով որ կարողանայ գիւղերի համար վարժապետացուք պատրաստել։ Առաջին անգամը Վասպուրականի մէջ մի հայոց վանքում աշակերտներն սկսան սովորել կրօնագիտութեան հետ նաև զանազան լեզուներ և արհեստներ, որպիսի են մաթեմատիկա, բնական պատմութիւն, աշխարհագրութիւն, ազգային պատմութիւն և այլն։

Խրիմեանը՝ իւր ազդեցութեամբ ներշնչեց թէ ընտրած վարժապետների մէջ և թէ իւր աշակերտների մէջ այնպիսի մի սէր դէպի գիտութիւնը, մանաւանդ դէպի իւր անձը, մինչ բոլորը պաշտում էին նորան որպէս իդէալ։ Այդ ժամանակից ժառանգեց նա «Հայրիկ» անունը։ Եւ թէ որքան յառաջադիմութիւն ստացան մի քանի տարուայ ընթացքում դպրոցի աշակերտները, այդ յայտնի է նոցա յօդուածներից, որոնք տպվում էին «Արծուի» թերթերի մէջ։

Բայց Խրիմեանի՝ Կ. Պոլսից բերած նիւթական օժանդակութիւնները սպառուած էին արդէն։ Մի կողմից տպարանի, միւս կողմից 30 դիշերօթիկ աշակերտներով «ժառանգաւորաց» դպրոցի ծախսերի պատճառով՝ նա ընկաւ ծանր պարտքերի տակ։ Միակ աղբիւրը նորա արդիւնքի մնացել էր Վարագայ վանքի եկամուտը, որ ժառանգաւորաց դպրոցին սեպհականելով, Խրիմեանը յարոյց իւր դէմ Վանայ առաջնորդի և մի քանի հին կլանողների թշնամութիւնը։ Խռովութիւնը մինչ այն աստիճան բորբոքեցաւ, որ թշնամիները փորձ փորձեցին կաշառուած Քրդերի միջնորդութեամբ դաւաճանել նորա կեանքին։

Մի անգամ նա Վան քաղաքից ոտքով Վարագ էր գնում, երբ ճանապարհին հանդիպում է նորան մի քուրդ։ Զարագործի դէմքը գունատվում է, նորա ձեռքերը սկսում են դողալ։

—Բարեկամ, ինչու՞ շփոթեցար դու, հարցնում է «հայրիկը»։

— Ես ուզում էի քեզ սպանել, պատասխանում է քուրդը։

—Ապա ինչու՞ չը սպանեցիր, անխռով կերպով Խրիմեանը շարունակում է իւր խօսքը։

—Ստուած չը թողեց, ասում է քուրդը և ընկնում է նորա ոտքը ներողութիւն խնդրելու։

Այստեղ երևում է Խրիմեանի ընաւորութեան բոլոր վեհութիւնը, որ նա այդ դէպքի առիթով ոչ միայն յանդիմանութիւն չի անում իւր թշնամիներին, այլ իւր բարեկամներին անգամ անփոյթ է լինում յայտնելու։

Խրիմեանը տեսնելով որ իւր պարտքերը օր ըստ

օրէ ծանրանում են, թէ դպրոցը և թէ տպարանը կործանուելու վտանգի մէջ է, նոցա կառավարութիւնը յանձնեց ուսումնարանական և տնտեսական վարչութիւնից կազմուած երկու ժողովների և ինքը դարձեալ գնաց Կ. Պոլիս։ Իսկ այս անգամի գնալով այնքան օժանդակութիւն չը գտաւ, միայն կարողացաւ իւր հետ բերել մի մեծ և մի փոքր մամուլ և տպարանի համար հարկաւոր պարագայք։

1860—թուի նոյեմբերի 10-ին նա ուղևորուեցաւ դէպի Կովկաս, դէմեց ուղղակի Ս. Էջմիածին, ստացաւ Հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսից կոնդակ, ժառանգաւորաց դպրոցի անունով օժանդակութիւն խնդրելու կովկասեցի Հայերից։ Թիֆլիզում նա ընդունուեցաւ ժողովուրդի ընդհանուր համակրութեամբ և նորա քարոզները մեծ շարժում ձգեցին ժողովուրդի մէջ։ Բայց յայտնի չէ, թէ ինչ մրրիկ բարձրացաւ, որ ի նպաստ Խրիմեանի մինչև 10000 ռուբլի ստորագրուած արծաթը օդի մէջ ցնդեցաւ, և ինքը հազիւ ճանապարհի ծախսն ստանալով հեռացաւ Պարսկաստան...։

Խրիմեանը իւր կեանքում շատ անգամ մեծ գումարներ ձեռք ձգեց, բայց նա մնաց միշտ աղքատ, միշտ պարտքերի տակ խրուած։ Խրիմեանը խիստ անփոյթ էր դէպի իւր անձնական վայելչութիւնները, դէպի իւր բարեկեցութիւնը. նա իւր վրայ ոչինչ չէր վատնում, իսկ բնաւորութեամբ, եթէ կարելի է այդպէս կոչել, կ օ մ ո ւ ն ի ս տ էր։ Նա որպէս անհաշիւ կերպով ստանում էր, նոյնպէս անհաշիւ կերպով սպառում էր։ Հանդիպած աղքատին Խրիմեանը պատրաստ էր իւր վերջին փ ա ր ա ն տալ և ինքը

սոված մնալ։ Սեպհականութիւնը նորա համար ոչինչ նշանակութիւն չունէր, երբ նա ծառայում էր ընդհանուրի օգտին։

Բայց չը նայելով իւր միշտ նիւթական դժուարութիւններին Խրիմեանը երբեք չը վհատեցաւ իւր գործունէութեան մէջ։ Նորա սիրտը մնաց միշտ հանգիստ, նա՝ մինչև ֆատալիստութեան հասած անձնավստահ էր իւր նպատակին։

Խրիմեանը նոր ոյժ է ստանում, երբ Կ. Պոլսի ազգային վարչութեան և պատրիարգի օգնութեամբ ընտրվում է Առաջնորդ Տարօնի և Ս. Կարապետի վանքի վանահայր։ Այդ վանքը միակ վանքն է բոլոր Փոքր Ասիոյ մէջ, որ Երուսաղէմից յետոյ ունի արդիւնաւոր եկամուտ։ Ուխտաւորների բազմաթիւ խմբերը նա քաշում է դէպի ինքն ամեն տեղից, ուր կային Հայեր։ Խրիմեանին այդպիսի մի վանքի եկամուտներն էին հարկաւոր իւր ցանկութիւններին նպաստելու։ Նա անմիջապէս Վարագայ հին մամուլը փոխադրելով Ս. Կարապետի վանքը, և իւր յառաջադէմ աշակերտներից երկուսը իւր հետ առնելով, գընում է Տարօն։ 1862 թուի օգոստոսի 20-ին իւր աշակերտ Սրուանձտեանի խմբագրութեամբ Ս. Կարապետի վանքում հրատարակել է տալիս մի շաբաթաթերթ «Արծուիկ» անունով։ Նա բարեկարգում է վանքի ուսումնարանը, կանոնաւորում է վանքի եկամուտները։

Իսկ այնտեղ ևս ազատների սև երամը չէ դադարում որոգայթներ լարելու արիաջան «Հայրիկի» դէմ։ Քանի անգամ իւր սենեակի լուսամուտներով արձակուած հրացանների գնտակներից հազիւ է ազատվում նա։ Կաշառուած քրդերը այստեղ ևս մի քանի

վարդապետների չարանենգութեան գործիք դարձան. խառվութիւնն օր ըստ օրէ վտանգաւոր կերպարանք ստացաւ։ Պատճառը խիստ պարզ էր. Խրիմեանի վանահայր լինելը վերջ տուեց մի քանի վարդապետների շահասիրութեանը, որոնք իրանց ձեռքն էին անցուցել վանքի բոլոր արդիւնքների մենավաճառութիւնը։ Իրանց նախկին ցանկութեանը հասնելու ուրիշ հնար չէին գտնում այդ անպիտանները բացի Խրիմեանի մահը։

«Հայրիկը» իւր կեանքը ազատեց փախչելով նախ Կարին և այնտեղից Կ. Պոլիս։ Նորա ոսոխներից չորս վարդապետներ դատապարտուեցան յաքսոր, որոնք ազատուեցան կրկին Խրիմեանի խնդրելովը։ Նոյն մի-ջոցում «Հայրիկը» Կ. Պոլսում տպագրեց «Քարգարիտ արքայութեան երկնից» գրքոյկը։

1868 թուի 20 հոկտեմբերի Խրիմեանը Էջմիա-ծնում ձեռնադրուեց եպիսկոպոս։ Իսկ 1869 թուի 4 սեպտեմբերի նա Կ. Պոլսում ընտրուեց պատրիարգ։ Նա կարծում էր, որ եկեղեցական բարձր աստիճան-ների վրայ կանգնելով աւելի օգուտ կարող է բերել ազգին։

Խրիմեանը հոգւով բանաստեղծ է, իսկ սրտով առաքեալ։ Նա լիշեցնում է մեզ Հինգերորդ դարու անձնուրաց աբեղաներին, որոնք հոգևոր զինուորու-թեան ցուպը ձեռքներին կրած, հուրի և սուրի միջից անցնելով պտրտում էին Հայաստանում՝ ուսում, գի-տութիւն և կրօնք էին տարածում։

Տասն և ինններորդ դարը Հայոց եկեղեցական-ների մէջ, բացի Ներսէս Ե, չէ ծնել մի այլ մարդ, որի կեանքը [illegible] զոհամատեսակ անցքե-

Հ III 30079

բով, որպէս եղել է Խրիմեանը։ Բայց նորա հերոսական կեանքի բոլոր վսեմութիւնքը հանդիսանում են նորա վարդապետական օրերում, երբ կապուած էր նա վարագայ և «փառանդաւորաց» դպրոցի հետ, երբ եկեղեցու բեմից հնչեցնում էր Հայկի և Արամի անունները։

Խրիմեանի պատրիարգութեան չորս տարին անցաւ խիստ անգոյն կերպով. նա մի երևելի բան չարդիւնաբերեց։ Որովհետև նա կառավարչական մարդ չէր, այլ խօսքով՝ նա ուսած չէր դիպլոմատիկական խորամանկ ձևերը, որով հմուտ քաղաքագէտը պտրտեցնում է իւր նենգաւոր մեքենան։

Արդարև Խրիմեանը եռանդոտ, անհանգիստ և անվաստակելի բնաւորութիւններից մէնն է։ Նա սիրում է գործել, ընկնել, կանգնել և միշտ պատերազմել վանդների մրրկածուփ խռովութեան հետ։ Բայց այդ բոլորը բաւական չէր մի սահմանադրական վարչութեան գլուխ լինելու համար։ Խրիմեանը՝ որպէս շատ բանաստեղծներ՝ իդեալիստ է։ Նա համբերութիւն չունէր ազգային գործերի կանոնաւոր կերպով և յաջորդաբար բարեկարգուելուն։ Նա պահանջում էր հրաշքներ։ Նա կամենում էր Հայոց ժողովուրդը յանկարծ վերաստեղծել և Ռվէյցարիայի նման ձևակերպել։

Խրիմեանի խռովութիւնները Կ. Պոլսի Քաղաքական ժողովի հետ մի այդպիսի անհամբերութեան ծնունդ էր։ Նա պահանջում էր վերաքննել Սահմանադրութիւնը, մաքրել նորան թերութիւններից և վերին աստիճանի կատարելագործութեան հասցնել։ Այդ շատ գեղեցիկ միտք է, եթէ հնարաւոր լինէր։

Բայց Խրիմեանը յուսահատուեցաւ, թէ ինչո՞ւ չեն հասկանում իրան և հրաժարուեցաւ պատրիարգութիւնից։

Գնա՜, ազգի բարեկամ, ճակատագիրը կոչում է քեզ. պատրիարգութեան սահմանափակ – պաշտօնական շրջանը քո տեղը չէ։ Դու, որպէս Իսրայէլը Բաբելոնում, միշտ կարօտում էիր քո նազելի Սալիմին— դա Վասպուրականն է։ Գնա՛, կրկին սիրէ Վարազը, սիրէ Այգեստանի ուռիները... Սրծիւը և ժառանգաւորաց դպրոցը քեզ սպասում են...։

ՀՈՂԱԳՈՐԾԻՆ

Դէ՛, դու ժիր մշակ, լծէ՛ քո արօր,
Հասաւ գործելու քեզ փառաւոր օր,
Ժամ է քեզ հիմա արտը մշակել,
Բարերեր սերմանց պտուղ ճաշակել։

Անցաւ ձմեռը — դառնաշունչ, խոնաւ,
Բքաբեր մրբիկ չէ փչում բնաւ.
Գարնան տաք օրեր, անուշիկ, պայծառ։
Ուրախ ճռվռով աւետէ ծիծառ։

Սոխակը իւր վարդին տայ նախկին բարեւ,
Գաղջը ժպտելով ծագում է արեւ,
Անաղօտ լուսով երկնից դիցուհին,
Փայլում է շողեր Հայոց աշխարհին։

Իւր անուշ հոտով բուրէ մանիշակ,
Ինչ հրճուանք այժմ քեզ գործի, մշակ.
Դէ՛, լծէ՛, դու քո արօր եւ դուխան,
Ցանել պտղաւէտ սերմունք դիտուխեան։

Հայոց կոշտացած, անմշակ դաշտում,
Վարէ՛ քո արտը ուրախ, անտրտում,
Խոր ակօս ձգէ՛ հողում արգաւանդ,
Պատառէ՛ նորա կուսական արգանդ։

Եւ արշալոյսի ցողարբեր պահուն,
Երբ օրհնի Աստուած թռչունքը անհուն,
Երբ ծագէ իւր լոյս երկնքէն Ֆերոս,
Եւ ծաղկունք խնկեն բուրմունք եւ ամբրոս։

Հնչեցուր, մշակ, անուշիկ քո երգ,
Եւ յառաջ վարէ օրավար քո հերկ,
Քո ժիր, գործունեայ եղներիդ ուժեղ
Կրտայ զօրութիւն մեր Աստուած անեղ։

Ցանէ, դու մշակ, բարեբեր սերմունք.
Օրհնէ քո Տէր հունձիդ արդիւնք.
Կրգայ քեզ ամառ, ջերմին եղանակ
Կրհասնի ցանքը քո այն ժամանակ։

ՎԱՐԱԳ

Մեզ մնում էր տեսնել Վարագայ վանքը, այնուհետև մեր հետազոտութիւնները Վանայ շրջակայքում պէտք էր վերջացած համարել։

Գեղեցիկ պայծառ առաւօտ էր, երբ ես և Ըսլանը ձի նստած, դուրս եկանք Այգեստանի ծառազարդ փողոցներից և ուղևորուեցանք դէպի վանքը։ Մեր առջևն էր Վարագայ սարը իւր սքանչելի տեսարաններով։ Երևը դեռ նոր էր սկսել ծագել։ Նա կամաց-կամաց վեր էր համբառնում Վարագայ լեռնագագաթի ճիշտ այն ամենարարձր կէտից, որ կոչվում է Դալիլիա։ Ես առաջին անգամն էի տեսնում արևի մի այնպիսի հրաշալի ծագումն։ Ինձ այնպէս էր թվում, որ տունջեան լուսատուն դիշերը հանգչել էր Դալիլիայի գագաթի վրայ, միևնոյն նուիրական այրերի մէջ, որտեղ մի ժամանակ պատսպարուած էր Հռիփսիմէն իւր ընկերուհիների հետ, իսկ այժմ լուսաճաճանչ պայծառութեամբ դուրս էր գալիս իւր հանգստարանից լուսաւորելու Հայոց աշխարհը։ Նոյն այրերի մէջ ճգնում էր երանելի կոյսը, նոյն այրերից դուրս եկաւ և նա, և որպէս մի պայծառ լոյս, ու-

գևորուեցաւ դէպի Արարատ, կատարելու այն մեծ բարոյական պատերազմը Հայոց Հեթանոս թագաւորի և Հեթանոսական խաւարի հետ, որի արդիւնքը եղաւ քրիստոնէութեան մուտքը Հայաստան: Նոյն այրերի մէջ թագցրեց նա կենսատու փայտի Ս. Նշանը, որ ամփոփուած էր մի փոքրիկ խաչի մէջ և որ նորա կրծքի ու պարանոցի Աստուածային զարդն է կազմում: Ամբողջ չորս դար հրաշալի Սուրբ Նշանը մնաց այնտեղ անյայտութեան մէջ, մինչև Թոդիկ ճգնաւորի մշտական աղօթքով յայտնուեցաւ նա, և արեգակի լուսափայլ պայծառութեամբ, Վարագայ լեռնագագաթի բարձրութիւնից թռչելով, իջաւ նորա լանջաց վրայ, և որպէս մի ժամանակ զարդարում էր Հռիփսիմէի կուրծքը, այնուհետև դարձաւ Վարագայ լեռան կրծքի երկնային զարդը: Միևնոյն տեղում հիմնուեցան տաճարներ, որ սուրբ նշանի անունով կոչուեցան Ս. Խաչ:—Այդ տաճարներն էին, որ բոլորը միասին ներկայացնում էին Վարագայ վանքը, ուր այն առաւօտ ես և Ասլանը գնում էինք:

Արևը բարձրացաւ: Նորա ճառագայթները հրեղէն շառաւիղների նման տարածուեցան Վանայ շրջակայքը, տարածուեցան ծովակի մանիշակագոյն մակերևոյթի վրայ և լուսաւորեցին առաւօտեան մառայլի մէջ ծածկուած հեռաւոր լեռները: Ինձ տիրում էր խորին հոգեզմայլութիւն: Արևի ծագումը զարթեցնում էր իմ սրտում այդ նուիրական վայրերի և այդ սրբազան լեռների վաղեմի յիշատակները: Կարծես դարերը յետ-յետ էին գնում և հին աւանդութիւնը կենդանանում էր, կերպարանք էր ստանում իմ աչքի առջև: Կարծես կրկին երևում էր ինձ Թոդիկ

ձգնաւորի սքանչելի տեսիլքը—կենսատու Ս. Նշանը թռչելով ցած է իջնում Վարագայ լեռնագագաթի բարձրութիւնից, և նորանից ցոլանում են տասներկու լուսեղէն սիւներ, որոնք հանգչում են տասներկու տեղերի վրայ։ Հրեղէն սիւները այնքան ժամանակ մնում են այնպէս կանգնած, մինչև երկրի իշխանները և ժողովուրդը տեսնում են նրանց։ Յետոյ բարեպաշտ ժողովուրդը, միացած իւր իշխանների հետ, կառուցանում են տասներկու տաճարներ մի և նոյն տեղերի վրայ, ուր իջել էին լուսեղէն սիւները։ Նրանցից երկուսը իջել էին այն տեղերում, ուր շինուեցան Ս. Գրիգոր և Կարմրաւոր վանքերը։ Երեքը իջել էին Վերին Վարագում, որ և կոչվում է Գալիլիա։ Իսկ եօթը Ներքին Վարագում։ Այդ եօթն տաճարներից բաղկացած եկեղեցիների խումբը,— որոնց իւրաքանչիւրը առանձին-առանձին անուններ ունի,—բոլորը միասին սարի անունով կոչվում են Վարագայ վանք։

Այն օրից, որ յայտնուեցաւ Ս. Նշանը, Հայոց եկեղեցին նորա համար տօն սահմանեց, որ կատարվում է մինչև հիմա։ Այն օրից, որ յայտնուեցաւ Ս. Նշանը, Վարագը դարձաւ Հայոց լեռների սուրբ Սիօնը։ Նորա գագաթը, նորա կուրծքը, նորա ստորոտները ծածկուեցան վանքերով, և կրօնաւորների բազմութիւնը լցրեց այդ վանքերը։ Երկար տարիներ յիշեալ Ս. Նշանը պահվում էր Վարագայ վանքում, և ամեն կողմից ուխտաւորների բազմութիւնը դիմում էր այնտեղ երկրպագութեան համար։ Երկրի թէ հարուստը, թէ աղքատը թափում էր այնտեղ իւր արծաթն ու ոսկին, նուիրում էր իւր կայքն ու կալուածները Ս. Նշանի սպասաւորներին, որպէս զի

Վասպուրականի այդ հռչակաւոր սրբավայրը միշտ շէն ու պայծառ մնայ։ Երեղանները այնտեղ վայելում էին ժողովրդի բարեպաշտութեան պտուղները և աղօթում էին աշխարհի համար։

Գագիկ Արծրունին ծախսեց իւր գանձերից ահագին դումար և շինել տուեց յիշեալ Ս. Նշանի համար մի ոսկեայ տուփ և պահարան։ Իսկ Աշոտ արքայորդին ծախսեց երեսուն հազար ոսկի և զարդարեց նորա պահարանը մարգարիտներով և թանկագին քարերով։ Երբ Արծրունիների վերջին թագաւոր Սենեքերիմը իւր ամբողջ պետութիւնը տալով յունաց կայսրին, ինքը տեղափոխուեցաւ Սեբաստիա, նա յօժարեցաւ իւր թագաւորութիւնից զրկուել, բայց Ս. Նշանը տարաւ իւր հետ։ Իսկ յետոյ դժբաղդ թագաւորի մարմնի հետ կրկին փոդադրուեցաւ Վարագ։ Այնուհետև այդ թանկագին սրբութիւնը դարձաւ զանազան բռնակալների ագահութեան առարկայ։ 1651 թուին Խօշաբ բերդին տիրող քուրդ Սուլէյման բէկը՝ Զօմար կոչուած աւազակապետի առաջնորդութեամբ եկաւ, կողոպտեց Վարագայ վանքի հարստութիւնները և Ս. Նշանը գերի տարաւ իւր բերդը։ Բարեպաշտ ժողովրդի առատաձեռնութեան դարևոր արդիւնքները մի քանի օրուայ մէջ ոչնչացան։ Չորս տարի Ս. Նշանը մնաց գերութեան մէջ։ Իսկ Վանայ հասարակութիւնը այդ չորս տարուայ ընթացքում սուգ էր կատարում։ Քանիցս անգամ պատգամաւորներ ուղարկուեցան և մեծ փրկանքներ առաջարկուեցան, մինչև վերջապէս կարողացան գերութիւնից ազատել իրանց աշխարհի սրբութիւնը։

Մինք այժմ բարձրանում էինք Վարագայ լեռան գառիվերը։ Մինչև մի որոշ գիծ՝ այդ սարը կանաչազարդ է. տեղ-տեղ երևում են թփեր ու պրակներ, տեղ-տեղ պատած է խոտաւէտ մարգերով, շատ տեղերում էլ լեռան կողքերը ծածկուած են հասուցնացած գարիի կամ ցորենի ոսկեգոյն արտերով։ Հընձաւորը գործում է, մանգաղը փայլում է, և աշխատասէր մշակի թախծալի երգը հնչեցնում է հսկայ լեռան սրբազան վայրերը։

Երևը սկսել է այրել, չը նայելով որ դեռ առաւօտ է։ Հովիւը իւր թաղիքեայ վերարկուն (քափանակ) ձգելով ցուպի գլխին, նորան ամպհովանիի ձև է տուել և արևի կիզող ճառագայթներից պատսպարուելու համար նստել է նորա ստուերի ներքոյ։ Նորա շուրջը, սփռուած խոտաւէտ արօտամարգերի մէջ, արածում են ոչխարները, մի ժայռից դէպի միւսը թռչկոտում են այծերը, իսկ աչալուրջ շները հեռուից հսկում են այդ միամիտ անասունների անհոգ զուարճութիւնների վրայ, որ կարող է մի ակնթարթում սուգի փոխուել...

Կանաչազարդ գծից դէպի վեր, մինչև գագաթը, Վարագայ լեռը մերկ է և բաղկացած է անմատչելի, թխագոյն-կարմիր ժայռերից։ Այդ բարձրութիւնների վրայ խիստ հազիւ անգամ դիպել է մարդու ոտքը։ Երբեմն սրաթռիչ կաքաւները միայն խմբովին թռչում են մի ապառաժից դէպի միւսը, կամ սևափետուր արծիւը, որպէս մի սգաւոր և սևազգեստ ոգի, միայնակ նստած Դալլիլայի ժայռերից մէկի վրայ, վերևից տխրութեամբ նայում է դէպի ցած,—դէպի Արծրունիների աւերակ պալատների բեկորները. այն

Որձրունիների, որոնք այնքան շատ դարեր խնամեու փայփայել էին նրան...

Վարագայ լեռը Վանայ հովիտի շտեմարանն է. այստեղից են վազում ջրերի այն բազմաթիւ վտակները, որոնք ոռոգում են Այգեստանի ընդարձակ այգիները և ջուր են մատակարարում շատ գիւղերի, որոնք սփռուած են լեռան ստորոտներում։

Վանքին դեռ ոչ բոլորովին մօտեցած, ճանապարհի մի կողմում տեսանք մի խումբ մարդիկ։ Այս տեղ, որպէս երևում էր, երկրագործական մի նոր փորձ էին անում, վարում էին մի գութան, որ թէ իւր ձևով և թէ տեսակով ամենևին նման չէր տեղական ծանը, անշարժ գութաններին։ Գութանի մաճը բռնած կառավարում էր մի բարձրահասակ անձնաւորութիւն, որի հագուստից երևում էր, որ աշխարհական չէ։ Նա ցոյց էր տալիս վանքի անփորձ մաճկալներին նորաձև գութանի բանեցնելու եղանակը։ Միւսները հետաքրքրութեամբ նայում էին։ Մենք, երկրի սովորութեան համեմատ, «բարի աջումն» ասելով անցանք։ Տեսնելով, որ մենք դէպի վանքն ենք գնում, նորանցից մէկը խմբից բաժանուեցաւ, եկաւ մեզ հետ։ Դա մի երիտասարդ արեղայ էր, որ առաջարկեց առաջնորդել մեզ մինչև վանքը։ Երբ բաւական մօտեցանք վանքին, Ալանը հարցրեց նրանից.

—Մենք կարող ենք գտնել Հայրիկին վանքումը։

Այդ անունով կոչում էին վանահօրը։

—Դուք չը ճանաչեցիք նորան,—զարմանալով հարցրեց արեղան.—Հայրիկը հէնց նա էր, որ վարում էր գութանը։

—Այդ ինչ գութան էր։

—Հայրիկը նոր բերել տուեց Եւրոպայից. այսօր առաջին փորձն էին անում։ Սպասում ենք ուրիշ երկրագործական անօթներ ևս շուտով ստանալ։

—Վանքը երկրագործութեամբ է պարապում։

—Այո, իւր կալուածներն ինքն է մշակում։ Բայց մենք ունինք վանքում և երկրագործական դպրոց։

—Երկար կը մնայ Հայրիկը այնտեղ։

—Երկար չի մնայ։ Նա տեսաւ որ դուք վանքն էք գնում, ինձ պատուիրեց, որ ձեզ տանեմ, այնտեղ հանգստացնեմ մինչև իւր վերադարձը։

Երբ հասանք վանքը, երբ շրջապարսպի գլխաւոր դռնից ներս մտանք, երբ հետզհետէ երևան եղան այդ հինաւուրց սրբավայրի պատկառելի շինուածքները, նրանց արտաքին տեսքը միայն իմ վրայ այն տպաւորութիւնը գործեց, որ ես յակամայից սկսեցի մտածել, թէ այստեղ անպատճառ տեսնելու եմ կտուց անապատի հակապատկերը։ Եւ իրաւ, այստեղ շնչում էր մի այլ կեանք, երևում էր մի այլ աշխարհ, այստեղի մթնոլորտը ներշնչուած չէր անապատական մշտավառ խնկի թուլացնող և վհատեցնող ծխով.—այստեղ միացել էին հոգևորը և երկնայինը՝ աշխարհայինի հետ։

Վանքը թէ արտաքուստ և թէ ներքուստ հոյակապաւորուած էր ծառերով ու պարտէզներով. վազում էին սառն, յստակ աղբիւրներ, և ջրերի վտակները հաւաքուելով, մեծ աղմուկով դարձնում էին վանական ջրաղացի ծանր աղօրիքը։

—Այդ ծառերը Հայրիկի տնկածն է,—ասաց մեր առաջնորդը,—այն ջրաղացը երկար ժամանակ խանգարուած էր, չէր բանում, Հայրիկը նորոգեց։

Երիտասարդ արեղան տարաւ մեզ մի բաւական մաքուր և ճաշակով կահաւորած սենեակ, և իսկոյն սկսեց մեզ հետ խիստ մտերմական խօսակցութիւն, թէ ո՞րտեղից ենք գալիս, ո՞ւր պիտի գնանք, արդեօք պարոն բժշկապետը երկա՞ր պիտի մնայ վանում, ինչ ազգից է պարոն բժշկապետը, քանի՞ լեզու գիտէ և այլն։ Այդ բոլոր հարցմունքները այն աստիճան անկեղծ էին, որ Ասլանը առանց ճանձրանալու պատասխանում էր նորան։

—Շա՞տ ժամանակ է, որ Հայրիկը այս վանքի վանահայրն է,—հարցրեց Ասլանը։

—Շատ ժամանակ չէ,—պատասխանեց արեղան,—բայց այդ փոքր ժամանակում նա այնքան գործ կատարեց, որ մի ուրիշը, որքան և մեծ ջանք ու եռանդ ունենար, հազիւ թէ տասն, քսան տարիների ընթացքում կարող լինէր կատարել։

Երիտասարդ արեղան Հայրիկի աշակերտներից էր։ Նա իսկոյն նկատեցի, և այնուհետև ինձ շատ անգամ էր պատահել նկատել, որ նորա աշակերտները նորա մասին խօսելիս, նորանց տիրում էր խորին ոգեորութիւն, և նրանք մի առանձին պարծանքով էին յիշում այն մարդու անունը, որին այնքան սիրում էին, որին այնքան պատվում էին։

—Հայրիկից առաջ,—շարունակեց նա,—այս վանքը համարեա թէ աւերակ էր. ոչ գպրոց կար, ոչ աշակերտ և ոչ կանոնաւոր տնտեսութիւն։ Նորա եկամուտները կողոպտվում էին թէ ներքին և թէ արտաքին աւազակներից։ Վանքը պարտքերի ներքոյ խեղդվում էր։ Մինչև անգամ Ս. Նշանը գրաւ էր դրուած թուրք վաշխառուների մօտ։ Բայց Հայրիկը

կեանք տուեց այդ վանքին։ Բոլորը, ինչ որ տեսաք և ինչ որ պիտի տեսնէք, նորա աշխատութեան պտուղն է։ Բայց փոխարէնը, ինչ որ ստացաւ նա և ինչ որ ստանում է,—միշտ եղել է ատելութիւն, հալածանք և դաւադրութիւն իւր խաւարասէր թշնամիների կողմից...

Վերջին խօսքը արտասանելու միջոցին երիտասարդի ձայնը դողաց։ Նա պատմեց մի ցաւալի անցք, որ պատահել էր հէնց նոյն օրերում։ Հայրիկը վարագայ վանքից, որպէս նորա սովորութիւնն էր, միայնակ, ոտքով վան քաղաքը գնալու ժամանակ ճանապարհին հանդիպում է նորան մի քուրդ։ Երբ Հայրիկը իւր արծուի հայեացքով նայում է նորա երեսին, աւազակը շփոթվում է, նորա ձեռքերը սկսում են դողալ։

—Ինչու՞ շփոթուեցար, բարեկամ,—հարցնում է Հայրիկը իւր սովորական մեղմ ժպիտով։

—Ուզում էի քեզ սպանել,—պատասխանում է աւազակը և, չոքելով նորա առջև, գրկում է նորա ոտները։

—Ինչու՞ չը սպանեցիր,—հարցնում է Հայրիկը, վեր բարձրացնելով նորան։

—Ստուած իմ ձեռքը բռնեց,—ասում է քուրդը և սկսում է պատմել, թէ որպէս Հայրիկի թշնամիները կաշառեցին իրան, և որպէս ինքը խոստացաւ կատարել այդ եղեռնագործութիւնը, բայց խղճի ձայնն ասաց իրան, թէ պէտք չէ սուր բարձրացնել Ստուծոյ օրհնեալի վրայ։

—Դու էլ օրհնեալ լինիս, որդի,—ասում է նորան Հայրիկը։—Գնա խաղաղութեամբ, բայց այդ բոլորը,

ինչ որ պատմեցիր ինձ, ուրիշ ոչ ոքի չը պիտի յայտնես։

—Դու խնայո՞ւմ ես քո թշնամիներին,—Հարցնում է աւազակը զարմանալով։

—Աստուած այսպէս է պատուիրում,—պատասխանում է Հայրիկը։

Բայց, չը նայելով Հայրիկի պատուէրին, քուրդը ամեն տեղ պատմում է նորա կեանքի դէմ դաւադրութիւն սարքող անձինքների անունները, և այդ լսում է ամբողջ քաղաքը։

—Ո՞վքեր են այդ դաւաճանները,—Հարցրեց Սալանը։

—Մի քանի եկեղեցականներ, միացած մի քանի աղաների հետ, որոնց պարագլուխն է մեր քաղաքի սրբազան Առաջնորդը,—պատասխանեց արեղան։

—Ի՞նչն էր առիթ տուել նրանց՝ մինչ այդ աստիճան անիրաւութեան դիմել, թափել տալով մի անմեղ արիւն,—Հարցրեց Սալանը փոքր ինչ զայրացած ձայնով։—Մի՞թէ դպրոցը, լոյսը, կրթութիւնը այդքան ատելի է նրանց։

—Ես չեմ կարծում,—ասաց արեղան,—որ նորանք լուսաւորութեան թշնամի լինին և այդ պատճառով զինուորվում են նորա տարածողների դէմ։ Նրանք չեն կարող թշնամի լինել լուսաւորութեան, որի մասին ամենևին հասկացողութիւն չունին, որի վրայ երբէք չեն մտածել։ Խնդիրը բոլորովին տնտեսական է։ Մի ժամանակ, որպէս քանի մի բոպէ առաջ ասացի, այս վանքում կանոնաւոր տնտեսութիւն չը կար. նորա եկամուտները վատնում էին միաբանները, և ինչ էլ որ մնում էր, այն էլ Առաջնորդի կոկորդն էր անցնում։ Բայց երբ Հայրիկը վանահայր դարձաւ, նախ վանքը

մաքրեց անպիտան միանաններից, նրանց փոխարէն խմբեց այնտեղ աւելի արժանաւոր անձինք, և այնուհետև վանական արդիւնքները սեպհականացրեց իւր նոր կառուցած հիմնարկութիւնների պահպանութեան համար։ Այդ բոլորից յետոյ, շատ բնական է, որ այն անձինքը, որոնք առաջ վատնում էին վանքի եկամուտները, կը թշնամանային հայրիկի հետ։

—Բայց մի՞թէ հայրիկը բարեկամներ չունի։

—Ունի, բայց հայրիկի բարեկամներն այնպիսի կարող, այնպիսի հզօր մարդիկ չեն, որպէս նորա թշնամիները։ Հայրիկի բարեկամները ժողովրդի հալածուած, հարստահարուած և ամեն իրաւունքներից զրկուած դասակարգն է։ Հայրիկի բարեկամները աղքատ շինականներն են, քաղաքի արհեստաւորներն են, և անտուն, անտեղ, անհող, անջուր սարակներն ու բանուորներն են,—և մի քանի երիտասարդներ, որոնք ազնիւ սիրտ և բարի ցանկութիւններ ունին, բայց իրանց ցանկութիւնները կատարելու համար ոչինչ միջոցներ չունին։

Հայրիկը եկեղեցական աստիճանով դեռ վարդապետ էր, բայց նորա կատարած գործերը, ստացած հռչակը, վայելած ժողովրդական մեծ համարումը,—այդ բոլորը չէր կարող չը զրգռել միւս եկեղեցականների նախանձը, որոնք թէ աստիճանով և թէ դիրքով աւելի բարձր էին քան թէ նա, թէև երիտասարդ արեղան նրանց թշնամութիւնը բացատրում էր միայն տնտեսական պատճառներով։ Նորա կառուցած նոր հիմնարկութիւնները՝ իրանց նորութեամբ անդամ կարող էին օտարոտի և վնասակար թուել միւս եկեղեցականներին։ Նա հիմնել էր իւր

վանքում գիշերօթիկ դպրոց, որ մի տեսակ վարժապետանոց կարելի էր համարել, ուր հաւաքել էր նա զանազան տեղերից մանուկներ այն նպատակով, որ վարժապետացուք կամ կրթեալ քահանայացուք պատրաստուեն և, վերադառնալով իրանց հայրենիքը, գիւղական քահանաներ կամ վարժապետներ դառնան։ Դպրոցն ունէր և երկրագործական բաժին։ Գիւղական վարժապետը կամ գիւղի քահանան, Հայրիկի կարծիքով, բաւական չէ, որ պէտք է սովորեցնէին գրել, կարդալ, հաշուել, կամ կատարէին գիւղացու հոգևոր, եկեղեցական պէտքերը,—այլ միևնոյն ժամանակ նրանք պէտք է ցոյց տային, թէ ինչպէս պէտք է գիւղացին վարէր իւր հողը և ինչպէս պէտք է դարմանէր իւր անասունները, որ աւելի արդիւնք ստանար։ Բացի դպրոցից, Հայրիկը զանց չէր արել հիմնել կրթութեան երկրորդ գործիչը՝ տպագրական մամուլը։ Նորա տպարանից լոյս էին տեսնում զանազան դասագրքեր և՝ ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու համար փոքրիկ դիւրիմաստ գրքոյկներ աշխարհիկ լեզուով, այլ և մի ամսագիր, որ խմբագրվում էր գլխաւորապէս նորա միաբանութեան աշխատութեամբ։ Այդ բոլորի ի կատար ածելը՝ արժել էր այնքան մեծ ջանքեր և այնքան անտանելի տառապանքներ, որոնց դէմ միայն Հայրիկի նման մարդու երկաթեայ հաստատամտութիւնը կարող էր պատերազմել։ Քանի՞-քանի՞ անգամ նա ոտքով Պոլիս էր գնացել՝ հարուստ ամիրաների դռները բաղխելու և իւր հիմնարկութիւնների համար օժանդակութիւն խնդրելու։ Նա միայնակ ստեղծեց այն բոլորը. նա առաջին օրինակը եղաւ, որ դատարկամոլ և ձրիակեր կրօնաւորների անկելա-

նոց դարձած վանքին տուեց մի այնպիսի կազմակերպութիւն, որ նա սկսեց այնուհետև ծառայել իբրև մի բարձր հիմնարկութիւն ժողովրդի հոգևոր, բարոյական և մտաւոր կրթութեան համար։

Ո՛րքան մեծ անհամբերութեամբ ցանկանում էի տեսնել այդ մարդուն, լսել նորա ձայնը և խօսել նորա հետ։ Նա մեզ երկար սպասել չը տուեց, շուտով վերադարձաւ գուբանի մօտից, քրտնած, փոշիների մէջ թաթախուած։ Նախ վազեց իւր սենեակը, երևի լուացուելու համար, յետոյ եկաւ մեզ մօտ։ Նա ուրախ էր, որովհետև նորաձև գուբանի առաջին փորձը յաջողութիւն էր խոստանում։

Նա դեռ երիտասարդ էր, երեսուն և վեց տարեկան հազիւ կը լինէր. այդ հասակի համեմատ՝ «Հայրիկ» մականունը շատ օտարոտի կարող էր լինել, եթէ նա չունենար մի սիրող հօր խնամքը, հոգածութիւնը և բոլոր բարեմասնութիւնները՝ թէ դէպի իւր վանքն ու միաբանութիւնը և թէ դէպի ժողովուրդը։ Բարձրահասակ էր նա և ամուր կազմուածքով. երևում էր, որ ծոմը, մշտական աղօթքը և խիստ ճգնութիւնները,—որոնք մեր անապատականների բարեպաշտութեան գլխաւոր արդիւնքն են համարվում,— չէին մաշել նորա մարմինը։ Գլխին վեղար չունէր. շաղանակագոյն խիտ մազերը կիսով չափ ծածկում էին նորա լայն ճակատը և, դէպի յետ սփռելով, անփոյթ կերպով թափվում էին հզօր ուսերի վրայ։ Մօրուքը թաւամազ էր, որպէս անապատական առիւծի բաշը։ Բայց ինչ որ աւելի նշանաւոր էր նորա հեզ և միևնոյն ժամանակ այրական դէմքի վրայ, դրանք էին՝ արծուի խոշոր աչքերը և արծուի կտցաձև քիթը,

որոնք թշուառների այդ վեհափառ արքայի բնաւորութեան յատկանիշներն էին արտայայտում – թէ նրա հեռատեսութիւնը և թէ նուրբ հոտառութիւնը։ Գուցէ այդ էր պատճառը, որ նա ստացել էր մի երկրորդ մականուն ևս՝ «Վասպուրականի արծիւ»։ Հագուստը պարզ էր և վայելուչ, իսկ վարուողութեան ձևերի մէջ խիստ հասարակ էր նա և անկեղծ։ Նայելով այդ կրօնաւորի վրայ, ի նկատի առնելով նորա անցեալը և ներկան, իսկոյն երևում էր՝ մինչև շինականի աղքատ խրճիթը խոնարհուած մարդու ռամկասիրութիւն, ռամկի բոլոր առաքինութիւններով, ռամկի բոլոր անփառասիրութեամբ,— և մարդասիրական բարձր գաղափարներով ոգևորուած մի եկեղեցականի անձնազոհութիւն, որ իւր աշխատութեան հոգևոր միխիթարութիւնը որոնում է նոյն իսկ ռամկի, դարերով թշուառացած ռամկի, հանգստութեան և բարօրութեան մէջ։ Նա ժողովրդի մարդ էր և ժողովրդի համար ծնուած։

Ես առաջին անգամ էի տեսնում մի այդպիսի սիրելի անձնաւորութիւն։ Նա այն տեսակ աբեղաներից էր, որի բերանում Յիսուսի, Մովսէսի և Պօղոսի անունների հետ ստէպ յիշվում էին իւր ազգի նահապետների անունները, ոչ միայն հասարակ խօսակցութեան մէջ, այլ և Սուրբ տաճարի բեմից։ Նա չէր խօսում բիբլիական Պաղեստինի և «Վերին Երուսաղէմի» երանութիւնների մասին. նրա ուխտեալ երկիրը Վասպուրականն էր։ Հայրենասիրութիւնը հասնում էր նորա մէջ մինչև մոլեռանդութեան, իսկ կրօնասիրութիւնը մինչև բարձր առաքինութեան։

Նորան տեսնելիս, ես մտաբերում էի մեր հինգեր-

բորդ դարի արեղաներից մէկին, որ, կարծես, նոր էր վերադարձել Աթէնքից, և ցուցը ձեռին, մի թափառական դէրվիշի նման, շրջում էր Հայրենի երկրի զանազան կողմերը և տարածում էր այն լոյսն ու գիտութիւնը, որ իւր հետ բերել էր Սոկրատի և Արիստոտէլի մայրաքաղաքից։ Հայրենիքը չէ ընդունում իւր մէջ կրթութեան նոր առաքեալին, իսկ խաւարասէր կղերը ատելութեամբ կատաղած է նորա դէմ։ Բայց նա արհամարում է խաւարասէրների հայածանքը, և հաստատ, անվեհեր կամքով առաջ է տանում Սուրբ գործը։ Մի տեղից հալածվում է նա, միւս օրը յայտնվում է մի այլ տեղում և սկսում է ցանել իւր հայրենակիցների անապատ դարձած մտաւոր անդաստանում այն բարի սերմերը, որ ինքը բերել էր հեռաւոր երկրներից։ Այդպէս էր վարուել և Հայրիկը. ամբողջ Վասպուրականը նորա ընդարձակ ագարակն էր, իսկ ինքը — մի անձնանուէր մշակ։

Այդ մարդը կատարելապէս սիրահարուած էր իւր Հայրենիքի՝ Վասպուրականի վրայ։ Իսկ Վարագը, Վանը, Վանայ ծովակը իւր շրջակայ գաւառներով — նորա մտածութեան գեղեցիկ առարկաներն էին։ Բայց նա իւր Հայրենիքում նոյն դրութեան մէջն էր, որպէս մի ժամանակ Խորենացին Ցարօնում։ Կղերը սորա դէմ ևս լարում էր զանազան որոգայթներ։ Այդ էր պատճառը, որ Նալանը, լիշելով քանի մի օր առաջ պատահած ազէտաւոր անցքը, և յայտնելով իւր խնդակցութիւնը նորա ազատութեան մասին, ասաց.

— Մի վհատիք, Հայրիկ, նահատակութիւնը առաքելութեան հետ միշտ լծորդարար է ընթանում։

Հայրիկը պատասխանեց իւր սովորական ժպիտով.

—Այդպիսի դէպքեր ինձ չեն կարող վհատեցնել. ես մահից չեմ վախենում։ Բայց չէի կամենայ և մեռնել, պարոն բժշկապետ, որովհետև ով որ նպատակներ ունի, ով որ գործ ունի կատարելու, կեանքը նորան պէտք է։

Երկար խօսակցութիւնից յետոյ, որ մի առ մի չեմ ուզում յիշել, Ասլանը խնդրեց Հայրիկից, որ ցոյց տայ իւր վանքի հիմնարկութիւնները։

—Մենք ամեն ինչ դեռ նոր ենք սկսում, պարոն բժշկապետ,—ասաց Հայրիկը,—այդ պատճառով մեր հիւրերին ցոյց տալու դեռ մի արժանաւոր բան չունինք։ Մեզ մօտ ամեն ինչ դեռ իւր տղայութեան մէջն է։

—Հէնց այդ հասակից կ'երևայ ապագայ էակը, գոնէ ֆիզիքական կողմից, թէ որքան առողջ է և որքան լաւ է կազմուած։

—Այդ ճշմարիտ է. բայց շատ անգամ ամենաառողջ տղան ևս ջլատվում է, այլանդակվում է վատ դայեակների և խորթ մայրերի ձեռքում։

Մենք դուրս եկանք սենեակից։ Վանքի բակում ոչ ոք չէր երևում, մի զոյգ աղաւնիներ միայն ճեմում էին պարտէզի կանաչազարդ ածուների շուրջը. նրանք ևս, երբ մեզ տեսան, թռան նստեցին բարձր զանգակատան գերանի վրայ։ Ոչ մի վանքում զանգակներն այնպէս հանգիստ չէին, որպէս այստեղ։ Կտուց անապատում նրանք հնչում էին ամեն ժամ, ամեն րոպէ, և հրաւիրում էին «մշտապաշտօն» միաբաններին շարունակելու անընդհատ ժամերգութիւնը։ Իսկ այստեղ մերթ ընդ մերթ լսվում էր դպրոցի զանգակի ձայնը, որ որոշում էր դասամիջոցները։ Աշակերտները խմբով դուրս էին թափվում, և վա-

նական լուռ, խաղաղ պարիսպների մէջ տիրում էր մի կենդանի աղմուկ։ Ոչինչ այնպէս ախորժալի չէր կարող լինել, քան թէ այդ աղմուկը—մանուկ սերունդի սրտի և հոգու ձայնը, որի արձագանքը լսելի է լինում ապագայում...

Հայրիկը տարաւ մեզ նախ գրատունը, որ բաղկացած էր երեք սենեակներից, որոնց դռները բացվում էին միմեանց մէջ։ Երբ մտանք առաջին սենեակը, նա ասաց.

—Այստեղ հաւաքուած են բոլոր տպագրուած գրքերը՝ թէ հայոց և թէ օտար լեզուներով։ Մեր միաբաններից իւրաքանչիւրը կարող է որոշեալ ժամերում մտնել այստեղ և օգուտ քաղել գրքերից։

Սենեակում բաւական լոյս կար. մէջտեղում դրած էր երկար գրասեղան, ծածկած կանաչագոյն մահուդով, իսկ նորա վրայ դարսած էին մի քանի լրագիրներ և ամսագիրներ, որ նոր էին ստացուել։ Սենեակի շուրջը, փայտեայ մեծ պահարանների մէջ, կարգով դասաւորած էին դանազան գրքեր, որ երևում էին ապակիների ետևից։ Դէպի որ կողմը որ նայում էի, աչքի էր ընկնում կարգ, ճաշակ, մաքրութիւն և պարզութիւն։ Այս սենեակը թէ գրատուն և թէ ընթերցարան էր. այստեղից մտանք մի այլ սենեակ, որ ցոյց տալով, ասաց Հայրիկը.

—Այստեղ հաւաքուած են բոլոր գրչագրերը։

Կահաւորութիւնը նոյնն էր, ինչպէս առաջին սենեակում. մէջտեղում կանաչ մահուդով ծածկած սեղան, շուրջանակի՝ փայտեայ մեծ պահարաններ, և ապակիների ետևից երևում էին մեր բազմաշխատ նախնեաց մագաղաթեայ վաստակները։ Սենեակի ճա-

կատին, ոսկեայ շրջանակի մէջ, քարշ էին ընկած Սահակ Պարթևի և Մեսրոպի պատկերները, որոնք տուեցին Հայերին գիր և դպրութիւն մայրենի լեզուով։

Ես ցաւելով մտաբերեցի Կտուց անապատի եկեղեցու մթին և խոնաւ աւանդատունը, որի մէջ փոշու տակ ծածկուած և մի անկիւնում յատակի վրայ թափուած գտանք ամենահազուագիւտ օրինակները նախնի մատենագրութեան։

Ի՜նչ համեմատութիւն այնտեղ և այստեղ...

—Գրքերի ցուցակ ունիք, Հայրիկ,—հարցրեց Ասլանը։

—Ունինք,—պատասխանեց նա, դուրս բերելով մի գիրք, որ պահուած էր պահարաններից մէկում։—Մենք դեռ չենք տպում այս ցուցակը, որովհետև աշխատում ենք հետզհետէ աւելացնել գրչագրերի թիւը։

Ասլանը նստեց գրասեղանի մօտ, սկսեց թերթել ցուցակը։

—Դարձեալ բաւական գրչագրեր ունիք,—ասաց նա։—Դուք մեծ բարերարութիւն արած կը լինիք, Հայրիկ, եթէ աշխատէք այս կողմերի բոլոր վանքերից ազատել գրչագրերը և այստեղ հաւաքել։—Եւ նա պատմեց, թէ իւր այցելութեան ժամանակ Կտուց անապատը՝ ինչ ցաւալի դրութեան մէջ գտաւ այդ վանքի գրքերը։

—Բոլոր վանքերում միևնոյնը կը տեսնէք,—պատասխանեց Հայրիկը։—Բայց եթէ գիտենայիք, թէ օրքան դժուարութիւնների, օրքան անախորժութիւնների եմ հանդիպել, մինչև կարողացել եմ հաւաքել այդ գրքերը։ Մեր վանահայրերն աւելի շու-

տով յօժարվում են, որ իրանց վանքերում գտնուած գրքերը անխնամ գրութեան մէջ փտեն, ոչնչանան, քան թէ տան, որ մի ապահով տեղում պահուեն։ Խակ ռամիկ ժողովուրդը բոլորովին այլ կերպով է վարվում. նա իւր ձեռքն ընկած գրչագիրը տանում է և մեծ երկիւղածութեամբ թաղում է հողի տակ, ինչպէս թաղում է նա իւր սիրելի որդուն։

Եպլանը շարունակում էր թերթել ցուցակը։

— Այդ անում են և եկեղեցականները, — ասաց նա. — ես լսել եմ, թէ ինչպէս մի վանքում կատարել էին մի հանդիսաւոր թաղում բոլոր ցեցակեր գրքերի։

— Ես գիտեմ մի այլ՝ աւելի ցաւալի կորուստ, — ասաց Հայրիկը տխուր ձայնով և պատմեց հետևեալ անցքը.

— Մի անապատում, որ Հայոց ծովակներից մէկի կղզում է գտնվում, յանկարծ միաբանութիւնը լսում է որ Կաթողիկոսը գալիս է վանքը, և որպէս զի Նորին Վեհափառութիւնը վանքի գրքերը իրանց ողորմելի գրութեան մէջ չը տեսնէ, հաւաքում են բոլորը, լցնում են կթոցների մէջ և թափում են ծովը։ Երբ Նորին Վեհափառութեան նաւակը մօտենում է կղզուն, նա նկատում է, որ մագաղաթի թերթիկները ջրի երեսին լողում են։ Ալիքները նրանցից մէկը բերում են և խփում են Վեհափառի նաւակի կողքին։ Նա ձեռքը մեկնում է և վեր է առնում դժբախտ թերթը։ Պատահմամբ դա լինում է Խորենացու գրքի հէնց այն կտորը, որտեղ գրուած է լինում նորա սգաւոր ողբը, որի մէջ նա այնքան դառն կերպով նկարագրում է իւր ժամանակի եկեղեցական-

ների անպիտանութիւնները։ Վեհափառի հանդէպ, նաւակի մէջ, նստած է լինում կղզու վանահայրը, որ դուրս էր եկել ցամաք նորան ընդունելու։ Վեհափառը տալիս է նորան կարդալու սգաւոր ողբի հետևեալ տողերը. «վարդապետք տխմարք» և այլն։

—Այդ պատմութիւնը որքան հետաքրքիր, այնքան և տխուր է,—ասաց Սոլանը։—Բայց ես լսել եմ, որ ձեր կաթողիկոսներից մէկը նոյնպէս ազատ չէ եղել մի այդ տեսակ մեղքից. նա իւր նախորդների յիշատակները ոչնչացնելու համար, այրել է տուել նրանց գործերի բոլոր ատենական թղթերը։ Բայց ես շատ ուրախ եղայ, որ ձեր ցուցակի մէջ գտայ բացի զրքերի անուններից և մի ամբողջ շարք զանազան կոնդակների, զանազան հրովարտակների՝ պարսից և տաճկաց թագաւորներից ստացուած, զանազան պայմանագրերի և հին կալուածագրերի,—այդ բոլորը կարող է առատ նիւթ տալ պատմութեան։

Մատենադարանի մի առանձին պահարանում հաւաքուած էին հայոց ամենահին տպագրութիւնները, որոնք եղել են մի քանի դար առաջ Վենետիկում, Հռոմում, Միլանում, Նոր-Ջուղայում, Ամստերդամում և այլ տեղերում։

Գրչագրերը քննելուց յետոյ, մտանք երրորդ սենեակը, որ աւելի ընդարձակ էր քան առաջինները։

—Այս մեր թանգարանն է,—ասաց Հայրիկը,—բայց դեռ աղքատ թանգարան, որովհետև շատ ժամանակ չէ, որ գոյութիւն ունի։

Զը նայելով որ Հայրիկը խիստ համեստութեամբ էր վերաբերվում դէպի թանգարանը, բայց այդ սենեակը աւելի քան միւսները գրաւեց իմ ուշադրու-

թիւնը։ Ինչ-որ ասէ՝ քո՞ր այնտեղ չը կային։ Ինչ որ միանգամ գտնուել էին Վանայ շրջակայքում կամ նորա աւերակների մէջ, հաւաքել էին այնտեղ։ Մի տեղ, փոքրիկ գզրոցներում, որոնց վերևի երեսները ծածկուած էր ապակիով, դասաւորած էին զանազան հին դրամներ։ Մի տեղ, նոյնպիսի գզրոցներում, կային զանազան կանացի զարդեր, որպիսիք են՝ ականջի օղեր, ապարանջներ, յուլունքներ, և այլն։ Մի այլ տեղ կային հնադարեան զէնքեր, պղնձեայ ծանր վահաններ, սեպաձև արձանագրութիւններով և առասպելական դրոշուածներով զարդարած, նիզակների և նետերի ծայրեր, տապարներ, սաղաւարտների և գրբահների կտորներ,—բոլորը պղնձից։ Այդ բոլոր հնութիւններից իմ ուշադրութիւնը գրաւեցին երկու փոքրիկ արձաններ միայն, որոնցից մէկը պատած էր ոսկով և ներկայացնում էր մի դեռահաս կնոջ։ Նա այնքան գեղեցիկ էր, որ ես պատրաստ էի ծունր իջնել և երկրպագել նորան։ Երբ իմ հոգեզմայլութիւնը յայտնեցի, Հայրիկը ծիծաղելով ասաց.

—Մեզ ևս մի ժամանակ մեղադրում էին այդ մեղքի մէջ։

—Ի՞նչպէս,—հարցրեց Ասլանը։

Հայրիկը պատմեց մի քանի հետաքրքիր անցքեր, թէ ո՞րքան անախորժութիւնների է պատահել թանգարանի պատճառով։ Թանգարանը շինվում է գլխաւորապէս այն նպատակով, որ այնտեղ հետզհետէ հաւաքուեն բոլոր հնութիւնները, որոնք խիստ յաճախ գտնվում են Վանայ շրջակայքում, և ժողովուրդը նրանց նշանակութիւնը չը հասկանալով՝ ոչնչացնում է։ Օրինակ, պատահել էին այսպիսի դէպ-

քեր. մի գիւղացի գտել էր մի մեհեանի երկաթեայ զոհարանի մի մասը, տարել էր մի դարբնի մօտ, կոտրել էր տուել և իւր համար արօրի խոփ էր պատուիրել։ Մի այլ գիւղացի գտել էր Սենեքերիմ թագաւորի փղոսկրեայ գահի առաջին ոտները և խիստ չնչին արժէքով վաճառել էր մի զինագործի, որ գնել էր խէնջարի կոթեր շինելու համար։ Մի քանի տարի առաջ միանգամից գտնվում են այն երկու արձանները, որ մենք տեսանք թանգարանում։ Հայրիկը մեծ դժուարութեամբ կարողանում է ազատել այդ գեղեցիկ հնութիւնները ռամկի մոլեռանդութիւնից. «կուռքեր են» ասելով, ամեն կողմից հաւաքվում են և կամենում են փշրել։ Նրանցից մէկը յայտնի չէր թէ ինչ Աստուածութիւն էր ներկայացնում, իսկ միւսը, այն դեռահաս դիցուհին, որի գիսակների մէջ փայլում էր մի ճաճանչաւոր աստղ,—դա կարծվում էր, թէ պէտք է Վասպուրականի տիկինը՝ Աստղիկը լինի։ Արձանները տեղաւորուած էին թանգարանի այն մասում, ուր աւելի լոյս կար և որտեղ դրած էր մի հին Աստուածամօր պատկեր։ Անցնում են մի քանի օրեր, յանկարծ գայրացած խուժանը յարձակվում է վանքի վրայ, փոքր է մնում, որ կործանէ թանգարանը և ոչնչացնէ ամեն ինչ։ Հայրիկի երկար աղաչանքները հազիւ կարողանում են մեղմացնել խառնիճաղանճի կատաղութիւնը։ Նորա յուզմունքի պատճառն այն է լինում, որ թանգարանը համարում է մի կռքատուն, ուր Աստուածամօր պատկերը դրած է կուռքերի մօտ և նրանց հետ հաւասար պաշտվում է։

—Միամիտ խուժանը կարող էր այդպէս մտածել,—ասաց Հայրիկը իւր պատմութիւնը վերջացնելուց

յետոյ, —բայց ցաւալին այն է, որ նորան զրզռել էին մեր դէմ իմ թշնամի եկեղեցականները։ Ես հաւատացած եմ, որ նրանք այդ արել էին ոչ թէ չարամտութեամբ, ոչ թէ մեր վանքին վնասելու նպատակով, այլ իրանք ևս համոզուած էին, որ մենք վանքումը կուռքեր ենք պաշտում, եթէ ոչ, նրանց կարծիքով, ինչ նպատակ կարող էր ունենալ, որ մենք կուռքերի արձանները վանքն էինք տարել և դրել էինք Աստուածամօր պատկերի մօտ։

— Իսկ եթէ նրանց պատահում է կուռքերի արձաններ գտնել, ինչ են անում, — հարցրեց Սոլանը, աչքերը չը հեռացնելով Աստուածամօր պատկերից, որի մասին էր խօսքը։

— Փշրում են, ոչնչացնում են։

— Իսկ այդ Աստուածամայրը հրաշալի՞ բան է, — ասաց Սոլանը, շարունակելով նայել պատկերի վրայ։ Դա, որպէս երևում է, XV-րդ դարու իտալացի երեւելի նկարիչներից մէկի գործն է։ Բայց ինձ զարմացնում է այն, թէ ինչպէս է պատահել, որ այդ պատկերը յայտնուել է այստեղ։

— Զատ հաւանական է, — ասաց Հայրիկը, — որ բերուած լինի այն ժամանակներում, երբ վանեցի վաճառականները Վենետիկի և Իտալիայի հետ յարաբերութիւններ ունէին։ Բայց գիտէ՞ք որտեղից եմ դուրս բերել այդ պատկերը։

— Ո՞րտեղից։

— Մի կիսաւեր գիւղական եկեղեցիից, որի հայ բնակիչները բոլորովին սպառուել էին և նրանց տեղը քրդեր էին բնակվում։ Այդ վերջինները, գուցէ իրանք ևս հայկական ծագումից լինելով, դեռ պահպանել

էին իրանց հաւատը թէ դէպի եկեղեցին և թէ դէպի նորա սրբութիւնները։

Աստուածամօր պատկերը, որի մասին այնքան հիացած խօսում էին թէ Սալանը և թէ Հայրիկը, ինձ ամենևին չէր գրաւում, գուցէ այն պատճառով, որ ես գեղարուեստի մասին ամենևին գաղափար չունէի։ Ներկերը, որ առաջուց ևս խիստ մռայլ գոյն էին ունեցել, ժամանակների ընթացքում, աւելի և աւելի սևացել էին խնկի և մոմի ծխից։ Մի տեղում մոմը, ինչպէս երևում էր, լուսարարի անհոգութիւնից, ընկած է եղել և այրել է Աստուածամօր գրկում մանուկ Յիսուսի ոտները. մի այլ տեղում կըտաւը պատռած էր։

Հայրիկը ցոյց տուեց մեզ մի այլ հնութիւն, որ, որպէս ասում էր նա, Արծրունեաց իշխանուհի օրիորդներից մէկի ձեռագործն էր, որ նուիրած էր Վարագայ վանքին։ Սեղանի ծածկոց էր այդ գեղեցիկ աշխատութիւնը, որի վրայ օրիորդի ճարտար մատները ստեղծագործել էին զանազան պատկերներ Ս. Գրիգոր Լուսաւորչի չարչարանքներից։

—Շատ անգամ մեր վանքերում կամ եկեղեցիներում պատահում են այնպիսի անօթներ, զգեստներ կամ այլ իրեղէններ, որոնք մաշուած, հնացած և գործածութիւնից ընկած լինելով, այնպէս, իբրև մի անպէտք բան, ձգած են լինում եկեղեցիների խորաններում կամ պահարաններում, և այնտեղ փտում են։ Երբեմն նրանց մէջ գտնվում են այնպիսի հազուագիւտ իրեղէններ, որոնք, իբրև հնութիւն, արհեստի համար մեծ նշանակութիւն ունին,—ասաց Հայրիկը.—մենք հոգ ենք տանում հաւաքելու այդպիսիները։—Եւ նա

ցոյց տուեց մեզ զանազան սաղաւարտներ, վակասներ, շուրջառներ, եպիսկոպոսական կամ վարդապետական գաւազաններ, հնամաշ զորգերի կտորներ, կաթողիկոսական հողաթափներ և այլ իրեղէններ, որոնք ամենահին ժամանակներում բերուել էին Հնդկաստանից, Ճինաստանից, Սպահանից կամ այլ հեռաւոր երկրներից, որտեղ եղել են հայ վաճառականներ:

Յետոյ Հայրիկը ցոյց տուեց իւր դպրոցը, որ գրտնվում էր վանքի շինուածքների մի առանձին բաժնում: Ես մինչև այսօր տեսած էի երկու դպրոցներ միայն, մէկը՝ Տէր-Թոդիկի դպրոցը, այն սարսափելի դժոխքը, որի աշակերտը լինելու դժբախտութիւնն էի ունեցել, միւսը՝ Սիմոն պատուելիի դպրոցը, որ տեսայ Վանայ մէջ, և որ իւր կազմակերպութեամբ շատ չէր զանազանվում առաջինից: Այդ երկու հիմնարկութիւններից մէկը Պարսկաստանի, միւսը Տաճկաստանի հայոց մանկավարժութեան կատարելատիպն էր, և գրեթէ երկուսն էլ սահմանուած էին մանուկներին բթացնելու և թէ բարոյապէս, թէ մտաւորապէս սպանելու համար: Այդ դպրոցներից յետոյ Հայրիկի դպրոցը՝ տարակոյս չը կայ, որ աշխարհի եօթն հրաշալիքներից մէկն էր երևում ինձ: Եւ իրաւ, նա իւր տեսակի մէջ առաջին օրինակն էր այդ երկրում, և զուցէ այդ էր պատճառը, որ իրրև նորութիւն, ենթարկուել էր այնքան հալածանքների: Ես ի հարկէ չէի կարող քննել նորա ներքին, ուսումնական կազմակերպութիւնը, նորա ծրագիրը, ինձ գրաւում էր նորա արտաքինը միայն: Այստեղ առաջին անգամ տեսայ, որ աշակերտները դասաւորած էին կարգով նստարանների վրայ, և ոչ թէ, որպէս Տէր-Թո-

դիկի դպրոցում, խառն ի խուռն նստած էին յատակի վրայ, իրանց տակին փռած ունենալով մի կտոր Հասիր կամ այծի մորթի, որ բերում էին իրանց տներից։ Այստեղ առաջին անգամ տեսայ, որ աշակերտները դասաւորած էին զանազան դասատներում, և իւրաքանչիւր դասատան մէջ վարժապետը պարապում էր բոլորի Հետ միասին։ Բայց Տէր-Թոդիկի դպրոցում, առանց ուշադրութիւն դարձնելու նրանց Հասակի և ուսման աստիճանի վրայ, բոլոր աշակերտներին անխտիր ածել էին մէկ սենեակ, ինչպէս ոչխարներին ածում են մէկ գոմի մէջ, և վարժապետը պարապում էր իւրաքանչիւրի Հետ առանձին-առանձին,—մէկը վայելչագրութեամբ էր զբաղուած, միւսը ընթերցանութեամբ, երրորդը վարժապետի կօշիկներն էր մաքրում, մի խօսքով, որքան աշակերտներ կային, նոյն թուով և բաժանմունքներ կային նոյն դասատան մէջ։ Այստեղ առաջին անգամ տեսայ սև գրատախտակը, որի վրայ կաւիճով էին գրում։ Առաջին անգամ տեսայ, որ աշակերտներին սովորեցնում էին առանց փայտի ու ծեծի։ Այստեղ ֆալախկայ, ճիպոտներ, խրատելու քանոն և դրանց նման պատժական գործիքներ չը կային։

Բոլոր դասատներն այցելելուց յետոյ, Հայրիկը մեզ տարաւ մի դահլիճ, որտեղ ես տեսայ զանազան Հանքային վէմեր, չորացրած միջատներ, գոյնզգոյն թիթեռներ և ամենամանր պղոճներ։ Միևնոյն դահլիճում կային զանազան բոյսեր ու ծաղիկներ, այնպէս լաւ չորացրած, որ բնաւ չէին կորցրել իրանց ձևը կամ գեղեցկութիւնը։ Կային և մի քանի թռչունների պաճուճապատաններ, որոնք ինձ այնպէս

էին թվում, որ կարծես թէ կենդանի լինէին։

—Այդ բոլորը մեր աշակերտների հաւաքածուն է, պարոն բժշկապետ,— ասաց Հայրիկը այնպիսի հրճուանքով, որ կարծես ինքն ևս ուրախանում էր իւր սանների առաջին երախայրիքի վրայ։—Նրանք երբեմն իրանց վարժապետների հետ փոքրիկ արշաւանքներ են կատարում մեր շրջակայ լեռների վրայ, և բնութեան մէջ՝ ծանօթանում են բնութեան հետ։

—Դա յառաջադիմութեան մի մեծ քայլ պէտք է համարել, Հայրիկ,— ասաց Ասլանը,— որ այստեղ փոխանակ աշակերտներին զբաղեցնելու աստուածաբանական մթին խնդիրներով, սովորեցնում են բնական գիտութիւններ։

—Իմ համոզմունքն այն է, պարոն բժշկապետ,— ասաց Հայրիկը,— որ մեր մանուկների կրթութեան հետ պէտք է կապուած լինի և այն նպատակը, որ նրանք բացի լաւ քրիստոնեայ լինելուց, դառնան և լաւ արհեստաւորներ և լաւ հողագործներ։ Մեր ժողովուրդն աղքատ է և սոված, նա հաց է պահանջում, պէտք է ուսումը միջոց տայ նորան իւր ապրուստը հայթհայթելու։ Եւ հէնց այդ նպատակով ես միացրի այս դպրոցի հետ և երկրագործական բաժին, իսկ եթէ կը յաջողի ինձ, ժամանակով կ՚աւելացնեմ և մի արհեստանոց։ Իմ վանքի սրբերը խիստ բարի են և ներողամիտ, նրանք չեն ձանձրանալ սղոցի, խարտոցի և մուրճի ձայնից։—Այս ասելով,—աւելացրեց նա,—իմ նպատակն այն չէ, թէ պէտք է բոլորովին զանց առնել հոգևոր կրթութիւնը, այլ, ընդհակառակն, պէտք է աւելի մեծ հոգ տանել նրա մասին։—Եւ այդ խնդրի վրայ երկար խօսելով, նա

իւր միտքը բացատրում էր նրանով, թէ գաղթականութիւնը դէպի օտար երկրներ, բացի բազմաթիւ կորստաբեր հետևանքներից, տուեց և մի անբուժելի բարոյական հարուած Վասպուրականի ժողովրդին. Հայոց պանդուխտները, օտար երկրներում թափառելով, օտար երկրներից տեղափոխեցին իրանց դեռ կուսական դրութեան մէջ մնացած հայրենիքը՝ բազմատեսակ մոլութիւններ։ Նախնական բարք ու վարքի սրբութիւնը կորաւ, և՛ մարդիկ ընկան ապականութեան մէջ։ Ժողովուրդն այժմ կարօտ է բարոյական մաքրութեան։ Այդ ի հարկէ գլխաւորապէս կրօնի և հոգևոր կրթութեան գործը պէտք է լինի։ Ճշմարիտ կրօնը և նպատակայարմար հոգևոր դաստիարակութիւնը՝ թէ եկեղեցու, թէ դպրոցի և թէ ընտանիքի մէջ, կարող է այդ նպատակին հասցնել, կարող է մեր մանուկներին բարոյական ուղղութիւն տալ։

Վանքի բոլոր ուշադրութեան արժանի հիմնարկութիւնները ցոյց տալուց յետոյ, Հայրիկը մեզ տարաւ իւր սենեակը։ Այստեղ պատրաստուած գտանք մի պարզ նախաճաշիկ։ Սեղանի վրայ նա դեռ շարունակում էր խօսել վանական կրթութեան մասին։

—Ձատերը,—ասում էր նա,—հակառակ են վանական կրթութեան, և կարծում են, թէ վանքի խուլ և առանձնական կամարների տակ, հին նահատակների ու ճգնաւորների պատկերների ազդեցութեան ներքոյ, չեն կարող պատրաստուել աշխարհի համար պիտանի մարդիկ։ Այդ կարծիքը կարելի էր իրաւացի համարել, եթէ հայոց վանքը լինէր այնպիսի մի հիմնարկութիւն, որպէս առհասարակ լինում են վանքերը։—Եւ նա բացատրում էր հայոց

վանքի նշանակութիւնը թէ անցեալում և թէ ներկայում, ցոյց էր տալիս, որ նա երբէք անջատուած չէ եղել ժողովրդից, երբէք չէ ունեցել իւր առանձին շահերը, այլ նրա շահերը միշտ կապուած են եղել ժողովրդի շահերի հետ։ Թէպէտ եղել են բացառութիւններ, որ հիմնուել են կղերական ուղղութեամբ վանքեր, բայց դրանք, խորթ և օտար լինելով հայոց ժողովրդի յատկութիւններին, չեն կարողացել երկար ժամանակ պահպանել իրանց գոյութիւնը։

—Ինչու՞ օգուտ չը քաղել վանքերից,—ասում էր նա.—մեր հայրերը թափեցին այնտեղ իրանց արծաթը, նուիրեցին նրանց ընդարձակ անշարժ կալուածքներ, և այդ հարստութիւնների մեծ մասը դեռ մնացել է։ Առաջ նրանց արդիւնքը ծախսվում էին ուրիշ բարեգործական նպատակների համար, իսկ այժմ կը ծախսենք մեր ժողովրդի զաւակների կրթութեան համար։ Ժողովրդից ստացածը կրկին կը վերադարձնենք ժողովրդին։

—Դուք կարծում էք, Հայրիկ, միայն կրթութիւնը բաւական կը լինի,—հարցրեց Սոյանը։

—Բաւական չի լինի,—պատասխանեց Հայրիկը.—ժողովրդի զաւակներին ուսում տալով և նրանց միջոցներ չը տալով իրանց համար ապրուստ գտնելու, մենք միայն կը պատրաստենք ուսումնական թշուառներ։ Ազքատութիւնը այդ ժամանակ աւելի զգալի է լինում, որովհետև որքան աւելանում է մարդու մտաւոր զարգացումը, այնքան աւելանում են և նրա կենսական պահանջները։ Ռամիկը մի կտոր ցամաք հացով գոհ է մնում, բայց երբ այդ ու բենը մտցրիր նրա գլխում, նա կը հասկանայ, որ միսը

աւելի սնունդ է տալիս։ Եւ սև կը լինի նրա օրը, եթէ միս դոնել չը կարողանայ։

Ես զարմանում էի այդ եկեղեցականի դատողութիւնների վրայ. նա բոլորովին հակառակ էր ասում, ինչ որ խօսում էին միւս եկեղեցականները. նա չէր քարոզում աշխարհի ունայնութիւնը, նա չէր պախարակում կեանքի վայելչութիւնները, պնդելով թէ մարմինը զրկելով, մարդիկ աւելի մօտենում են երկնքին, ուր պէտք է սպասել իսկական երջանկութեան։

—Այո, — աւելացրեց Սալանը, —ուսումը պէտք է լինի միջոց կեանքի իրական պահանջները հայթհայթելու համար։—Ասացէք, խնդրեմ, Հայրիկ, ո՞րն է ձեր կարծիքով ժողովրդի այժմեան ամենաանհրաժեշտ պահանջը, կամ, այլ խօսքով, ինչո՞ւմն է նրա գլխաւոր հիւանդութիւնը, որ շուտափոյթ բժշկութեան կարօտ է։

Կարծես տխրութեան մի ամպ անցաւ Հայրիկի պայծառ դէմքի վրայ, և նրա գոյնը մռայլուեցաւ։

—Մեր ժողովրդի հիւանդութիւնը, —ասաց նա, — այնքան բազմատեսակ է և բաղադրեալ, որ անկարելի է մի քանի խօսքով բացատրել, պարոն բժշկապետ։ Բայց ձեզ, որպէս բժշկի, աւելի հասկանալի պէտք է լինի. երբ հիւանդութիւնները բաղադրեալ են, այդ դէպքում դտնում են ամենագլխաւորը, որ մահ է սպառնում հիւանդի կեանքին, և նրանից են սկսում բժշկութիւնը։

—Այդ իրաւ է։ Բայց ո՞րն է գլխաւոր հիւանդութիւնը։

—Իմ կարծիքով—գաղթականութիւնը։

Եւ նա սկսեց երկար խօսել այդ առարկայի վրայ.

բացատրելով այն միտքը, թէ հային պէտք է հնար տալ, որ կարողանայ ապահովել իւր ապրուստը հայրենի հողի վրայ, և ստիպուած չը լինի օտար երկրներում հաց որոնել:

—Ես հասկանում եմ, երբ եւրոպացին գաղթում է,—ասաց նա.—նրա երկիրն այնքան նեղ է, մարդիկն այնքան բազմացել են, որ հողը չէ բաւականանում: Իսկ մեզ մօտ՝ հողն ընդարձակ է, բայց մարդիկ նրանից օգուտ քաղել չեն կարողանում:

—Ուրեմն ինչից է յառաջ գալիս գաղթականութիւնը:

—Շատ և շատ պատճառներից.—նրանից, որ երկրագործութիւնը դեռ իւր նահապետական դրութեան մէջն է, նրանից, որ ժողովրդի արդիւնաբերող մասը, մշակը, կողոպտվում է զանազան հարստահարողներից, նրանից, որ ճանապարհների հաղորդակցութիւնները վատ են և երկրի բերքը չէ արտահանվում, նրանից, որ մենք չունինք ոչ մի ընկերութիւն, ոչ մի հիմնարկութիւն, որ նպաստէր երկրի տնտեսական դրութիւնը բարւոքելու...—Ո՞ր մէկն ասեմ:

—Դուք կարծում էք, այժմեան հանգամանքների մէջ՝ հնար կա՞յ բարւոքելու...:

Խօսակցութիւնն անցաւ այն առարկայի վրայ, թէ արդեօք կարելի է մի այնպիսի երկրում, ուր տիրող կառավարութիւնը, փոխանակ նպաստելու, ինքն է արգելք դնում ամեն յառաջադիմութեան, ուր մահմեդական ցեղերի կամայականութիւնը չափ և սահման չունի, ուր մարդու կեանքը, կայքը, ամեն բոլէ վտանգի ենթակայ էր,—մի այդպիսի երկրում կարո՞ղ է հայը անձնատուր լինել խաղաղ

աշխատութեան և տնօրինել իւր կեանքի բարին։

Հայրիկն ասաց.

— Մեզ շրջապատող աննպաստ հանգամանքների մէջ, իրաւ է, մեր ժողովուրդը չէ կարող իրան նուիրել խաղաղ աշխատութեան, և այդ պէտք է դլխաւոր պատճառներից մէկը համարել, որ շատերը դուրս են փախչում հայրենիքից, գնում են օտար երկրներում բախտ որոնելու։ Բայց խօ բոլոր յանցանքը չէ կարելի դնել միայն չարաղործի վրայ, որ կողոպտում է, յափշտակում է ուրիշի աշխատութեան արդիւնքը։ Նոյնքան յանցաւոր պէտք է համարել և նրան, որ թոյլ է տալիս իրան կողոպտել։ Ես հաւատացած եմ, որ քուրդ աւազակը երբէք չի մօտենայ հայի ոչխարների հօտին, եթէ գիտենայ, որ կը հանդիպի տիրոջը—հրացանը ձեռին։

— Ես էլ այդպէս եմ կարծում,—ասաց Նոյանը։— Բայց ինչու հոգևորականութիւնը, որ կարող էր աւելի ազդել, չէ քարոզում հայերին փոքր ի շատէ անձնապաշտպանութեան սովորել։ Արևելքում կրօնը և հոգեւորականութիւնը միշտ դեր են խաղացել ամեն մի հասարակական շարժումների ժամանակ, և պիտի խաղան։

Հայրիկի դէմքը դարձեալ մռայլուեցաւ։

— Ես իմ պաշտօնակիցներից այդ չեմ սպասում,— ասաց նա,— որ նրանք քարոզէին ժողովրդին անձնապաշտպանութեան սովորել. ես նրանցից շատ գոհ կը լինէի, եթէ ստրկութեան չը սովորեցնէին։ Նրանք ամեն հոգսեր կառավարութեան վրայ են դնում։ Կառավարութեան գործն է, ասում են, հսկել կարգի և ժողովրդի հանգստութեան վրայ։ Իսկ երբ ինքը՝ կառավարութիւնը թոյլ է, անկարգ է, այլևս ինչպէս

կարող է կարգ պահպանել։ — Նրանք այդ չեն մտածում, և միշտ սպասում են, որ մի օր ամեն բան ինքնիրան կը լաւանայ...։

Յետոյ Հայրիկը մեծ ցաւակցութեամբ սկսեց խօսել այն երկպառակութեան վրայ, որի պատճառով ամբողջ տասնեակ տարիներ Վանայ Հայ Հասարակութիւնը ալեկոծութեան մէջ է գտնվում, և որ այնքան աղէտաւոր չարիքների առիթ եղաւ։ Ժողովուրդը երկու կուսակցութեան էր բաժանուած. մէկի պարագլուխն էր տեղային Հոգևոր առաջնորդը մի քանի հարուստ ազաների և դաւաճան էֆէնդիների հետ, որոնք կառավարութեան պաշտօնների մէջ էին գտնվում, — իսկ միւս կուսակցութեան պարագլուխը նորահաս երիտասարդութեան մի խումբ էր, որոնց թուին պատկանում էր և Հայրիկը։ Մի կողմում ոյժ, հարստութիւն և իշխանութիւն, միւս կողմում — եռանդ, բարի ցանկութիւններ և տկարութիւն։ Մէկը անկարգ կառավարութեան կողմն էր, իսկ միւսը — նեղուած հարստահարուած ժողովրդի։ Մէկը պահանջում էր կուրութիւն և անպայման հնազանդութիւն, իսկ միւսը բողոքում էր կատարուող անիրաւութիւնների դէմ։ — Այդ բոլորը լսելուց յետոյ ես այն ժամանակ միայն աւելի պարզ հասկացայ, թէ ինչն էր գրդել Հոգևոր առաջնորդին և նորա կուսակից էֆէնդիներին՝ դաւադրութիւն դրած դնել Հայրիկի կեանքի դէմ։ Եւ այդ բոլորը պատմում էր նա հանդարտ և հանդիստ կերպով, առանց վրդովուելու և առանց բարկութեան։ Ատելութեան մի նշոյլ անգամ չէր նկատվում նրա խաղաղ դէմքի վրայ։ Բայց նրա սառնասրտութիւնն առաջ էր գալիս ոչ թէ անտարբերու-

թիւնից, այլ նրա մեծահոգութիւնից և բարձր առաքինութիւնից, որով ներողամտութեամբ էր վերաբերվում դէպի իւր թշնամիների չարութիւնները։ Բայց միևնոյն ժամանակ չէր կարելի չը նկատել նրա խօսքերի ու ձայնի մէջ մի ցաւ, մի դառն և խորին ցաւ, որ թագնուած էր նրա սրտում, թէ ինչու այդպէս պէտք է լինէր, թէ այդ անհամաձայնութիւնը, այդ երկպառակութիւնները, այդ ներքին կռիւը՝ որքան ջլատում էին նրանց ուժերը, որքան ժամանակ էին խլում նրանցից, երբ կարող էին աւելի օգտաւէտ, աւելի նպատակայարմար գործերով զբաղուած լինել։

— Ահա այդպէս է լինում,—շարունակեց նա,— երբ հոգևորականութիւնը չէ հասկանում, կամ չէ ցանկանում հասկանալ իւր իսկական կոչումը, թէ ինքը Քրիստոսի եկեղեցու, այսինքն հաւատացեալ ժողովրդի, սպասաւորն է և նրանից ընտրուած մի պաշտօնեայ, թէ իւր բոլոր գործունէութիւնը պէտք է նուիրուած լինի նոյն եկեղեցու սպասաւորութեանը և բարեկարգութեանը. այդ դէպքում նա շեղվում է ուղիղ ճանապարհից և ընկնում է մոլորութիւնների մէջ։ Նա ծառայից դառնում է տէր, սկսում է իշխել և ծառայեցնել, ի հարկէ ծառայեցնել իւր շահերի համար։ Այդ ժամանակ նա միանում է ժարմնաւոր իշխանութեան հետ, որ իրան նոյնպէս տէր է համարում, և նրա կողմն է բռնում։ Եւ որքան անկարգ լինի այդ իշխանութիւնը, այնքան աւելի նրա սպասաւոր է նրա համար։—Ուրեմն այլ ևս ինչու ենք զարմանում, որ մեր քաղաքի հոգևոր առաջնորդը միացած է նահանգապետ փաշայի հետ և ինքն էլ մի կողմից է կեղեքում խեղճ ժողովրդին...։

— Ես փաշայի հետ տեսնուեցայ, — ասաց Ասլանը, — նա չափազանց խորամանկ մարդ երևաց ինձ։

— Եւ խաբեբայ մարդ, — աւելացրեց Հայրիկը, — մինչպէս ամեն թուրք պաշտօնակալ։

Երեկոյեան պահուն, երբ օդը փոքր ինչ զովացաւ, Հայրիկը մեզ տարաւ և երկար ման էր ածում իւր վանքի շրջակայքում։ Մեծ բաւականութեամբ ցոյց էր տալիս նա այն բոլորը, ինչ որ արել էր, և ինչ որ դիտաւորութիւն ունէր անելու։ Այդ եռանդոտ մարդը այն տպաւորութիւնն էր գործում ինձ վրայ, որպէս մի լաւ հողագործ, որին ծանօթ են իւր ագարակի բոլոր բոյսերը, բոլոր տունկերը, և որ գիտէ նրանց բնաւորութիւնը, ուսումնասիրել է նրանց կեանքը, և որ այնքան սիրում է նրանց, որպէս մի քնքուշ տիկին սիրում է իւր ձեռքով ցանած և իւր ձեռքով հասցրած ծաղիկները։ Նա ցոյց էր տալիս այս և այն դաշտերը, ասելով, ահա այնտեղ սկսել են տորոնի մշակութիւնը, այդ առաջին փորձն է մեր կողմերում, որ մեծ արդիւնք է խոստանում, — ահա այնտեղ թթենիներ են տնկած, դիտաւորութիւն ունինք շերամապահութիւնը փորձել։ Խօսում էր գետնախնձորի մշակութեան մասին, ասելով՝

— Գիտէք, պարոն բժշկապետ, մի քանի տարի առաջ գետնախնձորն այստեղ բոլորովին անծանօթ էր. մեր վանքը առաջինն եղաւ, որ սկսեց մշակել և մինչև այսօր մեծ դժուարութիւններ է կրում գիւղերում տարածելու։ Մեր տէր-տէրները դեռ ևս չեն լուծել այն հարցը, թէ արդեօք գետնախնձորը կարելի է ուտել պահոց օրերում։

Ասլանը ժպտաց։

—Զատերն ինձ մեղադրում են, — շարունակեց նա, թէ ինչու վանքում ես հիմնեցի երկրագործական դպրոց, թէ մի այդպիսի հիմնարկութիւն բոլորովին հակառակ է վանքի նշանակութեանը և այլն: Ասացէք, խնդրեմ, պարոն բժշկապետ, ով արդեօք՝ աւելի քան վանականը, պէտք է ծանօթ լինի երկրի ու նրա մշակութեան գործի հետ: Վանքը լոկ աղօթատեղի չէ, նա ունի ընդարձակ տնտեսութիւն, որ կանոնաւոր կերպով կառավարելու համար պէտք է երկրագործական մեծ հմտութիւններ ունենալ: Կարդացէք մեր վանքերի պատերի վրայ քանդակած արձանագրութիւնները և դուք կը տեսնէք, որ սկսեալ մեր հին թագաւորներից, իշխաններից և իշխանուհիներից, մինչև մեր ժամանակների բարեպաշտները, ընծայել են մեր վանքերին ամբողջ գիւղեր, ագարակներ, ընդարձակ անտառներ, այգիներ և այլն,—այնպէս որ վանքերը մեր կողմերում, և առհասարակ Հայաստանի մէջ, ամենահարուստ կալուածատէրերն են:— Վանականներն ինչպէս կարող են կառավարել այդ կալուածները, եթէ ծանօթ չեն գիւղատնտեսութեան հետ: Ամենաբարեխիղճ կապալառուն անգամ կարող է խաբել նրանց: Բացի դրանից, իրանց անընդունակութեամբ միշտ կարող են վատնել կալուածները, ինչպէս շատ վանքերինը վատնուած է:

Ասլանը, որ բոլոր ժամանակը ուշադրութեամբ լսում էր, հարցրեց.

—Դուք որևիցէ վտանգ չէ՞ք նախատեսնում, Հայրիկ, երբ վանականները իրանց կալուածական հարստութեան հետ՝ կը ստանան և՛ կրթութիւն, և՛ ուսում:

—Ի՞նչ վտանգ կարելի է սպասել կրթութիւ-

նից,—հարցրեց Հայրիկը, ոչ սակաւ զարմանալով։

—Այն վանքը, որ կոչվում է «կղերականութիւն»։ Մինչև այսօր մեր վանականները անզօր և անվնաս էին, որովհետև անկիրթ էին, բայց կրթուելով, նրանք ոյժ կը ստանան, կ'աշխատեն իշխել ժողովրդի վրայ և հարստահարել նրան։

—Այդ հաղիւ կարող է պատահել մեր մէջ,—պատասխանեց Հայրիկը։ «Կղերականութիւնը» հակառակ է մեր եկեղեցու ոգուն, որ կատարեալ ժողովրդական բնաւորութիւն ունի։ Եւ եթէ վանականները կրթուելով՝ կարող են բռնանալ ժողովրդի վրայ և հարստահարել նրան,—չէ՞ որ, որքան կը կրթուին վանականները, նոյնչափով և զուցէ էլ աւելի կը կրթուի ժողովուրդը, և այսպիսով ուժերի հաւասարութիւն կը պահպանուի, և մէկը միւսին չէ կարող ճնշել։ Հոգևորականութիւնը այն ժամանակ միայն սկըսում է վտանգաւոր դառնալ, երբ իւր զարգացման աստիճանով շատ բարձր է լինում ժողովրդից։

Սոլանը չը կամեցաւ այդ հարցի մասին երկար խօսել, որովհետև շատ վիճելի էր։ Արեգակն արդէն սկսել էր խոնարհուել դէպի իւր մուտքը։ Հայրիկը չէր շտապում վերադառնալ գրօսանքից, և ինչպէս երևում էր, նա դիտաւորութիւն ունէր այն գիշեր պահել մեզ վանքում։ Բայց Սոլանը շնորհակալութեամբ հրաժարուեցաւ, ասելով, որ քաղաքում հարկաւոր գործ ունի, և չէ կարող մնալ։ Երբ վերադարձանք վանքը, Սոլանն ինձ պատուիրեց, որ իսկոյն ձիաները պատրաստել տամ։ Ես գնացի դէպի ախոռատունը, իսկ նրան թողեցի Հայրիկի հետ միայնակ։

ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

Մկրտիչ վարդապետ Խրիմեանը *) արդէն ծանօթ է ազգին, «Աւետեաց երկրի» և «Արարատեան» հրաւիրակներով **). այլ և 1845 թուին Կ. Պոլսում հրատարակած ամսատետրակներով։ Այս հայրենասէր հոգին եռանդոտ ազգասիրութեամբ վառուած 1857 թուականին Վարագայ վանքում Վանայ քաղաքին մօտիկ, հաստատեց մի տպարան ու դպրոց, որ նոյնպէս ծանօթ է «Արծիւ Վասպուրականի» ամսականն տետրակներից։ Անցեալ տարի հանապարհորդելով այդ կողմերում և հանդիպելով սրբակրօն հօրը, ոչ մի անձնում չէի տեսած ազգասիրական հոգին այնպէս կենդանի, որպէս այդ արժանապատիւ կրօնաւորի մէջ։

---

*) Խրիմեանը ծնուել է 1820 թ. ապրիլի 4-ին։

**) Հայրիկը բացի հրաւիրակներից (որոնցից «Հրաւիրակ Արարատեանը» հրատարակուեց բ. տպագրութեամբ 1876 թ. յաւելուածով և «Հրաւիրակ Աւետեաց երկրի» հրատարակուեցաւ անցեալ տարի բարեփոխուած և սրբագրուած), ունի և այլ աշխատութիւններ, ինչպէս «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամուէլ», «Յիսուսի վերջին շաբաթը», «Մարգարիտ արքայութեան», «Ճառ խաչի», «Վանգոյժ», «Հայգոյժ» և «Պապականութեան դէմ», իսկ ձեռագիր աշխատութիւններից «Պապիկ և թոռնիկ»։

Ծան. Հրատ.

Մի կողմից թշնամիների ահագին բազմութիւնը, միւս կողմից արծաթի պակասութիւնը չէին կարողացել հատանել նրա յոյսը, շիջուցանել նրա ազգասիրութեան կրակը։ Խեղճը ամենայն հալածանք, ամենայն թշնամութիւնք, մինչև անգամ մահ յանձն էր առած՝ իւր իղձը կատար հասուցանելու համար. այնտեղ միտքս եկաւ մի հայրենասէրի ազգու երգ.

—«Հուրբն սիրոյ իմոյ ազգի
Միշտ ի խարոյկ սրբտիս վառի,
Ջուրբք արտասուաց ոչ շիջանի.
Օգնեա՛, Յիսուս, Փրկիչ բարի»։

1858 թ.

Կ. ՊՕԼՍԻ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ (ԽՐԻՄԵԱՆԻ) ՀՐԱԺԱՐՈՒՄԸ
(1873 թ.)

Ֆրանսիական կրթութեան վայրիվերոյ ազդեցութիւնը յայտնվում է պօլսեցու կեանքի ամեն մի երևոյթի մէջ, միայն այն զանազանութեամբ, որ այնտեղ ամբոխի կուսակցութիւնները, նրանց շարժումները, խռովութիւնները և յեղափոխական ցոյցերը՝ մեծ մասամբ լինում են նպատակաւոր, ծառայում են ընդհանուրի օգտին և նրա ազատութեանը, իսկ Կ. Պօլսում՝—միայն մի քանի էֆէնդի աղաների չար կրքերին։

Այդպիսի հանգամանքներում խառնիճաղանճ ամբոխը բոլորովին անդիտակցաբար առանց մի բան հասկանալու, թեքվում է երբեմն այս, երբեմն այն կուսակցութեան կողմը և շարժվում է նրանց պարագլուխների ձեռքում որպէս մի կրաւորական մեքենայ։

Կ. Պօլսի վերջին պարբերական թերթերը զբաղուած էին Սր. Պատրիարգի հրաժարման հարցով։ Նախ քան խօսելը այդ խնդրի մասին, մի թեթև հայեացք ձգենք Տաճկաստանի հայոց սահմանադրական վարչութեան կազմակերպութեան և նրա գործադրութեան ձևերի վրայ։ Սահմանադրութիւնը Կ. Պօլսի մէջ ունի զանազան ժողովներ՝— Խառն, Թաղական, Կրօնական, Քաղաքական և այլն,

և Ընդհանուր ազգային ժողով։ Վերջինը, եթէ կարելի է այսպէս կոչել, հանդիսանում է որպէս բարձր կենդրոնական կայարան ընդհանուր տաճկարնակ հայերի գործերին։

Երևակայեցէք, սահմանադրական վարչութեան գործադրութիւնը դեռ չէ անցել Բօսֆորից։ Գաւառները դեռ զուրկ են իրանց յատուկ ժողովներն ունենալուց, նրանց գործերը՝ բոլորովին անմշակ և առանց տեղային դատարաններում քննուելու՝ պէտք է Կ. Պոլիս դան և այնտեղի ժողովների քննութեանը ներկայանան։ Երդեօք ինչ փաստերով և ինչ ապացոյցներով Կ. Պոլսի ժողովները կարող էին քննել և իրանց վճռահատութիւնը տալ, օրինակի համար, Վանի, Մուշի, Պրուսսայի մէջ պատահած մի անցքի։ Գործը ձգձգվում է տարիներով, դատախազների և դատարանի կողմից բացվում են անընդհատ գրագրութիւններ, մինչև, որպէս յաճախ պատահում է, դատախազները անձամբ ստիպվում են Կ. Պոլիս դիմել և ամիսներով իրանց վիճմունքների վճռին սպասել։

Մի այդպիսի վարչութեան ձևը ոչ միայն անկարելի է դտնել քաղաքակրթուած պետութիւններում, այլ և վայրենի ազգերի մէջ անգամ նրա օրինակը հազուագիւտ է։ Որովհետև Կ. Պոլսի Քաղաքական ժողովը երբէք չէ կարող, և անկարելի է որ կարողանայ, Տաճկաստանի աւելի քան երեք միլիոն Հայ ժողովրդի պէտքերը հոգալ և նրանց պահանջմանցը լրացուցիչ բաւականութիւն տալ, երբոր նա՝ նոյն իսկ Կ. Պոլսի մէջ պատահած գործերը քննելու և վճռելու անձեռնհաս է։

Յիշեալ հանգամանքներն աչքի առաջ ունենա-

լով Սր. Պատրիարգը առաջարկում է Քաղաքական ժողովին կազմել երկու մասնաժողովներ, մինը՝ տեղական գործոց համար, միւսը՝ գաւառական գործոց համար, որպէս զի նրանք թեթեւացնեն տարիներով վէր թափուած գործերը։

Այդ պատճառով Սր. Պատրիարգը ներկայացնում է մի ծրագիր Քաղաքական ժողովի քննութեանը, որի մէջ բացատրում է նա, թէ Սահմանադրութեան արդի օրէնքները և նրանց գործադրութեան ձևերը անհամապատասխան են հայ հասարակութեան ներկայ պիտոյքներին, և խնդրում է նորից վերաքննել Սահմանադրութիւնը, լրացնել նրա թերութիւնները, և ընդհանուր թուրքաբնակ հայերի պահանջմանցը յարմարաւոր կացուցանել։

Քաղաքական ժողովը ոչ միայն ուշադրութիւն չէ դարձնում Սր. Պատրիարգի մի այդպիսի առաջարկութեան վրայ, այլ արժան էլ չէ տեսնում Ընդհանուր ժողովին ներկայացնել։ Այստեղից ծագում են երկպառակութեան պատճառները Սր. Պատրիարգի և Քաղաքական ժողովի մէջ, որ հետզհետէ աւելի ծանր հետևանքների հասնելով, Խրիմեանը ստիպուած է լինում թողնել պատրիարքական աթոռը և իւր հրաժարականը տալ։

«Փասիսի» 1873 թ. 1419 համարում կարդալով այդ հրաժարականի գրաւոր պատճէնը, որ մատուցել է Խրիմեանը երեսփոխանական ժողովին,—մի ցաւալի տպաւորութիւն է թողնում ընթերցողի վրայ, թէ ինչ անպիտան դրութեան մէջ է Սահմանադրութիւնը Կ. Պոլսում, և որպիսի անզարգացած և չարանախանձ անձինքներից է բախկանում նրա վար-

ջութիւնը։ Օրինակի համար՝ Քաղաքական ժողովի անդամները յայտնում են, թէ Սահմանադրութիւնը ամենևին վերաքննութեան կամ փոփոխութեան կարօտութիւն չունի, և համարում են Խրիմեանին հակասահմանադրական, որ պահանջելով այդ փոփոխութիւնները մեղանչում է Սահմանադրութեան սրբազնութեանը դէմ... Զարմանալի՜ յետադէմ միտք, որ մեր դարում բոլորովին հիւանդոտ ուղեղների ցնորք համարելու է։ Մի ժողովուրդ, որ կառավարվում է անփոփոխ օրէնքներով, նա կը մնայ անփոփոխ անշարժութեան մէջ։

Այդ վէճերը քննելու համար կազմուած երեսփոխանական ժողովը բոլորովին իրաւացի է համարում Խրիմեանի հրաժարմանն առնթ եղող պատճառները, և նրա բացատրութիւնները յարգելով, նորից հրաւիրում է պատրիարգական աթոռն ընդունելու։ Սրբազան Հայրիկն ընդունում է այդ առաջարկութիւնը։

Վերջացնում ենք մեր խօսքը նրանով, որ Կ. Պոլսի Սահմանադրութիւնը երբէք հասնել չէ կարող իւր նպատակին, քանի որ նա Կ. Պոլսի մէջ է միայն կենդրոնանում, քանի որ չեն աշխատելու նրան հանրային դրութեան վերածել և բոլոր տաճկաբնակ հայերի համար նրա գործադրութիւնը կարևոր կացուցանել։

1873 Թ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ. ՊՕԼՍԻ ՄԷՋ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԸ

(Խրիմեանի առիթով)։

Ամեն մի հասարակութեան մէջ զանազան կուսակցութիւնները, ժողովրդական շարժումները և նրանց յուզմունքը, նոյն հասարակութեան կենդանութեան արտայայտութիւններն են։ Ինչ հասարակութեան մէջ չեն երևում դրանք, այնտեղ տիրում է մեռելային անշարժութիւն, աւելի պարզ ասած, այնտեղ կեանք չը կայ։

Ազգային մամուլը,—պարբերական հրատարակութիւնները,—թարգմաններ են ժողովրդի պահանջների և նրանց պիտոյքների։ Նրանք քննում են ամեն մի հասարակական երևոյթ և իրանց համոզմունքին յարմար ուղղութիւն են տալիս նրանց ընթացքին։ Եւ հետևաբար նրանցից ամեն մինը դառնում որևիցէ կուսակցութեան օրգան։

Այդ լինում է ամեն քաղաքակրթուած ազգերի մէջ։

Կ. Պօլսի Սր. Պատրիարգի և Քաղաքական ժողովի մէջ տեղի ունեցած երկպառակութիւնները պատճառ եղան, թէ առաջինին և թէ վերջինին հրաժարուել իրանց պաշտօնից։ Այդ դէպքը առիթ տրուեց երկու կուսակցութեան բաժանմանը, որոնց մինը՝

— եթէ թոյլ կը տրուի մեզ այսպէս կոչել՝—Խրիմեանական, միւսը՝ Հակախրիմեանական։

Այդ երկու կուսակցութիւններն ունեցան իրանց կողմնակիցները, ոչ միայն էֆէնդիներից, այլ և կաշառուած մշեցի համալներից և ջրբերներից... Եւ տեղային լրագրներից երկուսը նրանց օրգաններ հանդիսացան, «Մասիսը՝» խրիմեանականներին, իսկ «Օրագիրը՝» հակախրիմեականներին։

Մենք աւելորդ չենք համարում ուշադրութիւն դարձնել այդ երկու լրագրի մէջ ծագած բանակռուի այն կէտերի վրայ, ուր թողնելով քննելի առարկան, անցնում են անձնականութեան, աշխատելով մինը միւսի պատուին մուր քսել։ Միայն կ՝ասենք այսքանը, որ Հայոց լեզուն, իբրև ասիական լեզու, դժբախտաբար այնքան լի և հարուստ է հայհոյական բառերով, որ ծանր բանակռիւի մէջ նրանց գործիք ընտրողը երբէք չէ կարող հասնել մի օգտաւէտ հետևանքի և նրանց պօլեմիկային վերջ չի լինիլ։

Անցնենք բանակռիւի բուն նիւթին։

Այդ մասին Կ. Պոլսի լրագրութիւնը, այնքան անորոշ և աննշան նիւթեր է հաղորդում, որ ընթերցողը դժուարութեամբ է կարողանում հասկանալ, թէ ինչ առարկայի վրայ է բանակռիւը։ Մենք կարդում ենք նրանց յօդուածների մէջ դատարկ խօսքեր շատ, բայց միտք, լոգիկա և եզրակացութիւններ՝ ոչ երբէք։ Որովհետև վիճաբանութեան բուն առարկան խեղդվում է կրքերից և ատելութիւնից դուրս վիժած հայհոյեանքների և լուտանքների մէջ։ Իսկ թէ պօլեմիկոսին յաջողուել էր արձակել դէպի իւր հակառակորդը մի քանի կոշտ սրախօսութիւն-

ներ, նա արդէն յաղթութեան մրցանակը տարած է համարում։

Վերջապէս այդ Տաճկաստանի հայ լրագրութեան ողորմելի յատկանիշն է, քանի որ նրանք չեն սովորել առողջ դատողութիւնը։

Խրիմեանը, հիմնուելով իւր չորս տարուայ պատրիարգութեան փորձերի վրայ, տեսնում է, որ Սահմանադրութեան արդի կանոնադրութիւնները և նրանց վարչական ձևի գործադրութիւնը, անդոհացուցիչ է ազգի այժմեան պիտոյքներին, և պահանջում է նորից վերաքննել Սահմանադրութիւնը և լրացնել նրա թերութիւնները։ Իւր մի այդպիսի առաջարկութիւնը ապացուցանելու համար նա բերում է ԺԳ. յօդուածով զանազան խնդիրներ, որոնց Սահմանադրութիւնն իւր տասն և երեք տարուայ ընթացքում՝ չէ կարողացել որևիցէ հոդ տանել։ Եւ դրա պատճառը Խրիմեանը դտնում է նոյն իսկ Սահմանադրութեան թերութիւնների մէջ։

Ահա այն խնդիրները, որ մենք քաղում ենք «Մասիսի» 1419 համարից։

«Ա. Ազգային վարչութիւնն իրապէս կենդրոնական և հանրային դրութեան վերածել և Կ. Պոլսոյ համար առանձին տեղական վարչութիւն մը կազմել։

«Բ. Ազգային պաշտօնէութեան բարեխնամ Կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւնն օգտակար դրութեան և աւելի օրինաւորութեան վերածել։

«Գ. Սահմանադրութեան ընտրողական օգտակար սկզբունքը չարաչար չը գործածելու համար՝ ապահով և կարևոր եղանակ որոշել։

«Դ. Ազգային տուրքը կանոնաւորել և ընդհանրացնել։

«Է. Ազգային պաշտօնէութեան համարատուութիւնն ու համարառուութիւնը պարտաւորիչ եղանակի մը մէջ դնել։

Զ. Եկեղեցականաց ներկայ անկերպարան վիճակն և ընթացքը կերպաւորել և կանոնաւորել, համաձայն Հայաստանեայց առաքելական Եկեղեցւոյ նախնի ոգւոյն օրինաց և ուղղութիւն։

«Ի. Առաջնորդական պաշտօնավարութեան և համարատուութեան օրինաւոր և անխուսափելի եղանակ սահմանել։

«Ը. Ազգային Վանօրէից և Եկեղեցեաց կալուածներն ու եկամուտներն ապահովել և Ազգի բարոյական օգտին ծառայեցնել։

«Թ. Հայաստանեաց Եկեղեցւոյ անկախութիւնը հաստատուն պահելու և քրիստոնէական ճշմարիտ գիտութեան լոյսն Ազգին մէջ ծաւալելու համար՝ ամեն կարեւոր միջոցներ ձեռք առնել, և ջանալ Ազգին մէջ պատահած կրօնափոխութեան առաջքն առնուլ։

«Ժ. Ազգին մէջ ուսումն և գիտութիւն ծաւալելու համար նոր և ազգու միջոցներ ձեռք առնուլ։

«ԺԱ. Ազգային դաստիարակութեան համար դրամագլուխ հաստատել։

«ԺԲ. Նախակրթական ուսումն ընդհանրացուցնելու դիւրութիւններ գտնել և քանի մի կրօնական բարձր ուսումնարաններ բանալ։

«ԺԳ. Հայոց ազգային ընտանեկան կեանքն՝ այն է ամուսնական և բարոյական կապերն՝ ամրապնդել.

գեղծումները բառնալ, պանդխտութեան առաջքն առնուլ, և Ազգը մի հանրական ընտանիք կազմելու դրութեան վերածել։ Ներքին և արտաքին հարստահարութիւնները բառնալու համար Բարեխնամ Տէրութենէն աւելի զօրաւոր միջոցներ խնդրել, գաղթականութիւնն արգելել, ազգային անհատական իրաւունքները պաշտպանել, որով և ազգի ամրողջութիւնն ապահովել»։

Այդ խնդիրները, որ Ազգի կեանքի և մահուան խնդիրներն են, եթէ Սահմանադրութիւնը մինչև այսօր չէ կարողացել զոնեա մասամբ իրագործել, կը նշանակէ, որ նրա թէ կանոնադրութիւնները և թէ վարչութիւնը չունի իւր մէջ այն զօրութիւնը, որով կարողանար հոգալ հասարակութեան պիտոյքները։ —Ուրեմն Խրիմեանի ենթադրութիւնը Սահմանադրութեան վերաքննութեան և նորա կատարելագործութեան մասին բոլորովին իրաւացի է։

Սահմանադրութեան կանոնները աստուածադրոշմ պատգամներ չեն, որոնք տևէին մինչև դարերի վերջը։ Նրանք կարող են այնքան փոխուել, որքան փոխվում են հասարակութեան պահանջները։ Որովհետև ժողովրդի կեանքն է ծնեցնում օրէնքները և ոչ թէ օրէնքներն ծնեցնում են նրա կեանքը։

Բայց Քաղաքական ժողովը, փոխանակ քննելու թէ մինչև որ աստիճան իրաւացի էր Խրիմեանի առաջարկութիւնը, բաւականանում է մի լոկ զրպարտութեան բառով՝ «Խրիմեանը հ ա կ ա ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն է» և հաշվում է մի քանի գեղծումներ, որ նա իբր թէ արել է իւր կառավարութեան մէջ։

Ա. Վանայ Պօղոս վարդապետին՝ առանց Կրո-

նական և Քաղաքական ժողովի գիտութեանը՝ աքսորելը։ Բ. Ս. Երուսաղէմի խնդրի մասին ինքնագլուխ հեռագիր քաշելը։ Գ. Կիլիկիոյ Կաթողիկոսին աւելի իրաւասութեան արտօնութիւն տալը, քան գաւառական Առաջնորդներին։ Դ. Սր. Պատրիարքի՝ իւր ամսականին վերաբերեալ Քաղաքական ժողովոյ որոշման թուղթը պատռելը։ Ե. Քաղ. ժողովի Հակառակ մուքաթայ հաւաքելը։ Զ. Քաղաքական ժողովի որոշման հակառակ՝ Մշոյ Ս. Կարապետի վանուց մուքաթայի պարտքի մասին գիր գրելու արգելքը։ Է. Բալուի Առաջնորդին՝ Խառն ժողովոյ որոշմանը հակառակ պաշտօնագիր գրելը։ Ը. Դատը գիւղի խնդիրը։ Թ. Բարձ. Դրան նախարարաց հետ պաշտօնական այցելութիւնների խնդիրը։ Ժ. Ս. Պատրիարքի ամսականի խնդիրը։ ԺԱ. Ս. Պատրիարքի Քաղաքական ժողովի հետ նախատանօք վարուելը։

Այդ գեղծումները մինչդեռ քննուած չեն, մենք չենք կարող ասել, թէ որքան իրաւացի էին նրանք։ Միայն կ'ասենք մի բան, այն է, որ մասնաւոր գեղծումները որևիցէ իրաւաբանական կանոնի դէմ չէ նշանակում մեղանչել օրէնսդրութեան ընդհանուր սկզբունքի, կամ նրա ամբողջութեան դէմ։ Խրիմեանը, եթէ ճշմարտապէս այդ բոլորը արած էս լինէր, դարձեալ նա Սահմանադրութեան թշնամի չէ կարող համարուել և ոչ էլ այդ առիթով կարելի է նրան «Հ ա կ ա ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն» կոչել։—Դրանք լոկ հրէական աղմուկներ են, «նա կամենում է օրէնքը լուծանել...» և ընաւ չեն կարող արգելք դառնալ Խրիմեանի այն առաջարկութեանը, որ նա դտանում է Սահմանադրութեան մէջ թերութիւն-

ներ և պահանջում է վերաքննել և լրացնել նրանց։

Դեռ Սր. Պատրիարգի և Քաղաքական ժողովի մէջ ծագած վերոյիշեալ երկպառակութիւններն իրանց լուծմանը չը հասած, Ազգային երեսփոխական ժողովը պատրիարգութիւնից հրաժարուած Խրիմեանին կրկին իւր աթոռը հրաւիրեց, բայց գործի քննութիւնը մնաց Ազգային Ընդհանուր ժողովին։

Այժմ խրիմեանական և հակախրիմեանական կուսակցութեանց օրգանների—«Մասիսի» և «Օրագրի»—բանակռուի գլխաւոր նիւթը եղած է այդ վէճը, մինը՝ Մասիսը՝ պնդում է որ Ընդհանուր ժողովի նիստը պէտք է որ բաց լինի. միւսը՝—Օրագիրը՝—թէ դռնափակ պէտք է լինի։ Ամբողջ համարների էջերը այդ երկու լրագիրները մրոտում են այդ առիթով, դեռ և սորևիցէ եզրակացութեան հասած չեն։

Այստեղ երևում է Կ. Պոլսի լրագրութեան դատարկ շատախօսութիւնը, որ փոխանակ քննելու, թէ ինչ նպատակով է կազմում Ազգ. Ընդհանուր ժողովը իւր նիստը, և ինչ պէտք է լինի նրա դատողութեան առարկան, նրանք խօսում են մէկ բանի վրայ միայն՝—նիստը փակ պէտք է լինի, թէ բաց։

Մենք չենք հերքում, որ նիստի փակ կամ բաց լինելու խնդիրը դարձեալ իւր կարևորութիւնն ունի, բայց լրագրութեան գլխաւոր պարտաւորութիւնը այն է, որ նախ քան նիստի կազմուելը վիճելի առարկայի մանրամասնութիւնները քննէ, բացադրէ և նրանց հասարակական կարծիքին հաղորդէ, որպէս զի վէճը նախ քան նիստի կայանալը բոլորովին մշակուած լինի։

Օրինակի համար, վէճը ծագել է այն հարցից, թէ արդեօք հարկաւոր է Սահմանադրութիւնը վերաքննել, թէ ոչ։ Խրիմեանական կուսակցութեան օրգանը՝—«Մասիսը»—մինչև այսօր կատարելապէս չը բացադրեց, թէ Սահմանադրութեան որ կէտերն կարօտ էին վերանորոգութեան, և ոչ հակախրիմեանականների օրգանը՝-«Օրագիրը՝»-հերքեց այդ, իւր խօսքը հաստատելու համար՝ թէ արդի սահմանադրական օրէնքների լոկ տառացի գործադրութիւնը իւր իսկութեամբ բաւական է Ազգի պիտոյքը հոգալու, այլ ևս վերանորոգութեան կարօտութիւն չունի։

Բացի դրանից, Խրիմեանի՝ ԺԴ յօդուածով Երեսփոխանական ժողովին ներկայացրած խնդիրների վրայ, որոնք ամենակարևոր քննութեան նիւթերն են, մի խօսք անգամ չը կայ։ «Մասիսի» և «Օրագրի» բանակռիւը դեռ ձգւում է նիստի փակ կամ բաց լինելու մասին... Դրան ասում են «տղան չը ծնած շորերը ձևել»։

Որպէս զի հասկացնենք մեր ընթերցողին, թէ ինչ դատարկ սոֆիզմների վրայ են հիմնում Կ. Պոլսի լրագիրները իրանց կարծիքը, հարկաւոր ենք համարում մէջ բերել «Օրագրի» մի իրաւաբանական հայեացքը «Ընդհանուր օրէնք է ամեն երկրի և ամեն ազգի մէջ, որ անհատներու դատաստանը (?) երկուց դատելոց կողմանց արդարացուցման փաստերը հրապարակաւ լսուելէն վերջը՝ դատավճռոյն վիճաբանութիւնը դատաւորք դռնփակ կընեն և դատավճիռը կը հրատարակեն յետոյ»։

Ազգ. Ընդ. ժողովը դեռ կայացած չէ և հետևաբար նա չէր կարող լսել երկու դատախազների

իրանց արդարացնելու փաստերը. ուրեմն ինչ հիման վրայ ժողովը կը դնէ իւր վճիռը։ Եթէ «Օրագիրը» բաւական է համարում երկու կողմի ներկայացրած գրաւոր բողոքները, կամ նրանց բացադրութիւնները, դա ոչ միայն մի սահմանադրական ժողովրդի մէջ, այլ Հոտենտոտների մէջ անգամ չէ լինում, որ դատարանը (դռնափակ նիստում) միայն գրաւոր թղթերի վրայ հիմնէր իւր վճիռը, առանց հրապարակապէս լսելու՝ կամ դատախազների՝ և կամ նրանց փաստաբանների՝ բերանացի պաշտպանութիւնը իրանց իրաւունքի։

Ահա այդպիսի մարդիկ, որոնք օրէնքի հոտն անգամ առած չեն, վստահանում են ընդհանուր ազգի ճակատագիրը վճռել և նրա համար Մովսէսներ ձևանալ...։

I.

Բարեջան վանահայր *)

Մկրտիչ Վ. Խրիմեան

Այն զուարճալի ժամանակն՝ երբ մտած Տփխիսոյ ռուսաց կայսերական Համալսարանի մէջ՝ եռանդագին փափագանօք փունջ կը կապէի երփներանգ ծաղկանց, յանկարծ արագ թեւօք սլացեալ՝ իջան Տփխիսոյ մեծ գրատունն գերիմաստ Հօրդ Հրաւրակներն։ Ո՜հ. որպիսի սաստիկ մագնիսական ձգողութեամբ գրաւեցին նոքա մատաղ սիրդս. որպիսի քաղցր ու ախորժ Համ ունեցան իմ տկար ախորժակիս։ յիրաւի ախորժելի էին նոքա, նոցա մէջ փայլում էր մեծ և հարուստ տաղանդ, վառեալ հրով ազգասիրական։— Բայց այժմ ուրախութեանս սահման անբաւ է, երբ լսեցի թէ սրրութիւնդ թող տուած միանգամայն բոլոր քաղաքական փառքերը՝ պատիւներն ու զուարճալի կեանքն, եկել էք դուրս բերելու խղճալի Հայրենակիցք տգիտութեան խաւարից, լուսաւորելով նոցա միտքն պէս պէս իմաստութեամբ և վառելով նոցա սրտի մէջ հուր սիրոյ։

*) Հեղինակը նամակագրութիւն է ունեցել Խրիմեան Հայրիկի հետ, որից գնում ենք միայն այս երկու նամակը. իսկ մնացեալները «Նամակներ» վերնագրով հրատարակուող հատորի մէջ ամփոփուած կը լինին։

Ծան. Հրատ.

Ճշմարիտ, մեծ նեղութիւն, մեծ ջանք հարկաւոր են Ձեր այդ առաքինական և ազգօգուտ տնօրէնութեան համար. ընդ այսմ ամենայնի՝ պէտք է հաստատ մտքով և համբերութեամբ ընդունել ամենայն տեսակ վշտեր, տառապանքներ, հայհոյանքներ և այլն: Դուք միանգամայն պիտի վեր առնէք Քրիստոսի Սուրբ խաչն և հետևէք նորան. ինչո՞ւ պիտի վախենաք նորանցից, որք միմիայն մարմին և եթ կարող են սպանել, այլ հոգուն չունին իշխանութիւն վնաս տալու:

Միտքներդ բերէք մեր Փրկչին և նորա աշակերտաց վշտակրութիւններին, թէ քանի անտանելի չարչարանքներով կարողացան փարատել հեթանոսական խաւարը և սփռել լոյսը Քրիստոնէական. քանի՞ մեծ դժուարութեամբ կարողացան արմատախիլ անել Հրէից նախապաշարումն և հաստկացնել նրանց նոր օրինաց ճշմարտութիւնը:

Ձեր Վարագայ վանքում արած մեծ տնօրէնութիւններն լսելով՝ գրեցի իմ Տփխիսեցի թղթակիցներուս, որք ամենեքեանք ուրախութեան ոգւով լցուած՝ յայտնում են իւրեանց սրտի հրճուանքը: Որոնց մինն այս հատուածն է գրում. «Ընթերցայ մին քանի հրճուողական տողոգ Ի մասին „Արծիւ Վասպուրականի“: Եւ յոյժ ուրախացայ նորա ազգին յառաջադիմութեան համար ունեցած մեծ ջանքին վրայ. թէպէտ յառաջագոյն Հայոց լրագրութեամբ տեղեկացած էի, բայց չը գիտէի նորա գլխաւոր նպատակն:

Մեզ գովասանել հարկաւոր չէ այն Հայրենասէր անձին. միմիայն պիտի օրհնենք և աղօթենք նորա թանկագին կենաց համար:—Հոգւով ցանկացայ նուաստս նամակակից լինել Սրբութեանդ հետ

և գրել նորակառոյց ճեմարանի յառաջադիմութիւնն, որով յատկապէս յոյժ և յոյժ պիտի ուրախանայ տըխուր սիրտս, որ բազմաց հետէ տեսնելով Ազգի ցաւալի վիճակըն մեծ ազոյ, մեծ ցաւակցութեան մէջ է։

Պնամ բարեմաղթու վասն թանկագին կենացդ որպէս այժմ նոյնպէս և յամենայն ժամանակի։

II.

Հայրենասէր Հայը

Պկրտիչ Վարտապետ Խրիմեան

Սրդէն շատ ամիսներու դիտաՀոլով շրջանը լրացաւ, մինչ Ձեր նամակին սպասելով՝ սիրտերնուս անձկութիւնն օր ըստ աւուր կը բազմանայ։ Ցիրաւի շատ հետաքրքրականլուր է գիտել արդեօք որպիսի սաստիկ զօրութեամբ, նորութիւնն կը մարտնչի Հնութեան Հետ։ Խսկզբանէ անտի այս երկու նախանձաւոր թշնամիներն իւրաքանչիւրն առանձին խումբ որոշած՝ մարտ կը մղեն, այլ առաջինն միշտ յաղթող գտնուելու է։

Մարդկային բնութիւնն՝ մի առանձին գաղտնի յարաբերութիւն ունենալով տիեզերական համաշխարհական բնութեան Հետ միանգամայն և նրանից իւր կախումն ունի։

Չննելով տեսնում ենք քառահոլով եղանակներուն Հետ։ Երբ բնութիւնը չքանում և մեռանում է, դարձեալ առողջանալով յարութիւն է առնում, ընդ նմին և մարդկային սրդի եռանդն, ոգւոյ աշխոյժն և մարմնոյ յատկութիւնն նոյն ձևերն ընդունում են։

Զարմանալի յեղափոխութիւններ տեսնելու է՝ ոչ թէ մին տարուոյ միջոցումն, այլ ընդհանուր դարերու սահմաններումն. ուր Ձեր Կռոնոսն հիանալի պատկերացուցանում է իւր ներգործութիւններն, համայն որպէս տիեզերական բնութեան վրայ, նոյնպէս և առհասարակ բոլոր մարդկային ազգային վրայ....

Յ-ԻՐ ՄԷԼԷ-ՄԷՐՏԵՆ ՄԷԼԷ-Յ-ԻՐԷՆՆ։

1858 թ.

ՆՈՒԷՐ

„ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՅՆ“ *)

Յաւուր միում համախմբեալք
Դիշերահաւք ի մի վայր,
Ետեան կազմեալ մեծ խորհրդոց՝
Զրոյց առնեն այր ընդ այր։
Ընդ էր բուոց և չղջիկանց
Միահեծան ծերակոյտ.
Որոշէին՝—զինչ աշխարհին
Իւրեանց է վնաս, կամ օգուտ։
«Լուարուք, ասէր, պետք և արքայք,
Որ ի գլուխս կապէք թագ.
Դուք, տիրապետք ժողովրդոց
Մուխ դիշերուն ժամանակ»։
Յարեաւ ի յոտս ոմն ի նոցունց,
Քարոզ կարդաց նա սաստիկ,
Եւ անբոխն բազմաժողով
Ունկն դնէր յոյժ մնջիկ։

*) Այս երգը գրուած է 1857 թուին Նուէր Վեհափառ Տէր Տէր Մկրտիչ Խրիմեանին, երբ նա հրատարակում էր Իւր „Արծիւ Վասպուրականն“ ամսագիրը Վարագայ վանքից և երբ խաւարասէր բուերի և չղջիկների խումբը չարաչար պատերազմում էին վեհափառ Արծուի դէմ։

«Գիտէք, ցորչափ սիրեաց զմեզ
Տարտարոսեան Պլուտոն.
Մինչ զիշերի արար մեզ Հաւ
Հայաստանին ի կենդրոն։

«Ասա ի խաւար չիք մեզ մռայլ,
Ո՛չ տիրէ և նինջ Մորփեան,
Յորս ելանեմք ազատօրէն,
Միշտ երջանիկք ի Հանդսեան։

«Միւս կենդանիք զիշերամարտք
Անկեալ դնեն ի թմբիր.
Մինչ Ուզումպեան Ֆեբոսի
Լոյս ծագէ ի յերկիր։

«Իսկ ես այժմ զնոր աղէտից
Զչարաց լինիմ ձեզ զուժկան.
Թէպէտ խոցք սիրտս ի ներքուստ
Եւ շփոթն միտք իմ Համայն։

«Զինչ այս ճաճանցք, որք ցոլանան,
Զինչ լոյս ցայտէ շողշողուն,
Տեղի տայ մութն ի խորս լերանց,
Եւ արշալոյս փայլէ սիրուն։

«Ահա Վարագ բոցավառեալ
Արփիանայ գեղանիտ,
Միթէ ի յանդ ո՞չ ելանեն
Բանք զոր ասացին մեր նախնիք.—

«Թէ յաւուր միում Վարագեան
Ի բարձրարերձ գագաթան,
Ուր Գիսոսի մեծ Արծուին
Քառաթևեան մահարձան։

«Զերթ գեփիւռիկ հրաշանորոգ՝
Սրծիւ ոմն լայնաթև՝
Վեր կենցի շքեղափառ
Խաւարելոց նա պարգև։

«Նա ի Վարագ սրբանուէր,
Ի գլուխ լերին բարձրագահ,
Ամենեան կառուցէ տաճար
Իմաստուհւոյն հզօր, անմահ։

«Անդ ժողովեալ զմատղերամ
Քնքուշ Մուզայս Վասպուրական,
Կրթեսցին յուսում, յարհեստ,
Յանուշ ի կեանս Պարնասեան։

«Յաջորդեսցին այս վաղեմի
Կեանք խոհական, գերերջանիկ,
Ո՛չ նինջ լիցի և ո՛չ մռայլ—
Հինաւուրց դար ոսկեղինիկ։»

«Անդ Ապոլոն, դափնապսակ,
Յիւրն ախորժ ներդաշնակ,
Զարթուսցէ զթմրեալ ոգիս
Ի դիւթական նուագ։

«Եւ Մուզայից երգք քաղցրիկք
Քան Սիրենեան անուշ սրինգ
Մտած բազմաց լիցին զրգիռ
Վերամբառնալ անդ ուր երկինք։

«Եւ դալկացեալ Հայոց արեգ,
Առոյգ լուսով կենսանորոգ,
Ճախարակեալ՝ շրջան առցէ
Հայաստանին ի յոլորտ։

«Ֆագիցէ լոյս... և արփենուոյն
Ոսկիաձոյլ սուր սլաքի
Վանեն զմութն ընդ բնակչաց
Ի խորս լերանց ամրափակ»։

Այսպէս իւր ճառ էած յաւարտ
Բազմախորհուրդ Ծերունին.
Եւ բօթաբեր ազդեաց սարսափ
Խաւարասէր խուժանին»։

Մինչև ոմն ի չղջկանց
Յարեաւ ի յոտս անդստին
Եւ ողբալի կարդաց բարբառ.
Զայնն հատաւ յանձուկ սրտին։

«Ֆագեա՛ւ լոյս եղերական՝
Կործանման մեր չար գուշակ՝
Ա՜խ, մաշեցինք ի փապարս,
Ի խորշս լերանց սովաստակ.

«Քանզի ազգ մեր խաւարաբնակ։
Զը կարէ որսալ ի լոյս ցերեկ.
Զի մեր աչեր կուրացուցանէ
Իւր ճաճանչօք պայծառ արեգ։

«Իսկ աչք է. մեր ինչ է հնար,
Ի՞նչ և ընդ այս խորհուրդ լաւ,
Քանզի հատաւ յոյս մեր կենաց,
Ազատութիւն մեր կորեաւ»։

Եւ չղջկանն ընդմիջեալ խօսք
Յոտին եկաց Ծերունին.
Եւ ընդհատեալ զիւր բանին թել
Այսպէս կցեաց խոհունին.

«Ընդդէմ կքրել Վեհ Երծուիդ
Ի աքացել ընդ խթան.
Բաւ է, եղբարք, որչափ կերայք
Զազգ կենդանեաց ի մթան։

«Իսկ արդ այժմ ամենուրեք
Ծաւալեցաւ լոյս ճշմարտին.
Եւ մեք թողցուք մթին խաւար՝
Եւ զխորշն աղջամղջին։

«Եւ Երծիւդ այդ չէ ուսպէտ ոք.
Պատգամաբեր է Դիոսին,
Պատիցուք յօժար սրտով
Ընդ հովանեաւ թևոց նորին։

«Եւ հինաւորց կիրքք նիւթականք
Ի սրտից մեր թող ջնջեսցին.
Եւ ոչ անձինք մեր նանրասէրք
Ի սնոտիս մաշեսցին։

«Որպէս նախնիք մեր քաղցրաձայն՝
Եւ մեր երգոց ներդաշնակ՝
Ի Վարագեանն յարտեւանանց՝
Թող հնչեսցին անուշակ»։

Կարի զչարեալ յոտս եկաց
Զչղջկին բան հերքեանց բուն.
Խաւարաբնակք հաճ և հաւան
Եղեն նմա ողջ, համբուն։

Ուխտ ուխտեցին երդմամբ հաստատ
Ընդդէմ լինել Երծուին,
Թորձոց նորա լինել խոչընդակ,
Ջնջել զճիգս բնաւին։

Զի արգելցի լոյսոյն ծագում,
Տիրեսցէ միշտ մահ և խաւար.
Եւ կենդանիք թժրեալ ի քուն,
Կապտել կարեցին նոքա աւար։

«Կեցցէ յաւէժ, կեցցէ բուն»,
Զայն որոտաց յամենուստ,
«Կեցցէ յաղթողն, կեցցէ բուն»,
Գոռաց դժոխքն ի ներքուստ։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

I.

Մի ամբողջ տարի անցաւ այն օրից, որ ընդհանուր Հայոց կաթողիկոսը վախճանված է։ Նոր կաթողիկոսի ընդրութեան ժամանակը մօտենում է։ Հինգ ամիս ևս, և ահա կը գայ մայիսը, երբ ազգի պատգամաւորները պէտք է հաւաքվեն Էջմիածնում և իրանց քուէն տան։ Բայց մինչև այսօր ինչ շինեցինք, ինչ նախապատրաստութիւններ գործ դրվեցան, որ Հայաստանեայց եկեղեցու Հայրապետական աթոռի նորընտիր գահակալը արժանաւոր մէկը լինի,—կարող ենք ասել, որ ոչինչ։ Միամիտները վիճեցին, աղմուկ բարձրացրին, իսկ խորամանկները սուս կացան և աշխատեցին մթին ճանապարհներով իրանց ընտրելին Հայրապետական աթոռին մօտեցնել։

Կ. Պոլիսի ազգային ժողովը, որը, որպիս Հայոց մեծամասնութեան ներկայացուցիչը, պէտք է ընտրութեան հարցում գլխաւոր դերը կատարէր,—այդ ժողովը, համարձակվում ենք ասել, նոյնպէս ապարդիւն ժամանակ վատնեց։ Դա առաջին անգամը չէ, այլ ամեն անգամ, երբ կաթողիկոս է վախճանվում և նոր ընտրութեան նախապատրաստութիւններ պէտք է լինեն այդ միջոցին՝ ժողովին զբաղեցնելու համար

և նորա ուշադրութիւնը բուն հարցից հեռացնելու համար՝ զանազան նենգաւոր մարդիկ միշտ հնար են գտել նոր հարցեր մէջ ձգել և գործը աւելի անլուծանելի դարձնել։ Բուն հարցը, այսինքն ընտրելու համար մի արժանաւոր կաթողիկոսացու որոշելը, մնացել է անշօշափելի, մինչև հասել է էջմիածին պատգամաւոր ուղարկելու օրը, և մի քանի պղտոր ջրի մէջ ձուկ որսացող էֆենդիներ պատգամաւորների բերանը դրել են այն անունները, որոնք մինչև այնօր ոչ ոքին յայտնի չեն եղել։

Այս անգամ ազգային ժողովին տուեցին մի զրաղմունք, այն է՝ կաթողիկոսի ընտրութեան եղանակի որոշումը։ Այդ մասին առանձին յանձնաժողով կազմեցաւ, որ ծրագիր պատրաստէ։ Յանձնաժողովը վատնեց մի քանի ամիսներ. վերջապէս, ներկայացրեց իւր ծրագիրը։ Այդ ծրագիրը մի այնպիսի խառնափնթոր բան էր, որ ոչ միայն անիրագործելի էր, այլ տարիների կարօտ էր իրագործելու համար, մինչդեռ կաթողիկոսի ընդրութիւնը մէկ տարուց աւելի ժամանակամիջոց չունի։ Ցիշեալ ծրագիրի համեմատ պէտք է Տաճկաստանի բոլոր վիճակներից ձայներ հաւաքվէին և այդ ձայների թուի համեմատ որոշվէր իւրաքանչիւրի քուէն։ Եթէ ազգային ժողովը գտնվէր Տաճկական Հայաստանի մի որ և իցէ կենտրոնում, դեռ ևս հաւանականութիւն ունէր, որ կարելի լինէր, այն ևս մեծ դժվարութեամբ, ցիշեալ ծրագիրը իրագործել։ Բայց Կ. Պոլսում նստած Տաճկա-Հայաստանի բոլոր անկիւններից ձայներ հաւաքելը,—դա աւելի քան անկարելի է, մանաւանդ մի այնպիսի երկրում, ուր դեռ ոչինչ կարգ-կանոնի տակ դրված չէ։

Ուրախ ենք, որ ազգային ժողովը այնքան խո-

հեմ զտնվեցաւ, որ մերժեց յիշեալ Ծրագիրը և ընդունեց 66-ի ընտրութեան ձևը, դա ամենայարմարն է, եթէ ազգային ժողովը սրբութեամբ կը կատարէ այն մեծ պարտականութիւնը, որ նորա վրայ դրել է ազգի մեծամասնութիւնը, որ զտնվում է Ֆ.-Հայաստանում։

66-ի ընտրութեան ձևը ընդունելով, ազգային ժողովը իրան է սեփականացնում այն բոլոր քուէների իրաւունքը, որ տուած է Ֆաճկաստանի Հայերին, այլ խօսքով, ինքը դառնում է ընտրող։ Մենք յուսով ենք, որ ազգային ժողովը բարեխղճութեամբ գործ կը դնէ իւր իրաւունքը, և կարդարացնէ այն մեծ վստահութիւնը, որ ունի նորա վրայ Ֆաճկաստանի Հայը։

Այժմ գլխաւոր Հարցը, որ զբաղեցնում է ազգային ժողովին և մասամբ մեր մամուլին, կայանում է նրանում, արդեօք նոր ընտրելի կաթողիկոսը ո՞ր երկրացի լինի, աւելի նպատակայարմար է, տաճկաստանցի, թէ ռուսաստանցի։ Այդ Հարցը, մեր կարծիքով, այնքան կարևորութիւն չունի, որ վիճաբանութեան առարկայ դառնար, որովհետև, փոխանակ վիճելու այն բանի վրայ, թէ ինչ տեղացի պէտք է լինի կաթողիկոսը,—աւելի լաւ կը լինէր, եթէ քննէին, թէ ով կամ ինչ տեսակ մարդ արժան է կաթողիկոս դառնալու։ Այդ արժանաւորութիւնը կայանում է ոչ թէ տեղացութեան մէջ, այլ անձնաւորութեան մէջ, որտեղացի և լինէր նա։ Բայց որովհետև Հարցը արդէն յարուցված է, մենք այդ մասին կը խօսենք մեր հետևեալ գլխում։

II.

Մեր անցեալ գլխում կանգ առինք այն տեղի վրայ, թէ ո՞րն աւելի նպատակահարմար է, արտեսք նորընտրելի կաթողիկոսը պէտք է տաճկաստանցի լինի, թէ ռուսաստանցի կամ թէ մի այլ երկրից։

Այդ հարցը լուծելու համար, նախ հարկաւորէ պարզել, թէ իսկապէս ինչ իրաւասութիւն կամ նշանակութիւն ունի Էջմիածնի կաթողիկոսը։—Հայոց եկեղեցին իւր պատմական և աւանդական սովորութիւններով, որոնք օրէնքի զօրութիւն են ստացել, ընդունել է և ընդունում է Էջմիածնի կաթողիկոսին որպէս ս. Գրիգոր Լուսաւորչի աթոռի ժառանգ և որպէս ընդհանուր Հայոց ծայրագոյն Հայրապետ։ Ուրեմն, որտեղացի և լինէր այդ աթոռակալը, միևնոյն է, միայն թէ նա պէտք է ունենայ այն արժանաւորութիւնները, որ պահանջում է նրա բարձր կոչումը։

Առարկողներ կան, թէ որովհետև Էջմիածնի կաթողիկոսի իրաւասութիւնը տարածվում է գլխաւորապէս Ռուսաստանի Հայերի վրայ, և թէ նա գործ ունի գլխաւորապէս Ռուսաստանի Հայերի հետ, այդ պատճառով աւելի լաւ է որ նա ռուսաստանցի լինի, որպէս զի, տեղային հանգամանքների հետ ծանօթ լինելով, կարողանայ իրան յանձնված հօտը օրինաւոր կերպով կառավարել։

Եթէ ընդունենք այդ առարկութիւնը իբրև անհրաժեշտ պայման, այնժամանակ պէտք է հարցը շատ պարզ դնել։ — Այլ ևս ինչու ենք տալիս Էջմիածնի կաթողիկոսին ընդհանուր Հայոց ծայրագոյն հայրապետի տիտղոսը, եթէ նա միմիայն Ռուսաստանի Հայերի հոգևոր պետն է, և եթէ նա պէտք է, ճանաչէ և հոգ տանէ միայն Ռուսաստանի սահմանների մէջ բնակված Հայերի վրայ։—Կրկնում ենք, եթէ այդ ճիշտ համարենք, այն ժամանակ կաթողիկոսի ընդարձակ նշանակութիւնը ինքն ըստ ինքեան կը փոքրանայ և նա կը դառնայ Էջմիածնի վանքի վանահայր և Ռուսաստանի Հայերի հոգևոր առաջնորդ, իսկ աւելի,—ոչինչ։

Այդ դէպքում, Էջմիածի կաթողիկոսը նոյն նշանակութիւնը կունենայ իւր վիճակի համար, ինչ նշանակութիւն որ ունի Աղթամարի Կաթողիկոսը Աղթամարի վիճակի համար, և Սիսի կաթողիկոսը Կիլիկիայի համար, որոնց իրաւասութեան չափը իրանց վանքի և վիճակների սահմաններից դուրս չէ գնում։

Վերոյիշեալ առարկութիւնից,—թէ Էջմիածնի կաթողիկոսը միմիայն Ռուսաստանի Հայերի համար է և պէտք է ռուսաստանցի լինի,—ինքն ըստ ինքեան ծակում է մի այլ աւելի ծանրակշիռ հարց ևս, որ ոչ սակաւ երկպառակութիւնների կարող է առիթ տալ։ Որովհետև, եթէ ընդունենք, որ Էջմիածնի կաթողիկոսը միայն մեզ է պատկանում, այն ժամանակ մենք մեր բոլոր կապերը կաթողիկոսի ընտրութեան վերաբերութեամբ պէտք է խզենք թէ Տաճկաստանի Հայերի հետ և թէ այլ պետութիւնների մէջ ապրող Հայերի հետ։ Այլ ևս ինչու ենք թոյլ տալիս, որ

տաճկաստանցին իւր ձայների մեծամասնութեամբ խեղդէր մեզ. այլևս ինչու ենք թոյլ տալիս, որ պարսկաստանցին, հնդկացին և եգիպտացին մասնակցէր մեր կաթողիկոսի, ընտրութեան գործի մէջ։ Մենք կընտրէինք մեր կաթողիկոսին, ումը որ կը ցանկանայինք, որպէս Աղթամարի վիճակը ընտրում է իւր կաթողիկոսին, և որպէս Սիսի վիճակը ընտրում է Կիլիկայի կաթողիկոսին։

Բայց այդ անել մենք ոչ կարող ենք և ոչ էլ անելու իրաւունք ունենք։ Դա սխալ և միանդամայն ամենամասսակար ենթադրութիւն է։

Էջմիածնի կաթողիկոսը ընդհանուր Հայոց ծայրագոյն հայրապետն է, որ երկրում և որ պետութեան մէջ գետեղուած լինէին հայերը։ Նրա ընտրութիւնը կախումն ունի ամբողջ ազգից և ոչ թէ նրա մի մասնից։ Այդ գրութիւնը ստեղծել է ինքը պատմութիւնը, և ոչինչ փաստերի կարօտ չէ։ Էջմիածնի կաթողիկոսի հոգևոր գերիշխանութիւնը տարածվում է երկրագնդի բոլոր հայերի վրայ, տարբերութիւնը միայն չափերի մէջն է, թէ ինչ պետութիւն ինչ չափով սահման է դրել նրա իրաւունքներին։ Պարսկաստանի և Հնդկաստանի հայերը ենթարկվում են Էջմիածնի կաթողիկոսի անմիջական իշխանութեանը. նա է նշանակում և ուղարկում այդ երկրների թեմական առաջնորդներին։ Տաճկաստանի հայոց երկու կաթողիկոսները (Աղթամարի և Սիսի) և երկու պատրիարքները (Երուսաղէմի և Կ. Պոլսի) ամեն մի ծանրակշիռ եկեղեցական հարցում դիմում են Էջմիածնի կաթողիկոսին։ Նա միայն իրաւունք ունի ընդհանուր ժողով հրաւիրելու և եկեղեցական ծանրա-

կշիռ հարցերը վճռելու։ Կ. Պոլսի պատրիարքը, Տաճկաստանի հայոց ազգային սահմանադրութեան կանոններով, համարվում է Էջմիածնի կաթողիկոսի փոխանորդը, և նորա միջնորդութեամբ կաթողիկոսի իրաւունքները տարածվում են ամբողջ Տաճկաստանի հայերի վրայ։

Իրաւ է, եղել են ժամանակներ, որ Էջմիածնի կաթողիկոսի յարաբերութիւնները կամ նրա կապերը թուլացել են Կ. Պոլսի պատրիարքարանի հետ, բայց դրա պատճառը պէտք է որոնել աւելի այդ երկու աթոռները կառավարող անձնաւորութիւնների մէջ, քանթէ վաղուց արդէն ընդունուած պաշտօնական դրութիւնների մէջ։ Նոյն իսկ Ռուսաստանում երբեմն կաթողիկոսի յարաբերութիւնները այս և այն թեմական առաջնորդի հետ սուր ձև են ստանում, բայց այսպիսի դէպքերը պէտք է բացառութիւն համարել։

Այդ բոլորից այն եզրակացութեան ենք հասնում, որ երկրացիութեան խնդիրը կաթողիկոսի ընտրութեան գործի մէջ բալորովին անիմաստ խնդիրներից մէկն է։ Ընդհանուր հայոց կաթողիկոսը խիստ ընդարձակ սահման ունի իւր հովուապետութեան համար։ Նորա հոգևոր գերիշխանութիւնը չէ պայմանաւորվում միայն Ռուսաստանով։ Այդ պատճառով, բաւական չէ, որ նա միայն ռուսաց հայերի հոգևոր պէտքերը ճանաչէր և միայն նրանց համար հոգ տաներ։ Նա պէտք է ունենայ ընդարձակ, բազմակողմանի հրմտութիւններ, որ կարողանայ ընդհանուր հայերի պէտքերի համաձայն գործել։

Եւ ինչ պատճառներ ունենք ենթադրելու, որ մի տաճկաստանցի, պարսկաստանցի կամ հնդկացի

եպիսկոպոս, որը արդէն յայտնի է ազգի մէջ իւր հոգևոր և բարոյական արժանաւորութիւններով, իւր վարչական տաղանդով,—մի այդպիսի եպիսկոպոս անընդունակ կը լինի Ռուսաստանի հայերին կառավարելու, որովհետև տեղային պայմաններին անծանօթ է։ Հետաքրքիր է գիտենալ, թէ որո՞նք են այդ տեղային պայմանները։ Ռուսաստանի հայոց հոգևոր կառավարութիւնը այն աստիճան չափի և սահմանի մէջ է դրուած, որ մի կաթողիկոս, որքան էլ որ անծանօթ լինէր, մի քանի օրվայ մէջ կարող է հասկանալ թէ իւր պարտաւորութիւնները և թէ իւր իրաւունքները, բաւական է, որ նա կառավարելու ընդունակութիւններ ունենար։ Հանգուցեալ Գէորգ կաթողիկոսը ռուսաստանցի չէր, բայց նա Ռուսաստանը աւելի լաւ էր ճանանչում, քան թէ մեր բոլոր եպիսկոպոսները, բայց եթէ նա չը կարողացաւ զոհացնել մեզ, դորա պատճառը պէտք է որոնել՝ ոչ թէ այն բանի մէջ, որ նա բրուսացի էր, այլ նորա անձնական յատկութիւնների մէջ։

Մի այլ կարևոր կէտ ևս պէտք է ի նկատի ունենալ։ Էջմիածնի հոգևոր կառավարութեան մէջ վարչական մարմինը խմբագիր Սինոդն է. նա է կառավարում տնտեսական կամ եկեմտական մասը, նա է կառավարում դատաստանական մասը եկեղեցականներին պատժելու կամ ապաշխարութեան ենթարկելու, նա է հսկում թեմական կամ վիճակային կոնսիստորիաների վրայ, նա է հսկում եկեղեցականների աղուանձքների վրայ, մի խօսքով, կառավարութիւնը Սինոդի ձեռքումն է։ Կաթողիկոսը Սինոդի նախագահն է, միայն սոսկ կրօնական հարցերի մէջ նա բացարձակ

ձայն ունի։ Ուրեմն, կաթողիկոսի Ռուսաստանը ճանաչելը կամ չը ճանաչելը ինչ մի առանձին նշանակութիւն ունի, քանի որ նա իւր գործողութիւնների մէջ պէտք է յենվի գլխաւորապէս Սինոդի կարգադրութիւնների վրայ։ Եթէ Սինոդը արժանահաւատ անդամներից կազմակերպուած լինի, ամեն ինչ օրինաւոր կերպով կը կատարվի, և կաթողիկոսը, որքան էլ որ անփորձ լինէր տեղային պահանջների մէջ, այսուամենայնիւ երբէք սխալներ չի գործի։

Այդ բոլորից յետոյ, մենք ամենևին նպատակ չունենք պնդել այն կարծիքի վրայ, թէ նորընտիր կաթողիկոսը պէտք է անպատճառ օտարերկրացի լինի և ոչ թէ ռուսաստանցի։ Ամենայն Հայոց կաթողիկոսը կարող է ընտրուած լինել ամեն երկրից, եթէ նա այդ կոչմանը արժանի է։ Եւ եթէ մեր եպիսկոպոսների մէջ և ս կան արժանաւոր անձինք, ինչու ենք ծածկում, շտապենք, ցոյց տանք բոլոր Հայերին, որպէս զի ի նկատի ունենան, որովհետև ընտրողները միայն մենք, ռուսաստանցիներս, չենք, այլ թւով աւելի շատ ձայներ ունեն օտար երկրների Հայերը։

Հետևեալ գլխում մենք կը խօսենք արդէն յայտնի ընտրելիների մասին։

III.

Նախընթաց գլխում մենք խոստացանք խօսել արդէն յայտնի ընտրելիների մասին, թէ նրանցից ո՞րը իւր արժանաւորութիւններով աւելի գերազանցութիւն ունի ընդհանուր Հայոց Հայրապետական աթոռի ժառանգորդ լինելու։ Նախ քան ուղղակի դիմելը այս կամ այն անձնաւորութեան անուններին, աւելորդ չենք համարում մի քանի խօսքով յիշել, թէ որպէս են ուրիշները բացատրում կաթողիկոսի իսկական նշանակութիւնը։

Ոմանք, մինչև անգամ հրապարակախօսներ, այնքան համեստ են, որ կաթողիկոսից շատ փոքր բան են պահանջում. բաւական է, ասում են, որ նա Հայոց եկեղեցուն հաւատարիմ լինի (կարծես, մի հասարակ գիւղական քահանայ պէտք է Հայոց եկեղեցուն հաւատարիմ չը լինի), բաւական է, որ նա պահպանէ արդէն եղածը (այսինքն՝ ինչ որ կայ և ինչ դրութեան մէջ որ կայ՝ անփոփոխ պահէ). պէտք է նա քաղաքականութեամբ չը հետաքրքրուի, և իւր հոգևոր պարտաւորութիւններից դուրս այլ ձգտումներ չունենայ, պէտք է ժամ գնայ և Հայոց ազգի համար աղօթէ և այլն։

Համեստութիւնը պախարակելի բան չէ, եթէ համեստութեան տակ թաղնուած չը լինի խորամանկ

նպատակներ։ Այսպիսի ճգնաւորական քարոզներ կարդացողները գլխաւորապէս նրանք են, որ աշխատում են մի աննշան եպիսկոպոսին (որի անունը ամաչում եմ տալ) առաջ մղել, հաւատացնելով հայ հասարակութեանը, թէ այդ մարդն էլ բաւական է, ախար հայոց կաթողիկոսութիւնը ի՞նչ բան է, որ տաղանդաւոր մարդիկ էք որոնում։

Հետաքրքիր կողմը այն է, որ այդ հրապարակախօսները հարկաւորած ժամանակ Էջմիածնի կաթողիկոսի նշանակութիւնը այն աստիճան մեծացնում են, որ Հռոմի պապը պէտք է նրա վառքին երանութիւն տայ,—բայց երբ պէտք էր Խիկարին կամ Ղազարին պաշտպանել, այդ ժամանակ կաթողիկոսի նշանակութիւնը այնքան փոքրացնում են, որ նա դառնում է Էջմիածնի վանքի ժամ օրհնող։

Ընդհանուր հայոց հայրապետը Էջմիածնի վանքի ժամ օրհնող չէ, նա գործ ունի ամբողջ ազգի հետ և ամբողջ ազգի հոգևոր գլուխն է։ Եւ որպէս Էջմիածինը է սրբավայր և միջնակէտ ընդհանուր հայոց եկեղեցու, այնպէս էլ Էջմիածնի հովուապետը պէտք է պահպանէ բարոյական և հոգևոր կապ ամեն տեղ ցրուած հայերի մէջ։ Նա այդ մեծ պաշտօնը կատարել չէ կարող, եթէ բոլոր ազգին ծանօթ և բոլոր ազգից սիրուած մարդ չէ։ Ուրեմն, այստեղ նշանակութիւն ունի կաթողիկոսի ընդարձակ ժողովրդականութիւնը, որպէս զի ազգը նրան յարգէ, նրան սիրէ և նրա վրայ հաւատ ու վստահութիւն ունենայ։

Մենք բոլորովին աւելորդ ենք համարում քննութեան տակ ձգել այն արժանաւորութիւնները, և այն հմտութիւնները, որ պահանջվում են մի

անձից, երբ կամենում են նրան կաթողիկոսական աթոռին արժան համարել, ասելով, թէ նա պէտք է ժողովուրդը ճանաչէ թէ նա պէտք է վարչական ընդունակութիւն ունենայ, թէ նա պէտք է տընտեսագէտ լինի, քաղաքագէտ լինի, կրօնակէտ լինի և այլն։ Այդ բոլորը այնպիսի ճշմարտութիւններ են, որ դրանց դէմ վիճելն անգամ երեխայութիւն կը լինէր, որովհետև, շատ պարզ է, որ բարձր պաշտօններ վարողները պէտք է բարձր և բազմակողմանի ընդունակութիւններ ունենան։ Բայց այդ հարցը նրանումն է, որ այդ ընդունակութիւնները մարդկանց ճակատին չեն գրուած, որ կարդալով իմացուի, թէ ով ունի կամ ով չունի։ Պարզիկ կեանքի ևդործունէութեան մէջ ցոյց են տալիս իրանց ընդունակութիւնները։ Եթէ մի եկեղեցական ընդհանուր յարգանք և սէր է վայելում ժողովրդից, եթէ նա գրաւել է ժողովրդի վստահութիւնը,—դա ամենապարզ ապացոյցն է, որ նա մեծ արժանաւորութիւնների և ընդունակութիւնների տէր է, որովհետև առանց դրանց անկարելի է գոհացնել ժողովրդին։ Ժողովուրդը միշտ դժգոհ է. նա երկրպագում է միայն ամենաղօրաւոր հեղինակութիւններին։

Այսպիսի անձնաւորութիւններ ամբողջ ազգի մէջ մենք մի զոյգ միայն ունենք, արդարև, երկու հսկայ կոթողներ, որոնց գերազանցութեան չափը մինը միւսին հաւասար է, և որոնք հաւասար կերպով պաշտելի են ազգին։ Ընթերցողը կը հասկանայ, որ մեր խօսքը Ներսէս պատրիարքի և Խրիմեան Հայրիկի մասին է։

Դրանցից առաջինը, Ներսէսը, Տաճկաստանի Հայոց պատմութեան մէջ ստեղծեց մի նոր դարա-

գլուխ, որից սկիզբ դրուեցաւ այդ երկրի Հայերի Հանգստութեանը և ապագայ բախտաւորութեանը։ Իրաւ է, քաղաքական Հանգամանքները նպաստեցին նրան,—բայց մեծ տաղանդները միայն կարողանում են օգուտ քաղել Հանգամանքներից, իսկ փոքրիկ մարդիկ ձեռքից փախցնում են ամենայաջող Հանգամանքներն անգամ։

Չը կայ մի Հայ, որ Ներսէսի անունը լսած չը լինի, որ նրան չը սիրէ ու նրան չը յարգէ։ Նրա թշնամիներն անգամ չեն Հանդգնել նրա վրայ մի փոքրիկ բիծ դնել, երբ Հարցը նրա ընտրութեանն է վերաբերուել։ Նրանք միայն կողմնակի, մի և նոյն ժամանակ քաղաքավարի, պատճառաբանութիւններով աշխատել են յետ կասեցնել սրբազանին կաթողիկոսական աթոռից, յայտնելով միշտ այն կարծիքը, թէ նա Կ. Պոլսի և առՀասարակ Տաճկաստանի Հայերի Համար Հարկաւոր է, լաւ չէ նրան իւր բռնած դիրքից շարժել, թէ իբրև Կ. Պոլսի պատրիարք նա աւելի մեծ գործ կը կատարէ, քան իբրև Էջմիածնի կաթողիկոս և այլն։ Այժմ սկսել են սրբազանի անձնական հիւանդութիւնը առաջ բերել, թէ նա Հանգստութեան կարօտ է, քան թէ մի այնպիսի բազմազբաղ պաշտօնավարութեան, որպէս է ընդՀանուր Հայոց կաթողիկոսութիւնը։

Վերջին միտքը առարկողների մէջ իւր վրայ ուշադրութիւն դարձրեց թէ մեր և թէ Կ. Պոլսի մամուլի մէջ պ. Իփէկճեանի յօդուածը, որը նոյնպէս հիւանդութեան մաՀճի մէջ էր գրուած։ Մի հիւանդի միւս հիւանդին կարեկցելը մենք շատ բնական ենք Համարում։ Բայց եթէ պ. Իփէկճեանի

կարեկցութիւնը անկեղծ էր, եթէ նա իրաւ հանդուստութիւն և առողջութիւն էր ցանկանում սրբազանին, թող խորհուրդ տար ուղարկել նրան դէպի մեր կողմերը, որովհետև Կ. Պոլսի ինտրիգանների մէջ, ուր մի խումբ դաւաճաններ ստիպում են նրան ամեն տարի մի քանի անգամ հրաժարական տալ,—այդ դրութեան մէջ մարդիկ ունեցած առողջութիւնն էլ կը կորցնեն: Ռուսաստանցի, բայց Ռուսաստանին բոլորովին անծանօթ պ. Իվէկեանը, պէտք է հասկանայ, որ այժմեան Էջմիածինը Ներսէս Վ-րդի անտառի և լճի շնորհիւ այնպէս վատառողջ չէ, որպէս նա նկարագրում է, բացի դրանից, նա ունի իւր կողքին Բիւրականի հիանալի ամարանոցը իւր կաթողիկոսարանով: Մենք հանգուցեալ Գէորգ կաթողիկոսին տարեկան երեսուն և վեց հազար ռուբլի (թողեալ իւր մասնաւոր եկամուտները) վեհարանի ծախք էինք տալիս, բայց դուք Ներսէս սրբազանի հիւանդութիւնը ամրացնելու համար որքան էք տալիս պատրիարքարանի դատարկ սնդուկից...

Ներսէս սրբազանի հիւանդութիւնը, որպէս շատ ճիշտ նկատել էր «Ընձագանք» շաբաթաթերթը, պէտք է տեսնել քաղաքական համարել, այսինքն՝ որպէս պատրուակ զանազան տխուր հանգամանքների առաջը առնելու, քան թէ ֆիզիկական: Մեզ բաւական է միայն, որ նա առողջ և կենդանի մարդ է իւր խելքով և իւր գործունէութեան անխոնջ և անվատակելի եռանդով: Կ. Պոլսի մռայլոտ մթնոլորտը միայն վատ է ազդում նրա առողջութեան վրայ, պէտք է նրան դուրս հանել այդ ապականուած մթնոլորտից:

Գառնանք Խրիմեանին։

Դեռ 1873 թուին այդ տողերի գրողը «Մշակի» մէջ հրատարակեց մի ընդարձակ յօդուած «Մի քանի գծեր Խրիմեանի կեանքից» վերնագրով։ Այն ժամանակից անցել է ուղիղ տասն տարի։ Եթէ մենք կամենայինք նրա կենսագրութեան վրայ աւելացնել մի քանի պայծառ գծեր ևս, որ արտայայտուել են այդ տասն տարուայ ընթացքում, —ուղիղ կը ստանայինք մեր Ֆ-րդ դարու Սահակ պարթևի կամ Ներսէս մեծի ճիշտ պատկերը, որոնք Հայոց պատմութեան մէջ անմահ անուն են թողել։

Խրիմեանին Հայոց ամբողջ ազգը «Հայրիկ» է կոչում։ Աշխարհի բոլոր փայլուն տիտղոսների մէջ չը կայ մէկը, որ այդ համեստ կոչման նման բովանդակէր իւր մէջ այնքան ընդարձակ զգացմունք, սէր և յարգանք։ Դա փառքի և աստիճանի տիտղոս չէ, որ պաշտօնական անշունչ թղթերով են տալիս. դա այն որդիական կոչումն է, որ բղխում է կենդանի սրտից,—մի կոչում, որ ընտանիքի անդամները տալիս են գերդաստանի գտառատ հօրը։ Խրիմեանը Հայկական մեծ գերդաստանի Հայրն է։

Նրա ամբողջ կեանքը ներկայացնում է արկածների մի նշանաւոր շարք, մի երկայն շղթայ, որի իւրաքանչիւր օղակը արտայայտում է նրա բարձր առաքինութիւնը և նրա օգտաւէտ գործերը։ Այդ շղթան կռել և կոփել է նա իւր դառն աշխատանքով և անվաստակելի եռանդով։ «Հրաւիրակ Սրարատեանը» նրա խորին ժողովրդասիրական ոգու Հայելին է. նրա երկար տարիներով հրատարակած «Սրծիւ Վասպուրականի» ամսագիրը, նրա մտքի բարձր թռիչքն է.

Վարագայ վանքի ժառանգաւորաց դպրոցը, իւր տպարանով և երկրագործական ուսումնարանով, նրա գործերից ամենափոքրիկն է։

Ուրեմն ինչով կարող է Հայոց ազգը ցոյց տալ իւր երախտագիտութեան զգացմունքը դէպի այդ երկու պաշտելի եկեղեցականները, Ներսէսը և Խրիմեանը, եթէ ոչ նրանով, որ հրաւիրէ այդ արթուն և քաջ հովիւներից մէկին մեր Լուսաւորիչ Հօր սուրբ աթոռը, որը ժառանգելու համար նրանք արժանի են կացուցել իրանց անձը մ ի մ ի ա յ ն գ ո ր ծ ո վ, և որոնց պայծառ անցեալը մեծ երաշխաւորութիւն է խոստանում նրանց ապագայ գործունէութեան համար։

Հետևեալ գլխում կը խօսենք, թէ մենք ռուսաստանցիներս, ինչ եպիսկոպոսներ ունենք, որոնց վրայ կարելի կը լիներ մատնացոյց անել։

IV.

Նախորդ գլխում մենք խօստացանք ցոյց տալ, թէ մենք՝ ռուսաստանցիներս ինչ եպիսկոպոսներ ունենք, որոնց վրայ կարելի լինէր մատնացոյց անել, իբրև կաթողիկոսական աթոռի արժանաւոր անձինքների վրայ։ Նախորդ գլխում մենք և այն միտքն էինք յայտնել, որ մի ընտրելիի արժանաւորութեան ամենահաստատուն երաշխաւորութիւնն այն է, երբ ազգը նրան ճանաչում է, սիրում է, երբ նրա վրայ վստահութիւն ունի և երբ այդ անձը վայելում է ընդհանուր ժողովրդականութիւն

Գուցէ մեզ կը հարցնեն, թէ ինչու մենք կաթողիկոսացուի ժողովրդականութիւնը ընդունում ենք որպէս ամենագլխաւոր պայմաններից մէկը։ Ի՞նչու անպատճառ պահանջում ենք, որ ազգը ճանաչէր նրան, և ճանաչէր լաւ տեսակէտից։ Այդ հարցերը պէտք է պարզել, որովհետև դրանցից կախումն ունի իւրաքանչիւր ընտրելիի արժանաւորութեան չափը։

Անվիճելի է, որ կաթողիկոսի յարաբերութիւնները ժողովրդի հետ, բացի այն կէտերից, որ որոշուած են եկեղեցական և մարմնաւոր իշխանութեան օրէնքներով,—շատ դէպքերում այն յարաբերութիւնները

հիմնվում են միմիայն բարոյական և փոխադարձ հաւատարմութեան սկզբունքների վրայ։ Օրինակ, կաթողիկոսը իւր կոնդակներով դիմում է ժողովրդին և պահանջում է դրամական օժանդակութիւն այս կամ այն հիմնարկութեան համար։ Ժողովուրդը իրաւունք ունի բացէ ի բաց մերժել նրա պահանջը, և ոչ մի օրէնք չէ կարող հարկադրել ժողովրդին, որ կաթողիկոսին մի նոր և արտակարգ հարկ վճառէ։ Իսկ եթէ վճառում է նա, այդ անում է իւր բարի յօժարութեամբ, հաւատացած լինելով, որ իւր արծաթը չի կորչի, այլ օգտաւէտ գործի համար կը ծախսուի։ Եւ որպէս զի ժողովուրդը այնպիսի հաւատ ունենայ դէպի իւր կաթողիկոսը, այդ վերջինը պէտք է վաղուց դրաւած լինի նրա վստահութիւնը, այլ խօսքով, նա պէտք է ժողովրդականութիւն ունենայ։

Կան և կարող են պատահել շատ դէպքեր, որ կաթողիկոսը դիմում է ժողովրդին. նրա ձայնը այն ժամանակ միայն լսելի կը լինի, երբ ժողովուրդը ճանաչում է նրան, և ճանաչում է ոչ թէ այն առիթով, որ նա կաթողիկոս է, այլ նրա հոգեկան և բարոյական յատկութիւններով, որ նա իւր սիրելին է։

Ներսէս պատրիարքը և Խրիմեան Հայրիկը Տաճկաստանի սովի ժամանակ դիմեցին բոլոր կողմերի հայերին, որոնց թւում և մեզ ռուսաստանցիներիս, և ամեն տեղից ահագին գումարներ հանգանակեցին սովելոց համար։ Հանգուցեալ Գէորգ կաթողիկոսը, որ նրանցից աւելի բարձր դիրք ունէր, նոյն նպատակով դիմեց Ռուսաստանի հայերին, բայց ոչինչ հաւաքել չը կարողացաւ։ Ի՞նչ էր պատճառը,—այն, որ առաջինները մեծ ժողովրդականութիւն ունէին,

իսկ վերջինը — ոչ։

Հանգուցեալ Գէորգ կաթողիկոսը իւր ժողովրդականութիւնը վերջին ժամանակներում այն աստիճան կորցրել էր, որ երբ իւր թեմական առաջնորդների ձեռքով տպուած տոմսակներ տարածեց Ռուսաստանի բոլոր վիճակներում և կամենում էր ճեմարանի համար մի նոր հանգանակութիւն անել տալ, — այդ տոմսակները ամեն տեղից յետ ուղարկուեցան և ոչ ոք չը յօժարուեցաւ մի կոպէկ անգամ վճառել։

Յիշեալ օրինակներից, կարծեմ, բաւական պարզ է, թէ ինչու մենք անդադար շէշտում ենք այդ բառերի վրայ, թէ կաթողիկոսական ընտրելին պէտք է ժողովրդականութիւն ունենայ, պէտք է յայտնի լինի ազգին, պէտք է իւր անցեալով ժողովրդից սիրուած և նրա վստահութիւնը գրաւած անձն լինի։ Կարող է մէկը շատ ձիրքեր և ընդունակութիւններ ունենալ, բայց երբ ժողովուրդը նրան չէ ճանաչում և չէ սիրում, այլ ևս ինչ գործ կարող է կատարել նա։ Եւ մենք հէնց այդ տեսակէտները գլխաւորապէս ի նկատի առնելով, պէտք է քննենք մեր ընտրելիներին։

Կաթողիկոսական ընտրութիւնը այնպիսի մի ծանրակշիռ գործ է, որ այստեղ ամեն մի անձնական կրքեր, ամեն մի անձնական համակրութիւններ կամ հակակրութիւններ պէտք է լռեն, և ի նկատի պիտի առնուի միմիայն հայաստանեայց եկեղեցու շահեր և հայ ժողովրդի բարին։ Մի ամբողջ ազգի բարոյական և հոգևոր վիճակը մի անձի ձեռքը յանձնել մեծ զգուշութիւնների և խորին քննութեան կարօտ է։ Այո, եղել են ժամանակներ, որ ոչ թէ ժողովուրդը, այլ

զանազան կուսակցական խմբիկներ կաթողիկոսներ են ընտրել, բայց այդ ժամանակները եղել են Լուսաւորչի սուրբ աթոռի ամենաթշուառ ժամանակները...

Խօսենք մեր մի քանի եպիսկոպոսների մասին:

Վերջին ժամանակներում լրագրներում յիշուեցաւ Թուրադեան Մէլքիսէդէկ եպիսկոպոսի անունը, այդ անձը, իրաւ, ռուսաստանցի է, բայց նրան իսկապէս տաճկաստանցի պէտք է համարել, որովհետև երիտասարդական հասակում այստեղից հեռացել է, ապրել է Երուսաղէմի վանքում, այժմ Զմիւռնիայի առաջնորդ է: Տաճկաստանի Հայոց մամուլը, որը թէ իւր գովասանքների և թէ իւր պարսաւների մէջ չափ չունի այդ անձի մասին մինչև այսօր շատ փոքր է խօսացել, և համարեայ նրան անյայտութեան մէջ է թողել, և գուցէ ինքը սրբազանը իրան յայտնի կացուցանելու ձեռքերից զուրկ է եղել,— վերջին կարծիքը մենք աւելի հաւանական ենք համարում: Տաղանդները չեն թաղնվում, այլ բնականապէս ինքն ըստ ինքեան յայտնվում են: Որքան լսել ենք, որքան կարդացել ենք այդ անձի մասին, նա գուցէ մի վիճակի հոգևոր առաջնորդ լինելու արժանաւորութիւն ունի, և հաւաստի ենք, որ իւր գործը առանց աղմուկի, լռիկ-մնջիկ առաջ կը տանէ, բայց ընդհանուր կաթողիկոսի աթոռից դեռ շատ հեռու է կանգնած նա: Եթէ մինչև այսօր Տաճկաստանից Էջմիածին կաթողիկոսներ են հրաւիրուել, նրանք չեն եղել հասարակ վիճակային առաջնորդներ, այլ վեր են առնուել ուղղղ պատրիարքական աթոռից: Պատրիարքական աթոռը սանդուղքի վերջին աստիճանն է, որտեղից կարելի է կաթողի-

կոսական աթոռի վրայ բարձրանալ։ Մեր վերջին կաթողիկոսները, Մատթէոսը և Գէորգը, Կ. Պոլսի պատրիարքներ էին։ Ներսէսը և Խրիմեանը, որոնց մասին խօսեցինք մեր նախորդ գլխում, Կ. Պոլսի պատրիարքներ են եղել և այժմ են։ Պէտք է ընտրելին իւր շատ արժանաւորութիւնների հետ և նշանաւոր դիրք ունեցող անձն լինի, որպէս զի, հեղինակութիւն ունենայ երկու կողմերի Հայերի վրայ ևս, թէ այստեղ և թէ Տաճկաստանում։ Եթէ ստիպուած լինէինք հասարակ թեմական առաջնորդներից կաթողիկոսներ ընտրել, Մենք մուրադեանի նմանը, և գուցէ նրանից աւելի բարձր արժանաւորութեան տէր եպիսկոպոսներ Ռուսաստանում ևս շատ ունենք, որոնց մասին աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել։

Այդ կարգի եպիսկոպոսներից են՝ Թիֆլիսի թեմի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսը, Աստրախանի թեմի առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսը, Երևանի թեմի առաջնորդ Սուրէնեան Գէորգ եպիսկոպոսը, Սինոդի անդամ և գանձապահ Ներսէս եպիսկոպոսը, որոնք բոլորը վայելում են մեր խորին համակրութիւնը իբրև թեմական լաւ առաջնորդներ և իբրև արթուն հովիւներ։ Իսկ այդ նորահաս եպիսկոպոսները գուցէ ժամանակով կարող են կաթողիկոսական արժանաւոր կանդիդատներ լինել, բայց դեռ այնքան ժողովրդականութիւն չեն ստացել, որ կաթողիկոս դառնան։ Նրանց ճանաչում են Ռուսաստանի Հայերը, բայց ազգը դեռ նրանց չէ ճանաչում։

Մենք ունենք մի Ծերունի եպիսկոպոս ևս. դա Ներսէսեան ժամանակների ամենահին եպիսկոպոսնե-

ըից մէկն է։ Նրա ընկերները՝ Վեհապետեան Գէորգ եպիսկոպոսը և Ջալալեան Սարգիս եպիսկոպոսը վաղուց արդէն թողել են այդ աշխարհը, բայց նա դեռ մնում է, և գուցէ շուտով կը տօնէ իւր ութսունամեայ տարեդարձը։ Եթէ տարիների հնութիւնը պայման լինէր արժանաւորութեան, մենք շուտով կաթողիկոսական մատանին այդ ծերունու մատը կը դնէինք։

Ծերունին մի հանելուկային անձնաւորութիւն է. նրա կենսագրութեան մէջ խօսքեր շատ կան, բայց գործ չը կայ. դա այն մարդիկների տեսակետից է, որոնց մասին հրաշքներ են պատմում միամիտներին։

Մենք այդ ծերունու մասին չէինք խօսի, եթէ նրան և՛ս կաթողիկոսական ընտրելիների թւում չը դնէին։ Մենք դեռ հաւատացած ենք, որ նա իւր զառամեալ հասակում, երբ աշխոյժ, եռանդ և ամեն մտաւոր ու հոգեկան զօրութիւններ թուլանում են մարդու մէջ,—այդ հասակում աւելի բարւոք կը համարի ազօթքով պարապել, քան աշխարհային փառքի համար մտածել, որին, տարակոյս չը կայ, որ նա հազիւ թէ կը հասնի։

Ընհասարակ կաթողիկոսական ընտրելիների մասին դատելով, մենք այն կարծիքն ունենք, որ աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ կաթողիկոսը տաճկաստանցի լինէր։ Ի՞նչու։ Այդ մասին կան զանազան պատճառներ, որոնցից երկուսը միայն հարկաւոր ենք համարում առաջ բերել։ Նախ, մեր եպիսկոպոսների իւրաքանչիւրը ունի իւր առանձին կուսակցութիւնը, իւր մարդիկը, որոնք նրա կաթո-

զիկոս դառնալուց յետոյ, շատ հասկանալի է, որ կաշխատեն ձեռք ձգել այն պաշտօնները, որ կան մեր Հոգևոր կառավարութեան և ուսումնարանական վարչութեան շրջանակի մէջ։ Օրինակ, մի եպիսկոպոս թեմական առաջնորդէ, միւսն սինոդի անդամ է, մի վարդապետ այս և այն վանքի վանահայր է, մի պարոն կամ թեմական տեսուչ է և կամ դպրոցի տեսուչ է, և դրանք նորընտիր կաթողիկոսի կուսակցութեանը չեն պատկանում, նա, անտարակոյս, պիտի աշխատէ փոխել դրանց և ամեն տեղ իւր մարդիկը մտցնել։ Այստեղից առաջ կը գան, ինչպէս միշտ եղել է, շատ տարաձայնութիւններ, երկպառակութիւններ և դժգոհութիւններ թէ ժողովրդի մէջ և թէ Հոգևոր կառավարութեան մէջ մի կողմից, իսկ միւս կողմից, շատ արժանաւոր անձինք կը զրկուեն իրանց տեղերից և նրանց կը փոխարինեն վատերը։ Կուսակցական Հոգին, կաթողիկոսական աթոռից ծագելով, կը տիրապետէ և միաբանութեան մէջ, և Սինոդի մէջ, և ամբողջ Հոգևոր կառավարութեան մէջ։ Հետևանքը պարզ է։ Իսկ երբ կաթողիկոսը օտար երկրացի է, նա ոչ ոքի հետ հին կապեր չի ունենայ, կուսակցական ձև չի մտցնի իւր կառավարութեան մէջ, և միայն արժանաւորները գործերի գլուխը կանցնեն։

Դառնանք երկրորդ և ամենակարևոր պատճառին, թէ ինչու մենք աւելի նպատակայարմար ենք համարում, որ կաթողիկոսը տաճկաստանցի լինէր։

Ով որ փոքր ի շատէ տեղեակ է Էջմիածնի և Կ. Պոլսի պատրիարքարանի յարաբերութիւններին, անշուշտ նկատած կը լինի, որ 50-րդ թուականնե-

ըից սկսած, տաճկաստանցիք սկսեցին խիստ սառն աչքով նայել դէպի Էջմիածինը, համարելով նրան ոչ թէ ընդհանուր Հայոց Մայր աթոռ, այլ մի օտար հիմնարկութիւն։ Այդ սխալ կարծիքը աճեց ոչ միայն հասարակ ժողովրդի մէջ, այլ մինչև անգամ այդ ժողովրդի բաւական ընտիր և խելահաս գլուխների մէջ։ Պ. Մարկոս Աղաբէկեանը իւր գրուածքներով աւելի սաստկացրեց այդ կարծիքը։ Մենք աւելորդ ենք համարում մատնացոյց անել այլ անձինքների և գրուածքների վրայ, բաւական է յիշել պ. Խիէքճեանի վերջին յօդուածի այն կէտերը, ուր նա առաջարկում է ազգային ժողովին՝ երբէք թոյլ չը տալ, որ Էջմիածինը նուիրակներ ուղարկէ Տաճկաստան։ Ի՞նչ է կամենում ասել դրանով պ. Խիէկճեանը։ Նա շատ լաւ գիտէ, որ Էջմիածինը կարօտութիւն չունի Տաճկաստան նուիրակներ ուղարկել այնտեղից փողեր հաւաքելու համար։ Նա այն ևս գիտէ, որ Տաճկաստանի նուիրակները գալիս են այստեղից փող են տանում։ Վերջապէս, ինչ որ ասելու լինենք, այդ սառնութիւնը կը մնայ դարձեալ, միայն, Էջմիածնի բարձր հեղինակութիւնը պահանջում է, որ այդ սառնութիւնը վերացուի, որ տաճկաստանցիք հաւատ և վստահութիւն ունենան իրանց Մայր աթոռի վրայ։ Ի՞նչով կարող ենք օգնել այդ բանին։— Նրանով միայն, որ Էջմիածնի կաթողիկոսը պէտք է ընտրուի Տաճկաստանից։ Տաճկաստանցիք իրաւունք ունեն կասկածելու, երբ Էջմիածնում Սինոդի ամբողջ կազմակերպութիւնը բաղկացած է ռուսաստանցիներից բոլոր միաբանութիւնը ռուսաստանցի է, և եթէ կաթողիկոսն էլ ռուսաստանցի լինի, այլ ևս ինչ

վստահութիւն կունենան այդ սուրբ հիմնարկութեան վրայ, որ իրանց համար օտար են համարում։ Պէտք է նրանցից մէկը լինի այդ հիմնարկութեան մէջ։ Անհերքելի է, որ մեր վերջին երկու կաթողիկոսներից (Մատթէոսից և Գէորգից) յետոյ կազմուեցաւ մի բարոյական և հոգևոր կապ տաճկահայերի և ռուսահայերի մէջ, և Էջմիածնի ազդեցութիւնը աւելի տարածուեցաւ Տաճկաստանի վրայ։ Ի՞նչ էր պատճառը։ —Պատճառներ շատ կային, բայց գլխաւոր պատճառներից մէկն էլ այն էր, որ յիշեալ կաթողիկոսները տաճկաստանցի էին։ Դրանց օրերում աւելի յաճախ սկսեցին տաճկաստանցի վարդապետները Էջմիածնում եպիսկոպոս ձեռնադրուել և տարածուեց Տաճկաստանի վիճակներում։ Դա մեծ բան է։

Այժմ շատ պարզ է, թէ ինչու ենք մենք ցանկանում, որ ընդհանուր հայոց Պայր աթոռի հայրապետը ընտրուած լինէր Տաճկաստանից, և այդ ընտրեալները լինէին Ներսէսի և Խրիմեանի նման անձինք, որոնք բարձր հեղինակութիւն ունեն ամբողջ ազգի մէջ։

Հետևեալ գլխում մենք կը խօսենք այն հարցի վրայ, թէ ինչ միջոցներ պէտք է գործ դնել, որ ընտրելի կաթողիկոսը ազգի ընտրածը լինէր, և ոչ թէ մասնաւոր ինտերեսանտների։

V

Մենք անցեալ գլխում խոստացանք խօսել այն միջոցների վրայ, թէ ինչ պէտք է անել, որ նորընդիր կաթողիկոսը ժողովուրդի ընտրածը լինի և ոչ թէ մասնաւոր անհատների:

Փաստերի կարօտ չէ ապացուցանելու համար, որ մեր եկեղեցին ժողովրդական է, և մեր եկեղեցու հոգևոր գլուխը, ընդհանուր Հայոց Հայրապետը, ընտրվում է ժողովրդից: Այդ դրութիւնը աւելի հաստատեամբ պահպանվում էր Հայոց անկախութեան ժամանակ, պահպանուեցաւ և այնուհետև, երբ Հայաստանը բաժանուեցաւ զանազան պետութիւնների մէջ: Մահմեդական տիրապետողներն անգամ յարգում էին Հայոց եկեղեցու այդ հնաւանդ սովորութիւնը և իրանց ֆերմաններով հաստատում էին ժողովրդի ընտրեալին: Իսկ Էջմիածինը ռուսաց իշխանութեան ներքոյ ընկնելուց յետոյ, 1836 թուին, առանձին Պալաժենայով, որ ռուսաց օրէնքների մի մասն է կազմում, աւելի որոշ կանոններով սահմանուեցաւ կաթողիկոսի ընտրութեան եղանակը, պահպանելով այդ կանոնների մէջ այն հիմունքները, որ Հայաստանեայց եկեղեցու վաղեմի աւանդութիւնն էր:

Բայց ինչպէս էր կատարվում կաթողիկոսի ընտ-

բութիւնը —այդ մասին հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել, ի հարկէ, ոչ թէ սկսելով չորրորդ և հինգերորդ դարերից, այլ մեր մօտաւոր, շատ մօտաւոր ժամանակներից։

Մեզանում մի տեսակ մարդիկ, ոչ այնքան իրանց բարոյական արժանաւորութիւններով, որքան իրանց գործնական վարպետութիւններով, միշտ ձեռք ձգած են եղել հասարակական գործերի հոգաբարձութիւնը, և իբրև արտօնական ժառանգութիւն, վարուել են այդ գործերի հետ, որպէս կամեցել են։ Հարկաւոր էր եկեղեցու երեսփոխան ընտրել,—այդ մարդիկն էին ներս պրծնում. հարկաւոր էր դպրոցի հոգաբարձու ընտրել,—այդ մարդիկն էին հոգաբարձու դառնում. մի հարուստ մարդ էր մեռնում, այս կամ այն բարեգործական նպատակով մի նշանաւոր կտակ էր անում, —այդ մարդիկն էին կտակակատար դառնում. կաթողիկոս էր վախճանվում, հարկաւոր էր նորը ընտրել,— այդ մարդիկն էին հասարակութեան կողմից պատգամաւոր դառնում, մի խօսքով, մեր ուսումնարանական և եկեղեցական բոլոր գործերի մէջ դրանք միջամտութիւն էին անում, միամիտների աչքերում փոշի էին փչում և իրանց շահերին բաւականութիւն էին տալիս։ Այդ, կոնսիստորիաների և առաջնորդարանների մէջ մուկ որսացող կատուները, այդ, կրօնի, եկեղեցու սրբութեան անունով իրանց գրպանները պարարտացնող բարեպաշտները, իրանց անձը հասարակութեան առջև խոհեմ, խելացի և անշահասէր ցոյց տալու համար և՝ բաւական խորամանկութիւն ունէին։ Նրանք ամեն բան գիտէին, նրանց մօտ ամեն գաղտնիքներ կային, բայց ամեն մարդու

ասել չէին կարող, և եթէ նրանց այս կամ այն գործողութիւնը հասարակութեան աչքում վատ էր երևում, —հասարակութիւնն իրաւունք չունէր տրտնջալու կամ բացատրութիւն պահանջելու, որովհետև նոյն վատութեան մէջ մի լաւութիւն կար, որ նրանք պէտք է իբրև գաղտնիք պահէին։ Այսպէս էին խարում միամիտներին։ Իսկ եթէ նրանց այդ ծածկապահութեան վարագոյրը բարձրացնէիր, այնտեղ կը տեսնէիր դատարկութիւն և իրանց շահը միայն — աւելի ոչինչ։

Ժամանակակից մամուլը, որ պէտք է առաջնորդող լինէր հասարակութեան մտածութիւնների, որ պէտք է հասկացնէր նրան իւր իրաւունքները ու պարտաւորութիւնները,—մամուլը աւելի ևս թրմրեցնում էր հասարակութեանը, և աշխատում էր նրան միշտ անգիտակցութեան մէջ պահել։ Նոյն նենգաւոր մամուլի խաւարամիտ ներկայացուցիչը հէնց այսօր, երբ հասարակական կարծիքը բաւական զարթած է, երբ ունենք զարգացած մարդկանց մի խոշոր թիւ, որոնք չարը բարիից որոշել գիտեն,— այդ մամուլի ներկայացուցիչը դեռ ևս այնքան յանդգնութիւն ունի, որ աշխատում է հասարակութեան գլխի տակին կակուղ բարձ դնել, աշխատում է նրան քնացնել, ասելով. թողէք «ընտրողները» իրանց կաթողիկոսին ընտրեն, մի խանգարէք նրանց, նրանք լաւ են հասկանում իրանց բանը, մի պղտորէք հասարակութեան մտքերը և այլն։ Ո՞վքեր են այդ «ընտրողները», որոնք ամեն բան հասկանում են, իսկ մենք չենք հասկանում.—նոյն մարդիկը, որոնց մասին վերևում խօսեցինք, և մի

խմբագիր, որ քաղցած աղուէսի նման ամեն վեղարաւորի գրպանից հոտ է քաշում, որ տեսնէ, թէ ո՞րն է պարարտ, որպէս զի նրա կանդիտատուրան պաշպանէ։

Այդ մարդիկը դեռ ևս իրանց ողորմելի անցեալի մէջն են ապրում։ Նրանք չը գիտեն, որ ժամանակները, պայմանները և հանգամանքները փոխուել են, բայց իրանք մի և նոյնն են մնացել, ինչ որ էին քսան-երեսուն տարի առաջ։ Այդ մարդիկը սիրում են բուերի նման խաւարի մէջ դորձել, որովհետև լոյսը երևան կը հանէ նրանց խարդախութիւնները, և ամենին մատնացոյց են անում դէպի մթութիւնը, ասելով, տեսէք, ամեն ճշմարտութիւններ այնտեղ են թաղնուած։ Նրանք և մեզ ասում են, թէ իրաւունք չունէք քննադատել այս և այն կաթողիկոսական ընտրելիի ոչ արժանաւորութիւնները և ոչ թերութիւնները, որովհետև ամեն ճշմարտութիւններ նրանց մասին պահուած են Էջմիածնի և Կ. Պոլսի Ազգային ժողովի արխիւներում (այսինքն վարագոյրի ետևում)։ Իսկ այդ հրապարակախօսները կամ այն «ընտրողները» գիտեն արդեօք, թէ ինչ կայ արխիւներում. եթէ մի բան կայ, ինչու չեն ցոյց տալիս։

Հրապարակախօսի համար արխիւներ պէտք չեն, հրապարակախօսի արխիւը ընթացիկ կեանքն է իւր բազմատեսակ երևոյթներով, որ ամենի համար բաց է, ով որ դիտելու և քննելու ընդունակութիւն ունի։ Մեզ ինչ պէտք է գիտենալ, թէ Ներսէսի կամ Խրիմեանի մասին արխիւներում ինչ թղթեր կան. մենք քննում ենք նրանց իրանց գործերով, որ կատարուել

են բացարձակ հրապարակի վրայ, աշխարհի աչքի առջև։ Կամ ինչ իրաւունք ունենք ենթադրելու մի որևիցէ խիկարի մասին, որ իւր ամբողջ կեանքում ոչինչ լաւ բան չէ արել,—թէ նրա լաւ գործերի արձանագրութիւնները պահուած են այս և այն արխիւում։

Իսկ ինչու՞ են այդ խորհրդաւոր արխիւը մէջ ձգում։—Նրա համար միայն, որ իրանց կանդիտատի անգործունէութիւնը ծածկեն, հաւատացնելով ժողովրդին, որ, թէև նա յայտնի ոչինչ բան չի արել, բայց ծածուկ շատ բան է արել, որ գաղտնի պահուած են արխիւներում,—և ընդհակառակն,—մի արժանաւոր և պիտանի գործիչին մրոտել աշխատեն, մոլորեցնելով հասարակութեանը, որ նա, թէև ձեր աչքի առջև շատ գործեր է կատարել, բայց այդ բոլորը խաբէութիւն է, որովհետև արխիւներում նրա մասին շատ վատ թղթեր կան։

Այդ հասարակական գործերի խաբեբայ արխիւարիուսները, որոնց արխիւում իսկապէս ոչինչ չկայ, բացի այս և այն անձի մասին զզուելի բամբասանքներից,—միշտ ցոյց են տուել հասարակութեանը, թէ բոլոր հասարակական գործերի թելերի ծայրերը իրանց ձեռքումն է, թէ իրանք զանազան բարձր շրջանների հետ կապեր ունեն թէ իրանք իրաւունք ունեն վճռելու ամեն գործերը,—բայց երբ պատառում ես նրանց խաբեբայութեան վարագոյրը և ցոյց ես տալիս նրանց դատարկութիւնը, այդ ժամանակ կատաղում են, և սկսում են տգեղ հայհոյանքներ թափել։ Նոյն հայհոյանքները ընդունեցինք և մենք։ Բայց մենք վճռել ենք հայհոյանքներով չը պատասխանել նրանց, որովհետև

այդ մարդկանցը Հայհոյելն անգամ մեծ պատիւ է։

Մենք չենք վախչում ազնիւ բանակռուից և զանազան վիճելի հարցեր մշակելու համար օգտաւէտ ենք համարում այդ։ Իսկ երբ բուն հարցը մի կողմ դնելով, սկսում են իրանց անմաքուր ձեռքերով մեր անձնականութիւնը շօշափել,—այդ ժամանակ, մեզ ոչինչ չէ մնում անել, բայց միայն արհամարհանքով երես դարձնել դրանցից և շարունակել մեր գործը։

Մենք մի շարք յօդուածներով, մինչև ընտրութեան օրը, անդադար պիտի մշակենք կաթողիկոսական հարցը, և հաւատացած ենք, որ այժմ հասարակական կարծիքն այն աստիճան զարգացած է, որ կարող է որոշել օգտաւէտը վնասակարից, որ կարող է ճանանչել, թէ ովքեր են ժողովրդի ճշմարիտ բարեկամները. նրանք, որ Հայաստանեայց եկեղեցու պաշտպանների դիմակով աշխատում են վեր բարձրացնել Լուսաւորչի Սուրբ Աթոռի վրայ մի անարժան եկեղեցական, թէ նրանք, որ ցանկանում են որ այդ աթոռը իւր արժանաւոր ժառանգորդն ունենայ։

Դառնանք դէպի մեր խօսքը։

Մենք խոստացել էինք այս անգամ խօսել ընտրութեան եղանակի մասին։ Ինչպէս երևաց «Մշակի» №193-ում (1883 թ.) տպուած Բագուի թղթակցութիւնից, մեր գաւառում դեռ չը գիտեն, թէ ո՞ր քաղաքից և ինչպէս պէտք է ընտրել պատգամաւորներին Էջմիածին ուղարկելու համար։ Այդ անգիտութիւնը մենք վերաբերում ենք մեր մամուլի զանցառութեանը, մի կողմից, և մեր հոգևոր վարչութեան անտարբերութեանը, միւս կողմից, որ մինչև այսօր չեն ծանօթացրել ժողովրդին կարգ ու կանոնի հետ։

Նախ հարկաւոր ենք համարում դնել ցուցակը, թէ քանի ձայներով է ընտրվում ընդհանուր հայոց կաթողիկոսը և այդ ձայները որպէս են բաժանուած։

Ռուսաստանում.

Էջմիածնի սինոդն ունի	8 ձայն
Էջմիածնի միաբանութիւնն ունի . . .	7 —
6 թեմերի առաջնորդներն ունին . . .	6 —
6 թեմերից 6 աշխարհական պատգամաւորներ ունին	6 —
Ընդամենը . .	27 ձայն։

Նկատելու արժան է, որ Ռուսաստանի Հայերի 27 ձայնից 6-ը միայն պատկանում է ժողովրդի ներկայացուցիչներին, իսկ 21 ձայներ պատկանում են հոգևորականութեան ներկայացուցիչներին, ուրեմն, իսկապէս այստեղ ընտրողը ոչ թէ ժողովուրդն է, այլ հոգևորականութիւնը։

Տաճկաստան.

45 առաջնորդական թեմերից մի-մի թեմական առաջնորդներ և մի-մի աշխարհական պատգամաւորներ ունին . 90 ձայն։

Պարսկաստան.

Ընտրպատգամաւորի վիճակից թեմական առաջնորդն ունի	1 ձայն։
Նոյն վիճակից մի աշխարհական պատգամաւոր ունի	1 —

Հնդկաստանի և Սպահանի վիճակներից.

Թեմական առաջնորդն ունի . . .	1 ձայն
Մի աշխարհական պատգամաւոր ունի	1 —
Բոլոր ձայների գումարն է .	121

Կ. Պոլսի ազգային երեսփոխանական ժողովը իւր պատրիարգի հետ, իբրև ներկայացուցիչ ամբողջ Ֆռանկաստանի Հայոց ազգաբնակութեան, իրան սեպհականացնելով 90 ձայնի իրաւունքը, ուղարկում է Իջմիածին երկու պատգամաւոր, մէկը հոգևորական, միւսը աշխարհական, որոնք նոյնպէս 90 ձայնի իրաւունք են վայելում։ 1866 թուականում, այսինքն Հանգուցեալ Գէորգ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ, Կ. Պոլսի ազգային ժողովը ուղարկել էր Իջմիածին իբր պատգամաւոր այժմեան Ներսէս պատրիարգին և Ցակոբ Էֆէնդի Նորատունկեանին։

Պէտք է ի նկատի առնել, որ Ֆռանկաստանի պատգամաւորների կամքին չէ թողուած, որ նրանք ում համար և կամենային, նրա օգտին քուէ տային, այլ Ազգային ժողովը, նախ քան նրանց ճանապարհ դնելը, իւր որոշումն անում է և իւր ընտրելիների անունները տալիս է իւր պատգամաւորներին, պարտաւորացնելով նրանց, որ իւր ընտրելիների օգտին միայն քուէ տային։ Այդ դէպքում, մենք հաւատացած ենք, որ Ֆռանկաստանի պատգամաւորները ոչ կաշառուել կարող են և ոչ մեղանչել իրանց յանձնարարութեան դէմ, միայն փոքրակալի էր, աւելի ապահովութեան համար, փոխանակ երկու պատգամաւորի, ուղարկէինգոնէ երեքը։

Կաթողիկոսը, որպէս վերևում ցոյց տուինք, ընտրվում է 121 ձայնով, այդ ձայներից 27-ը պատկանում է Ռուսաստանի Հայերին, 4-ը Պարսկաստանի և Հնդկաստանի Հայերին, իսկ 90-ը Տաճկաստանի Հայերին։ Զատ պարզ է, Տաճկաստանցիք ընտրող կը լինեն, որովհետև ձայների մեծամասնութիւնը նրանց կողմն է։ Մենք դրա դէմ ասելիք չունենք, մենք խոնարհվում ենք իրաւունքի առջև, ընդունելով, որ Տաճկաստանի Հայերը ազգի մեծամասնութիւնն են կազմում։ Միայն ցանկալի է, որ Կ. Պոլսի ազգային ժողովը լաւ կազմակերպուած լինէր, իւր պակաս անդամների թիւը լրացնէր, և այն մեծ սխալը չը գործէր, ինչ որ արաւ 1858 թուականին, հանդուցեալ Մատթէոս կաթողիկոսի ընտրութեան ժամանակ, որ փոխանակ իւր կողմից Էջմիածին պատգամաւորներ ուղարկելու, իւր իրաւունքը օտարներին յանձնեց...

Եւ այսպէս, Տաճկաստանի պատգամաւորները, և որքան մեզ յայտնի է, Պարսկաստանի պատգամաւորները նախապատրաստուած են ներկայանում կաթողիկոսի ընտրութեան ժողովին, այսինքն՝ այն հասարակութեան կողմից, որ նրանք ուղարկուած են լինում, պատուէր են ստանում, թէ իրանց քուէն ում օգտին պէտք է տան։ Իսկ Ռուսաստանի պատգամաւորները ներկայանում են անպատրաստ։ Ռուսաստանի 6 թեմերը ընտրում են 6 աշխարհական պատգամաւոր և առաջնորդների հետ ուղարկում են Էջմիածին։ Բայց թեմական ժողովուրդը իւր պատգամաւորներից խոստում չէ առնում, թէ նրանք ում օգտին պէտք է քուէ տան, այլ թողում է նրանց կամքին։ Այդ, մեր կարծիքով, ուղիղ չէ։ Եթէ մի հասարակութիւն ընտրու-

թեան համար ուղարկում է իւր պատգամաւորին, այդ հասարակութիւնը պէտք է նախապէս գիտենայ, թէ իւր ներկայացուցիչը ում կանդիտատուրան կը պաշտպանէ և ում օգտին քուէ կը տայ,—այլապէս այդ պատգամաւորը չի լինի այն հասարակութեան բաղձանքների թարգմանը։ Եթէ ի նկատի առնենք, թէ Մատթէոս և Գէորգ կաթողիկոսների ընտրութեան ժամանակ Ռուսաստանի թեմերից ինչ պատգամաւորներ են ուղարկուել Ս. Էջմիածին, մեր պահանջը շատ հասկանալի կը լինի։ Այդ առիթով մենք կը շարունակենք խօսել հետևեալ գլխում։

VI

Մենք նախորդ գլխում կանգ առանք այն տեղի վրայ, թէ մեր վեց թեմերից ընտրուած պատգամաւորները պէտք է թեմական հասարակութեան բաղձանքների թարգմանը լինեն և իրանց քուէն տան յօգուտ այն ընտրելիի, որին հայրապետական աթոռին արժան է համարում թեմական ժողովուրդը։

Այստեղ ծագում է մի հարց, արդեօք թեմական ժողովուրդը ինչ եղանակով կարող է իւր ցանկութիւնը յայտնել իւր պատգամաւորին, թէ ինքը ումն է արժան համարում։ Դա շատ հեշտ է, միայն պէտք է հասարակութեանը ծանօթացնել այն ձևերի հետ, թէ ինչպէս են ընտրվում թեմական պատգամաւորները։ Մինչդի և մարմնաւոր իշխանութեան տուած հրահանգների համեմատ, թեմական առաջնորդների միջոցով, ամեն մի թեմի իւրաքանչիւր վիճակից (ուր կան առաջնորդական յաջորդներ կամ հոգևոր գործակալներ) ընտրվում են երկու երեսփոխաններ, որոնք հաւաքվում են թեմական քաղաքում և բոլորը միասին ընտրում են մի պատգամաւոր Էջմիածին ուղարկելու համար։ Ահա այդ երեսփոխանները, որպէս թեմական հասարակութեան ներկայացուցիչներ, կարող են թեմական առաջնորդի հետ ժողով կազմել իրանց ընտրելիներին նախապէս որոշել, յետոյ

իրանց պատգամաւորից խոստումն առնել, որ նա իւր քուէն իրանց որոշած կանդիտատի օգտին տայ, և ոչ մի ուրիշի համար։ Ի հարկէ, պատգամաւորը և՛ս իւր բարոյական արժանաւորութիւններով պէտք է լինի այնպիսի անձն, որ չը դաւաճանէ իւր խոստմանը։ Եւ այսպիսով, պատգամաւորը կը լինի ճշմարտապէս թեմական ժողովրդի ներկայացուցիչը և նրա քուէն կը համարուի հասարակութեան ձայնի արտայայտութիւն։ Բայց մինչև այսօր, մեր վերջին կաթողիկոսների ընտրութեան ժամանակ, այսպէս չէ եղել. ամեն մի թեմ ուղարկել է Էջմիածին իւր պատգամաւորին, առանց կանխապէս նրանից խոստում առնելու, թէ նա ում կանդիտատուրան պէտք է պաշտպանէ։

Պատգամաւորների վրայ խօսելով, չենք կարող առանց նկատողութեան թողնել մի այլ, բաւական աչքի զարկող երևոյթ։ Երբ կարդում ենք մեր վերջին կաթողիկոսների ընտրութեան համար Էջմիածին ուղարկուած պատգամաւորների ցուցակը, տեսնում ենք, որ համարեա բոլորն էլ զանազան մանր և խոշոր աստիճանաւորներ են եղել։ Մարդիկ, որ իրանց կեանքում մի հայոց լրագիր չեն կարդացել, մարդիկ, որ ծանօթ չեն Հայաստանեայց եկեղեցու ոչ անցեալի և ոչ ներկայի հետ, մարդիկ, որ չը գիտեն Էջմիածնի ու նրա ծայրագոյն հայրապետի բարձր նշանակութիւնը, թէ ինչ յարաբերութիւններ ունի նա Ռուսաստանի հայ հասարակութեան հետ մասնաւորապէս, և այլ պետութիւնների մէջ ապրող հայ հասարակութեան հետ ընդհանրապէս, վերջապէս մարդիկ, որ երբէք չեն հետաքրքրուել մեր հոգևորականների կեանքով ու

գործունէութեամբ, և չեն ուսումնասիրել մեր հոգևոր կառավարութիւնների պայմանները, թէ այստեղ և թէ օտար երկրներում, — այս տեսակ մարդիկ, շատ հասկանալի է, որ իրանց կարծիքների և ընտրութիւնների մէջ կարող են սխալներ գործել։

Մենք կարծում ենք, որ մինչև այժմ նոյն իսկ մեր ժողովուրդը կաթողիկոսական ընտրութեան վրայ նայել է ոչ թէ որպէս մի եկեղեցական սուրբ խորհուրդի վրայ, այլ որպէս մի փառաւոր հանդիսի վրայ, և այդ պատճառով, աշխատել է նոյն հանդէսին վայելուչ մարդիկ ուղարկել, որոնք աչքի ընկնէին աւելի իրանց արտաքին փայլով, քան թէ ընտրութեան սուրբ խորհրդի մեծութեան ու վսեմութեան հասկացողութեամբ։

Այս ասելով, մենք ամենևին նպատակ չունենք յայտնել այն միտքը, թէ ժողովրդի պատգամաւորները պէտք է աստիճանաւորներից ընտրուած չը լինեն։ Պատգամաւորներ կարող են ընտրուած լինել ժողովրդի ամեն դասակարգից, լինէր նա աստիճանաւոր, արհեստաւոր, վաճառական, խմբագիր, վարժապետ, մի խօսքով, ամեն պարապմունքի մարդիկ, միայն թէ նրանք յայտնի լինէին իրանց հասարակութեան մէջ, որպէս խղճմտաւոր և գործին ծանօթ անձինք, և տեղեակ լինէին Հայաստանեայց եկեղեցու և նրա հոգևոր կառավարութեան ներկայ պահանջներին։

Հանգուցեալ Ներսէս, Մատթէոս և Գէորգ կաթողիկոսների ընտրութեան մասին սինոդի կազմած արձանագրութիւնների մէջ տեսնում ենք, որ մեծ անպատեհութիւններ են ծագում, երբ այս և այն տեղից ընտրուած պատգամաւորները չեն կարողա-

նում նշանակած ժամանակին Էջմիածնում ներկայ գտնուել։ Բացակայութեան պատճառները կարող են զանազան լինել, կամ հիւանդութիւն, կամ մի անձնական կարևոր գործ արգելք է դնում։ Ոմանք տեղի հեռաւորութեան կամ ծախքերի ծանրութեան համար չեն կարողանում ներկայանալ։ Այդպիսիներին զրում են բացակաների ցուցակում։ Այդ անպատեհութեան առաջն առնելու համար, մինչև այժմ ոչինչ կարգադրութիւն չէ եղել։ Եւ որպէս զի բացակաների տեղը պարապ չը մնայ, այդ մասին մենք կառաջարկենք մի քանի հնարներ։ Նախ, աւելի կանոնաւոր կը լինէր, որ իւրաքանչիւր թեմ իւր պատգամաւորին ընտրելու ժամանակ, ընտրէր և մի կանդիտատ նրա համար. եթէ առաջինը չէր կարող գալ, նրա պաշտօնը կը կատարէր երկրորդը, այսինքն՝ կանդիտատը։

Այդպիսի դէպքերում, երբ մի պատգամաւոր անձամբ չէր կարողանում ներկայ գտնուել կաթողիկոսի ընտրութեան ժողովին, նա իւր ձայնը տալիս էր կամ Էջմիածնի միաբանութեանը, կամ սինոդին և կամ մի մասնաւոր մարդու։ Գոնէ մինչև այժմ այսպէս է եղել սովորութիւնը։ Եւ այդ անում էին ոչ թէ առանձին պատգամաւորներ, այլ ամբողջ ժողովուրդների ներկայացուցիչներ, որպէս է Կ. Պոլսի պատրիարքարանը։ 1858 թուականին, այսինքն Պատրէոս կաթողիկոսի ընտրութեան ժամանակ, Կ. Պոլսի պատրիարքարանը իւր Ազգային Գերագոյն ժողովի հետ, իբրև ներկայացուցիչ ամբողջ տաճկահայերի կողմից, իրանց ձայնը (90 քուէի իրաւունքով) առանձին հաւատարմագրով տուեցին Իշխան Վա-

սիլ Օսնպովիչ գեներալ Բէբութովին։ Եւ որովհետև իշխանը վախճանուեցաւ նախ քան կաթողիկոսի ընտրութիւնը, այդ պատճառով, Կ. Պոլսի պատրիարգը և Ազգային Գերագոյն ժողովը նոյն իրաւունքը յանձնեցին իշխան Իսակ Սիմօնիչ Թումանովին և ազնուական Երել Եագօրիչ Գուրգենբէգովին, որոնք ներկայացան կաթողիկոսի ընտրութեան ժողովում որպէս Տաճկաստանի Հայերի կողմից լիազօր պատգամաւորներ։

Կաթողիկոսի ընտրութեան համար ժողովրդից ընտրուած պատգամաւորները, երբ անձամբ չեն կարողանում ներկայանալ, ամենևին իրաւունք չունեն իրանց ձայնը կամ քուէն մի ուրիշին յանձնել, որպէս փոխանորդի, որովհետև դա հակառակում է Պալաժէնիայի 14-րդ յօդուածին, ուր պարզ ասուած է. «Այսոքիկ ընտրեալ պատգամաւորք (եկեղեցական և աշխարհական) եթէ չը կարասցեն ներկայանալ անձամբ ի վանս Էջմիածնի ցնշանակեալ ժամանակն վասն ընտրութեան պատրիարգի, ունին իրաւունս յայտնել գրութեամբ զդատողութիւն իւրեանց՝ հաստատելով զայն ի սինհոդոսն Էջմիածնի»։

Այս յօդուածի իմաստից հասկացվում է, որ իւրաքանչիւր պատգամաւոր, երբ չէ կարողանում անձամբ ներկայ գտնուել կաթողիկոսի ընտրութեան ժողովին, իրաւունք ունի գրութեամբ յայտնելու իւր դատողութիւնները, թէ նա որ եկեղեցականին աւելի յարմար է համարում կաթողիկոս ընտրելու, և նրա կարծիքը ընդունվում է որպէս նրա քուէն։ Այդ միտքը աւելի բացատրուած է Պալաժէնիայի 17-րդ յօդուածի մէջ ևս։

Մենք այդ մասին երկար չէինք խօսի, եթէ մեր հասարակութիւնը կամ օտար երկրներում ապրող հայերին ճշմարտութեամբ յայտնի լինէին կաթողիկոսի ընտրութեան համար սահմանուած կարգ ու կանոնները։ Մատթէոս կաթողիկոսի ընտրութեան ժամանակ Պզահանի և Հնդկաստանի հայոց պատգամաւորները, տեղի հեռաւորութեան պատճառով, չը կարողանալով անձամբ ներկայ գտնուել, զրկուեցան ընտրութեանը մասնակցելուց։ Բայց եթէ նրանք տեղեակ լինէին կանոնների հետ, կարող էին իրանց կարծիքը և ցանկութիւնը թղթով յայտնել։ Հեռագիրը և փոստային կանոնաւոր յարաբերութիւնները այժմ աւելի հեշտացրել են այդ գործը։

Այսքան մեր աշխարհական պատգամաւորների մասին, մի քանի խօսք էս մեր հոգևոր պատգամաւորների մասին։

Ռուսաստանի 6 թեմերից ընտրվում են 6 աշխարհական և 6 հոգևորական պատգամաւորներ։ Աշխարհական պատգամաւորների վրայ խօսելով, մեր յօդուածի սկզբում այն միտքը յայտնեցինք, որ նրանք պէտք է լինեն իրանց ընտրող հասարակութեան կամքի և ցանկութեան թարգմանը և նրանց քուէն պէտք է լինի արտայայտութիւն նոյն հասարակութեան ձայնի։ Այստեղ ծագում է մի հարց, արդեօք հոգևորական պատգամաւորներն էլ պէտք է ենթարկուեն հասարակութեան կամքին, եթէ նրանք ազատ են իրանց ընտրութեան մէջ, և ում օգտին կամենան, կարող են քուէ տալ։

Այդ հարցը վճռելու համար հարկաւոր ենք հա-

մարում գնել այստեղ Պալաժէնիայի 13-րդ յօդուածը, ուր ասուած է.

«Իւրաքանչիւր վիճակ Լուսաւորչական Հայոց առ ընտրութիւն պատրիարգի նշանակէ զերկուս պատգամաւորս՝ զմի եկեղեցական և զմի աշխարհական։ Պատգամաւորն եկեղեցական պարտի լինել կամ նոյն ինքն թեմական առաջնորդն, կամ այլ ոք եկեղեցական նշանակեալ ի նմանէ։ Իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յամենայն իշխանաւորաց, ի հարիւրապետաց (յիւզբաշաց, ի մելիքաց) և այլոց պատուաւոր աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ՝ որոց են իրաւունք ընտրութեան ըստ վաղեմի ծիսի այսր եկեղեցւոյ»։

Յօդուածի իմաստից պարզ է, որ, ինչպէս աշխարհական պատգամաւորին, այնպէս էլ հոգևորական պատգամաւորին նշանակողը կամ ընտրողը վիճակի հասարակութիւնն է։ Եթէ աշխարհական պատգամաւորը պէտք է լինի հասարակութեան ձայնի արտայայտիչ, շատ հասկանալի է, որ նոյնը պարտաւոր է լինել և հոգևորական պատգամաւորը։

Մեզ դեռ յայտնի չէ, և սինոդի «Արարատ» ամսագրի մէջ տպած պաշտօնական արձանագրութիւնների մէջ այդ մասին ոչինչ չենք գտնում, թէ մինչև այսօր մեր թեմերի հոգևորական պատգամաւորները ինչպէս են ներկայացել կաթողիկոսի ընտրութեան ժողովին. արդեօք իրանց անձնական ձայնով, թէ նրանք միացել են աշխարհական պատգամաւորների հետ և երկուսը միասին արտայայտել են այն հասարակութեան ձայնը, որի կողմից ընտրուած և ուղարկուած են եղել։

Այդ հարցը պարզելու համար հարկ է դիմել մեր եկեղեցական կառավարութեան ու մեր եկեղեցու ոգուն և նրա աւանդական սովորութիւններին։

Հայկական եկեղեցին, այդ բառի բուն աւետարանական նշանակութեամբ, միացնում է իւր մէջ Քրիստոսի հաւատացեալներին, իբրև մի անբաժան մարմին, որի մէջ թէ հոգևորականը և թէ աշխարհականը, որպէս նոյն մարմնի անդամներ, սերտ կերպով կապուած են միմեանց հետ. առանձնութիւններ չը կան այդ մարմնի մէջ, բոլորը անդամներ են։ Եկեղեցականը, ինչ աստիճանի և պատկանէր նա՝ կաթողիկոս, եպիսկոպոս կամ քահանայ, ժողովրդի ընտրեալն է՝ իւր հոգևոր պէտքերը մատակարարելու համար։ Այդ է պատճառը, որ ասում ենք մեր եկեղեցին ժողովրդական է։

Տաճկաստանի Հայ հասարակութեան մէջ աւելի ճիշտ կերպով պահպանուել է եկեղեցական կառավարութեան ժողովրդականութիւնը։ Այստեղ պատրիարքը, թեմական առաջնորդը, ծխական քահանան, բոլորը ընտրվում են ժողովրդից։ Կաթողիկոսի ընտրութեան վերաբերութեամբ տաճկաստանցիք նոյնպէս պահպանել են իրանց ժողովրդական իրաւունքները։ Այդ պարզ տեսնվում է այն պաշտօնական գրութիւններից, որով նրանք մասնակցել են մեր կաթողիկոսների ընտրութեան մէջ։ Նրանցից երևում է, որ թէ պատրիարքները և թէ թեմական առաջնորդները առանց ժողովրդի համաձայնութեան առանձին կամք կամ ձայն չեն ունեցել։

Յիշեալ սովորութիւնը աւելի կանոնաւոր կերպարանք ստացաւ Կ. Պոլսի Ազգային Սահմանադրու-

թեան հաստատուելուց յետոյ, երբ ազգային երեսփոխանական ժողովը իւր պատրիարքի նախագահութեամբ դարձաւ ամբողջ Տաճկաստանի հայ ժողովրդի ներկայացուցիչ։ Իսկ սահմանադրութեան հաստատուելուց առաջ, Տաճկաստանի պատրիարգարանները (Կ. Պոլսի և Երուսաղէմի) և բոլոր թեմական առաջնորդները մասնակցում էին Էջմիածնի կաթողիկոսի ընտրութեանը առանձին-առանձին։ Եւ որովհետև զանազան հանգամանքների պատճառով նրանք չէին կարողանում անձամբ ներկայանալ կամ յատուկ պատգամաւորներ ուղարկել, այդ պատճառով իրանց ցանկութիւնը յայտնում էին գրաւոր կերպով։ Նրանց թղթերը ծառայում են մեզ համար՝ որպէս հաստատուն ապացոյցներ, որ աշխարհականների ձայները երբէք բաժանուած չեն եղել միմեանցից, այլ նրանց մէջ եղել է միշտ կատարեալ համաձայնութիւն։ Որովհետև երբէք չէ պատահել որ թեմի ժողովուրդը մէկ ընտրելի համար ձայն տար, իսկ թեմական առաջնորդը կամ պատրիարգը մի ուրիշ ընտրելի համար ձայն տար։ Թէ ժողովրդի ներկայացուցիչները և թէ հոգևորականութեան ներկայացուցիչները միշտ միասին են գրել իրանց թղթերը, միասին են ստորագրել և փոխադարձ համաձայնութեամբ ուղարկել են Ս. Էջմիածին։

Մեր եկեղեցու այդ հնաւանդ սովորութիւնները ի նկատի առնելով, մենք կարծում ենք, որ մեր Ռուսաստանի, թեմական առաջնորդներն էլ պէտք է համաձայնութիւն կայացնեն իրանց թեմական հասարակութեան հետ և իրանց ձայները չառանձնացնեն աշխարհական պատգամաւորների ձայ-

նից։ Այդ է պահանջում մեր ժողովրդական եկեղեցու ոգին, այդ են պահանջում և եկեղեցու շահերը, —իսկ այլապէս, մենք կը ստեղծէինք մի կղերական մնասակար ուղղութիւն, որ իւր առանձին շահերը, նպատակներն ու ձգտումները կունենար...

ՅԱՆԿ

1. Ազգ.
2. Մշակ.
3. Մի քանի գծեր Խրիմեան Հայրիկի կեանքից.
4. Հողագործին.
5. Վարագ.
6. Մկրտիչ վարդապետ Խրիմեան.
7. Կ. Պոլսի Ս. Պատրիարգի (Խրիմեանի) հրաժարումը.
8. 1873 թ. կուսակցութիւնները Կ. Պոլսի մէջ և ազգային մամուլը.
9. Նամակներ.
10. Նուէր Վասպուրականի Երգուոյն.
11. Կաթողիկոսական հարցի Ռոիթով

ԲԱՔՓԻԻ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ.

1. Հայ կինը և Հայ երիտասարդութիւնը .... 1 ռ. 50 կ.
2. Խէնթ և Ջալալէդդին, երկուսը մէկ գրքի մէջ ամփոփուած..... 2 „ 50 „
3. Դաւիթ-բէկ Հ. I. II. III. վերջաբանով.. 3 „ — „
4. Մինն այսպէս, միւսն այնպէս (պատկեր.). 1 „ — „
5. Կայծեր Հ. Ա. երկրորդ տպագրութեամբ . 2 „ — „
6. Կայծերի վերջը..... — „ 50 „
7. Վէպիկներ և պատկերներ Հ. Ա. ..... 2 „ — „
8. Վէպիկներ և պատկերներ Հ. Բ. ..... 2 „ — „
9. Արծիւ Վասպուրականի..... — „ 70 „

Ջուտով լոյս կը տեսնի „ՋԱՀԲՈՒՄԲԸ“ անտիպ և մեծ աշխատութիւնը։

Հրատ. Այրի Աննա Մելիք-Յակոբեան ԲԱՔՓԻ

ՀԵՏՋՀԵՏԻ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ՐԱՖՖԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԱՁԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Վէպիկներ և պատկերներ Հ. Գ.
2. Բանաստեղծութիւններ (տպուած և անտիպ) Հ. Ա.
3. ,, ,, ,, Հ. Բ.
4. Ճանապարհորդութիւններ, որոնց մի մասը տպուել են «Մշակի» և «Փորձի» մէջ, իսկ միւս մասը անտիպ է։
5. Ազգային համարօտ պատմութիւն՝ Հայկից մինչև Լևոն Զ.
6. Ընդհանուր աշխարհագրութիւն.
7. Նամակներ.
8. Սայբի Ա. Բ և Գ. մեծադիր հատոր (անտիպ աշխատ.)
9. Հրապարակախօսութիւններ.
10. Քննադատութիւններ։

ՑԱՆԿ

ԵՐԵՔՆԱՅԻՆ ԳՐՔԵՐՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱԶԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

		Ռ.	Կ.
1.	Փունջ I. հատոր (սպառուած) .	1 „	50 „
2.	Փունջ II. հատ. (սպառուած) .	1 „	50 „
3.	Խամսայի Մելիքութիւնները (սպառուած)	1 „	50 „
4.	Խաչագողի չիշատակարանը I և II մ. (սպ.)	1 „	20 „
5.	Խաչագողի չիշատակարանը III և IV մ.	1 „	50 „
6.	Ոսկի աբեղաղ (սպառուած) . .	1 „	— „
7.	Ղարաբաղի աստղագետը (սակաւաթիւ)	1 „	20 „
8.	Կայէնի կտակը (թարգմանութիւն) .	1 „	20 „
9.	Կայծեր I. հատ. (Բ. տպագրութիւն) .	2 „	— „
10.	Կայծեր II. հատոր. . . .	2 „	50 „
11.	Կայծերի վերջը (սպառուած) . .	— „	50 „
12.	Հայ կինը և Հայ երիտասարդութիւնը	1 „	50 „
13.	Դաւիթ-բէկ հ. Ա. Բ և Գ. վերջաբանով (երկրորդ տպագրութիւն) . . .	3 „	— „
14.	Սամուէլ (սակաւաթիւ) . . .	5 „	— „
15.	Խէնթ և Ֆալալէդդին (երկրորդ տպագր.)	2 „	50 „
16.	Միենն այսպէս, միւսը այնպէս (պատկեր.)	1 „	— „
17.	Վէպիկներ և պատկերներ հատոր Ա. .	2 „	— „
18.	Վէպիկներ և պատկերներ հատոր Բ. .	2 „	— „
19.	Արծիւ Վասպուրականի . .	— „	70 „

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐԱԼԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ